ԿՐՕՆ-ՊԱՏՄԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գրքերի գիները 1500-ամեակի և տպագրության 400-ամեակի առթիվ.

№ 2

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՍՐԱՅԷԼԻ

76

Թիֆլիզ
Տպարան «Էջմիածնի».
1913

Կազմեց
Դ-ր փիլ.
Մ. ԽՈՍՏԻԿԵԱՆ

ԿՐՕՆԸ-ՊԱՏՄԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գրքի գիւտը 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի առթիւ.

2
Ի-76

№ 2

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՍՐԱՅԷԼԻ

ԷՄ
2686
Ա 1/164339



Թիֆլիզ
Տպարան «Էջմիածնի».
1913

Կազմեց
Դ-ր Փիլ.
Մ. ԽՈՍՏԻԿԵԱՆ

17 X 12

1190

ՍՍՌՄԳԱ ԱՌ
1952 Թ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հին ազգերից երեքը ունեցել են ժամանակակից քաղաքակրթության վրայ անգին ազդեցություն։ Մեր ժամանակի Եւրոպան հին յոյներից սովորել է գեղարուեստ ու փիլիսոփայութիւն, հռոմէացիներից պետականութիւն և իրաւունք, իսկ հին հրէաներից տիեզերական միաստուածեան կրօնը։ Հարկաւ այս ազգերից իւրաքանչիւրը բազմաթիւ փոխազդեցութիւնների է ենթարկուել մինչև կարողացել է այդ քաղաքակրթական բարիքները հանդէս բերել. և այդ պատճառով ժամանակակից մարդը մեծ սիրով խորասուզուում է այս ազգերի պատմութեան մէջ, այնտեղ որոնելու մեր կրօնի, գեղարուեստի և փիլիսոփայութեան արմատները։

«Սրբազան պատմութիւն Իսրայէլի» խորագիրը կրող այս գիրքը՝ կազմուած Ս. գրքի բովանդակութեան պարզ վերարտադրութիւնից՝ ուզում է հայ ընթերցողին տալ ծանօթութիւն այն մասին, թէ ինչպիսի քաղաքական և քաղաքակրթական պայմաններում աստիճանաբար աճեց ու զարգացաւ Իսրայէլի տիեզերական կրօնը, որը կազմում է քրիստոնէութեան հիմքը։ Այս գրքի վերայ հեղինակը հինգ տարի անընդհատ կրօնագիտութեան դասեր է տուել ճեմարանի Գ. և Դ. դա-

տարաններում և այժմս հրապարակ հանելով սոյն աշխատութիւնը՝ յանձնում է կրօնասէրների առանձին ուշադրութեանը։

Շուտով լոյս կ՚տեսնի նոյն հեղինակի «Ի՞նչ է Աստուածաշունչ» խորագիրը կրող մի ուրիշ քննասիրական աշխատութիւն, որը պիտի լոյս սփռի հին կտակարանի իւրաքանչիւր գրքի ծագման, տեղի, ժամանակի, նրանց կրօնական դաղափարների, ազդեցութիւնների և արժէքի վրայ։ Այդ գործը կ՚ծառայի իբրև բանալի՝ ներկայ աշխատութիւնից լաւ օգտուելու համար։

Այս գործի մէջ հեղինակը հետևել է նաև գերմանական աղբիւրներին։

Դ-ր. Մ. Ղուսիկեան

Տփխիս
1913

Ա. ԳԼՈՒԽ

Պաղեստինի դիրքը եւ նրա նախնական ժողովուրդը.

Երկրի այն նեղ շերտը, որը միջերկրական ծովի արեւելեան ափի և ասորական անապատի միջև է ընկնում, կոչուում է Պաղեստին կամ Քանան։ Այս երկրից զէպի հիւսիս գտնուում է Ասորիք, որից բաժանուում է Լիբանանի և Անդրլիբանանի լեռնաշղթաներով։ Սրա հարաւային սահմանն են կազմում Սինայի և արաբական թերակղզիները։ Պաղեստինի տարածութիւնը 530 քառ. քիլոմետր է, որից $^1/_3$-ը Յորդանանի արեւելեան կողմն է գտնում։ Երկրի մակերեւոյթը հիւսիսից սկսելով 1000 մ. բարձրութիւնից իջնում է մինչև Մեռեալ ծովը, որը 394 մ. ովկիանոսի մակերեւոյթից ցած է։ Այս երկրի միջով հոսում է Յորդանան գետը, որը երեք տեղով իւր սկիզբն է առնում Անդրլիբանան լեռնաշղթայի հարաւային ծայրը կազմող Հերմոն սարից և հաւաքուում է նախ Մերոմ լճի

մէջ. ապանդանից դուրս գալով՝ շորս ժամ հոսելով դէպի հարաւ՝ թափուում է Գենեսարէտի լիճը. այսուհետև երրորդ անգամ սկիզբն առնելով՝ գնում թափուում է Մեռեալ ծովը, որի ջուրը խիստ աղի, կպրային և ծանր է, այնպէս որ չի կարող ձրկները մնուցանել։ Այս գետի երկու կողմում բարձրանում են սարահարթեր, որոնք վառ են ողողում։ Այս կողմից համեմատաբար արևելեան Գիլէատ կամ Գերէա գաւառը աւելի լաւ է. նա ծածկուած է անտառներով և շատ յարմար է երկրագործութեան և անասնապահութեան համար։ Յորդանանից դէպի արևմուտք գտնուած երկիրը բաժանուում է երեք մասի՝ Գալիլեա, Սամարեա և Յուդա։ Գալիլեան աւելի բարձր է. ունի աչքի ընկնող լեռներ, ինչպէս Թաբորը. յարմար է անասնապահութեան համար։ Գլխաւոր քաղաքներն էին հնում Կեսարեա և Տիբերիաս. սրա հարաւային սահմանի վրայ ընկնում է Եզրայէլի հովիտը, որի միջովն անցնում է Գիսոնի հեղեղատը և թափուում Աքիջերկրական ծովը։ Այս հովտի հարաւում բարձրանում է Կարմեղոս լեռը, որը այնտեղի ծովափնեայ երկու ժողովուրդների՝ փիւնիկեցիների և փղշտացիների սահմանն է կազմում։ Գալիլեայից դէպի հարաւ ընկնում է Սամարեան կամ Եփրեմի լեռնային երկիրը, որի գլխաւոր քաղաք-

ներն էին Սիքեմ և Սամարեա. սրան սահմանակից էր հարաւից Յուդան, որի գլխաւոր քաղաքներն էին Քեբրոն և Երուսաղէմ։ Այս վերջին երկու գաւառները համեմատաբար չոր են և պակաս բարեբեր։

Այս երկիրը եգիպտական արձանագրութիւններում անուանուում է Ռուտինա և բնակուած էր քանանացիներից, փիւնիկեցիներից, փղշտացիներից, արամէացիներից և Քեռացիներից, կամ Հիտիտներից, որոնք բոլորն էլ սեմական ցեղի արևմտեան ճիւղին էին պատկանում։ Իսրայէլացիների գալուց առաջ հիւսիսային մասերը ենթարկուում էին քեռացիներին, որոնք մի հզօր պետութիւն էին հիմնել Քադէշ մայրաքաղաքով Որոնդէսի հովտում, իսկ հարաւային մասը ենթարկուում էր եգիպտացիներին։ Արևելքից և հարաւից քանանացիք շփուում էին մի քանի անապատաբնակ և թափառական ժողովուրդների այն է՝ ժամաքացիների, ամոնացիների, եդոմացիների և ամաղէկացիների հետ։ Ահա այսպիսի երկրի տէր դարձան և այսպիսի ժողովուրդների հետ շփուեցին իսրայէլացիք իրենց պատմութեան նախնական շրջաններում։

Բ. ԳԼՈՒԽ

Ռաբայէլացիների ծագումը։

Եգիպտոսի պատմութիւնից յայտնի է, որ Աբրահամի և Սինայի անապատներում բնակուող թափառական հովիւ ցեղերը, որոնք ընդհանուր անունով Հիւքսոս են կոչուել, 1800 թուերին Ք. ա. յարձակուել են Եգիպտոսի վրայ և տիրել են մի առժամանակ այդ երկրին, մինչև որ Թէբէի հարստութեան փարաւոնները 1600 թուերին նորից կարողացան նրանց դուրս քշել իրենց երկրից։ Այս հիւքսոս ցեղերի մէջ յիշուում է Հիբրու անունը, որից յետագայում առաջացաւ եբրայական ազգը։ Այդ Հիբրու ցեղը իբրև բնակավայր Եգիպտոսում ստացել էր Գոզէն գաւառը։ Հիւքսոսների այդ երկրից հալածուելուց յետոյ էլ եբրայեցիներից Հռաքելի սերունդները դեռ բաւական երկար մնացին Գոզէնում և շատ էին նեղուում Եգիպտոսում նորից հզօրացած փարաւոններից. այն ինչ նոյն ցեղից Էսայի սերունդները թափառական և ազատ կեանք էին վարում Սինայի անապատում։ Եգիպտոսի փարաւոններից Ռամսէս II-ը Գոզէնի եբրայեցիներին շատ էր նեղում (Տ. Ել. Ա. Գլ.)։ Մինչև որ ծնուեց նրանց ազատարարը՝ Մովսէսը, որը Սին կամ Քորեբ լեռնից գնաց Եգիպ-

ասս և յորդորեց իւր եղբայրակիցներին յանուն իրենց Աստուած Եհովայի *) դուրս գալ եգիպտական ծառայութիւնից և գնալ անապատ, Սինա սարի ստորոտներում ազատօրէն պաշտելու Եհովային։ Մովսէսի քարոզութիւնը ճշնուածների սրտում արձագանգ գտաւ։ Մեծ նեղութիւններից յետոյ Մերենպթախ փարաւոնը 1270 թուերին ակամայից համաձայնուեց բաց թողնել այդ ժողովրդին։ Գարնանային եղանակ էր. երբ եբրայեցիք դուրս գալով Եգիպտոսից՝ հասան Կարմիր ծովի ափին. երբ ուզում էին անցնել, նկատեցին, որ եգիպտացիք հետապնդում են իրենց՝ նորից բռնելու և գերելու համար. բայց բարեբախտաբար այդ միջոցին ջրերը քաշուած են լինում և եբրայեցիք կարողանում են ծովի ցամաքած հունով անցնել, իսկ երբ եգիպտացիքն էլ կամենում են անցնել նոյն տեղով իսրայէլացիներին բռնելու համար՝ ծովի ջրերը ծածկում ու խեղդում են եգիպտացիների բանակը։ Եբրայեցի ժողովուրդը, որը կորստեան մօտ էր՝ այս

---

*) Թէպէտ ներկայումս եբրայագէտները ապացոյցներ են, որ իսրայելացիք իրենց Աստուծուն Եահվէ են անուանել և՝ այդպէս գրել, բայց որովհետև ս. գրքում ամենուրեք Եհովա ձևն է ընդունուած, այդ պատճառով ստիպուած եղանք պահել Եհովա անունը։

հրաշալի պատահարով ազատուեց, ծովի այս միւս ափին լիաբերան օրհնեց և փառաւորեց իւր տէր Աստուած Եհովային (Տ. ելից ժե. գլ.)։ Այս հրաշալի ազատութիւնից յետոյ Մովսէսը չէր կարող իրեն հետևող ցեղերին անմիջապէս Պաղեստին առաջնորդել, որովհետև այս երկիրը այդ միջոցին գտնում էր նոյն եգիպտացիների ձեռքին. այլ տարաւ նրանց Սինայի անապատ, ուր այդ ցեղերին ազգակից ուրիշ ցեղեր էլ կային և ուր եգիպտացիների ձեռքը չէր կարող հասնել։ Բացի դրանից նրա նպատակն էր նրանց առաջնորդել դէպի Սինա սարը։ Շատ նեղութիւնների յետոյ՝ Մովսէսը ժողովրդի համար հաց և ջուր ճարելով՝ ամալեկացիների հետ պատերազմելով (Տ. ելից ժզ. ժէ.) վերջապէս հասցնում է նրանց Սինա սարը, որը 2244 մ. բարձր է։ Այս վեհապանծ լեռան շուրջ, անապատի խորհրդաւոր լռութեան մէջ Մովսէսը եբրայեցի բազմաթիւ ցեղերին մի Աստծու անունով, մի կրօնի ոյժով միացրեց։ Եհովայի անունից յայտարարեց «Դուք պէտք է իմ ժողովուրդը լինէք, ես էլ կ'լինեմ ձեր Աստուած (Տ. գլ. խգ. 12)։ Երկար լուացումներից և հանդիսաւոր արարողութիւններից յետոյ այստեղ ուխտի դաշինք կնքուեց եբրայեցի կամ իսրայէլացի ցեղերի և Աստծու միջև, որի հիմնական պայմանը տասնաբանեայ պատուիրան-

ներն էին, որոնք Աստծոյ ժողովուրդ՝ Իսրայէլը պիտի պահէր (Տ. եվ. Ի.)։ Եհովա Աստծու անունով սրբագործուած զանազան ցեղերի միութիւնից առաջ եկաւ Իսրայէլական ազգը. այս է պատճառը, որ յետագայում Իսրայէլացիք հաւատում էին՝ թէ Եհովան է, որ ծնել և մեծացրել է իրենց ազգը և բազմաթիւ թշնամիներից ազատելով՝ բերել բնակեցրել է Պաղեստինում։ Իսրայէլացիք բաւական երկար Սինայի անապատում թափառելուց յետոյ՝ ճանապարհ ընկան Մովսէսի առաջնորդութեամբ դէպի Քանան։ Նրանք հասան Քանանացիներ երկրի հարաւային սահմանների վրայ գտնուող Քատէշ քաղաքը, որտեղից մարդիկ ուղարկեցին Քանան լրտեսելու։ Վերադարձին լրտեսները այնպիսի տեղեկութիւններ տուին քանանցիների քաջութեան և նրանց քաղաքների ամրութեան մասին, որ ժողովուրդը վհատուեց և առժամանակ յետաձգեց իւր արշաւանքը։ Միւս կողմից ժողովուրդը մեծանում էր, իսկ անապատը այլևս բաւարարութիւն չէր տալիս նրանց կարիքներին. այդ պատճառով ստիպուած էր շարունակ կռիւ մղել շրջակայ ցեղերի հետ՝ աւելի յարմար բնակավայրեր գրաւելու համար։ Կռուի և ինքնապաշտպանութեան այս կարիքն ստիպեց, որ Իսրայէլի ցեղերը աւելի սերտ կերպով միանան՝ թշնամիների վրայ

յաղթութիւն տանելու համար. իսկ այդ միութեան հիմքը կազմում էր ցեղերի դէպի Եհովան ունեցած հաւատքը։ Այս հաւատով զօրացած դարձեալ հարաւային կողմից մտնեցան Քանանին այդ երկիրը մտնելու, բայց որովհետև եղոմացիք թոյլ չտուին իրենց երկրովն անցնել, նրանք դիմեցին դէպի արևելք և հասան Առնոն գետը, որը արևելքից դէպի արևմուտք հոսելով թափւում է Մեռեալ ծովը՝ եղոմացիների հիւսիսային արևելեան իսկ ամորացիների երկրի հարաւային սահմանը կազմելով։ Այստեղ էլ ամորացիների թագաւոր Սեհոնն էր ուզում նրանց անցքը դէպի Քանանը արգելել. նրան օգնութիւն էր եկել Քաղանի Ովգ թագաւորը։ Բայց իսրայէլացիների բուռն յարձակման առաջ այս երկուսն էլ շտապաչար յաղթուեցին, որով Յորդանանի արևելեան կողմի երկրները ընկան իսրայէլական ցեղերի տիրապետութեան ներքոյ։ Այսպիսով Իսրայէլի ցեղերը ազատուած անապատի քաղցից և ծարաւից, վայրենի գազաններից և թունաւոր օձերից, թշնամիների յարձակումներից, անէծքներից և կախարդութիւններից (Տ. թուոց ԺԱ. Ի. ԻԱ. ԻԲ. ԻԳ. ԼԱ. գլ.) մտնում են Աւետեաց երկիրն։

Գ. ԳԼՈԽ

Իսրայէլացիների հաստատումը Պաղեստինում.

Իսրայէլի ցեղերը բազմանալով՝ այլ ևս չէին կարող ճնալ և ապրել անապատում, նրանց հարկաւոր էր մի բարեբեր և պտղաւէտ երկիր. այդպիսի երկիր էր Պաղեստին, որտեղ բնակուում էին գլխաւորապէս քանանացիները։ Սրանք մի մեծ պետութիւն չէին կազմում. այլ ամեն մի քաղաք առանձին իշխանութիւն էր իւր համար։ Այս հին ժողովուրդը այդ դարերում յոփացած, բարոյապէս փչացած՝ արագօրէն դէպի անկումն էր դիմում։ Եգիպտացիներն ու քետացիները, որոնք առաջ իրենց գերիշխանութիւնը տարածում էին այս երկրի վրայ, այլ ևս նոյն ոյժը չունէին և չէին կարող պաշտպանել այդ երկիրը իսրայէլացիների յարձակումներից, որոնց առաջնորդ Մովսէսը մեռել էր, իսկ նրա տեղն անցել էր պատերազմասէր Յեսու։ Առաջին անգամ Յուդա, Շմաւոն և Ղևի ցեղերը Յորդանան անցնելով յարձակուեցին քանանացիների վրայ. բայց Շմաւոն և Ղևի ցեղերը համարեա բնաջինջ եղան. Շմաւոնի ցեղից ազատուածները խառնուեցին և ձուլուեցին Յուդայի հետ, որը մեծ դժուարութեամբ հաստատուեց Մեռեալ ծովի մօտերքում. այն ինչ Ղևի ցեղի մնացորդ-

ները դարձան քահանաներ։ Այս առաջին յարձակմանը հեռանց երկրորդը. այս անգամ յարձակողների գլուխն անցաւ Յովսէփ գօրաւոր ցեղը. միայն Ռուբէն, Գադ և Մանասէի կէս ցեղը մնացին Յորդանանի արևելեան կողմը և այնտեղ հաստատուեցին. այն ինչ Յովսէփ, Բենեամին, Դան, Իսաքար, Ասեր, Զեբուղոն, Նեփթաղիմ և կէս Մանասէ ցեղերը հեռանցին Յիսուսին. մտան Քանանի ներսերը և դիմեցին դէպի հիւսիս։ Երկու գլխաւոր ճակատամարտներում քանանացիների բախտը որոշուեց։ Քանանի միջին մասի թագաւորները դաշնակցեցին միմեանց հետ իսրայէլացիների յառաջխաղացութիւնը արգելելու համար, բայց դաշնակիցները Գաբաւոնում շարաչար յաղթուեցին։ Այս մեծ յաղթութիւնը իսրայէլացի բանաստեղծները երգեցին, ուր նրանք շնորհակալութեան զգացմունքով լեցուած՝ փառաբանում էին Տիրոջ աւելով՝ որ նա իսրայէլացիներին յաղթութիւն պարգևելու համար՝ Յեսուի աղօթքի համաձայն՝ արևին կանգնեցրել է Գաբաւոնի դիմաց, իսկ լուսնին՝ Այեղոնի ձորում։ Երկրորդ ճակատամարտը տեղի ունեցաւ Մերոմ լճի ափերին, ուր որ յաղթուեցին հիւսիսի թագաւորները։ Թէպէտ այս ձևով քանանացիները յաղթուեցին, բայց բոլորովին չընկճուեցին և շոշնչացան։ Իսրայէլացիները ոչ միայն

չկարողացան իրանց սահմանները մինչև Միջերկրականի ափերը տարածել, ուր գտնուում էին փղշտացիները և փիւնիկացիները, այլ նրանք նոյն իսկ չկարողացան բուն Քանանում շատ տեղեր, մանաւանդ ամուր բերդերին և քաղաքներին տիրել, այդ բանը միայն շատ յետոյ յաջողուեց։ Այնուամենայնիւ ձեռք բերած յաջողութիւնը մեծ էր և իսրայէլացիք ձեռնարկեցին տիրապետած երկիրը իրենց մէջ բաժնել։ Մեռեալ ծովի հարաւ արևմտեան կողմը տրուեց Շիմաւոնի ցեղի ճնացորդին. սրան սահմանակից գտնուեց Յուդան, որին շատ մօտիկ բնակուեց Բենեամինը։ Այս երեք ցեղերը բռնեցին Քանանի հարաւային մասը։ Յորդանանից դէպի արևմուտք գտնուած երկրի միջին մասերը բռնեցին Դան, Եփրեմ, կէս Մանասէ և Իսաքար ցեղերը. սրանցից Եփրեմն ու կէս Մանասէն կազմեցին այսպէս կոչուած «Յովսէփի տունն»-ը, որը և իսրայէլացիների պատմութեան մէջ մեծ դեր խաղաց։ Իսաքարը՝ թէպէտ մեծ երկիր գրաւեց, բայց աննշան ճնաց։ Դանը քիչ յետոյ ստիպուեց գաղթել և հիւսիսում իր համար Յորդանանի ակունքներում նոր բնակավայր որոնել։ Քանանի հիւսիսային մասերը բռնեցին Ասեր, Զեբուղոն և Նեփթաղիմ։ Այս երեք ցեղերն էլ ազդեցութիւն չունեցան իսրայելի յետագայ պատմութեան զարգացման վրայ, ընդհակառակն հեթանոսութիւնը շուտով այս կող-

մերում գերիշխող հանդիսացաւ, այնպէս որ երկրի հիւսիսային մասը հեթանոսների շրջան՝ Գալիլեա՝ անունն ստացաւ։

Այսպէս իսրայէլի ցեղերը Քանանում առանձին առանձին, կողք կողքի բնակութիւն հաստատեցին։ Այդ ցեղերին միացնող մի առանձին քաղաքական կապ չկար, միայն Եհովայի պաշտամունք էր, որ մասամբ միացնում էր նրանց։ Եհովայի ներկայութեան իրրև նշանակ հաստատում էր «Ուխտի տապանակը», որը նրանք բերել էին Սինա կամ Քորեբ սարից և հաստատել էին Եփրեմի սահմաններում գտնուող Սիլո սրբարանում։ Քաղաքական կազմակերպութեան բացակայութեան պատճառով այս ցեղերից երբեմն մէկը երբեմն միւսը վտանգի մէջ էր ընկնում՝ թշնամիներից նեղուելով։ Իսաքարի ցեղը խիստ նեղուում էր այն քանանացի իշխաններից, որոնք իրենց անկախութիւնը պահել էին Եզրայէլի հովտում և որոնք Սիսարա թագաւորի առաջնորդութեամբ ձգտում էին իրենց իշխանութեանը ենթարկել իսրայէլացիներին։ Սրանցից շատերը ենթարկուել էին, շատերն էլ վնասուել, երբ դուրս եկաւ Իսաքարի ցեղից Դեբորա անունով մի մարգարէէի և իւր կրակոտ ճառերով ոգևորութիւն ներշնչեց ժողովրդին։ Նոյն Իսաքարի ցեղից Բարակը, մի

քաջ ոգեւորեց՝ ապատամբեցրեց իւր ցեղակից-
ներին, որոնք ժարդիկ ուղարկեցին միւս ցեղե-
րից էլ օգնութիւն խնդրելու։ Հարաւից Եփրեմ,
Մանասէ և Բենեամին, հիւսիսից Զեբուղոն և
Նեփթաղիմ ցեղերը օգնութեան հասան Միսա-
բան և նրա դաշնակիցները իրենց ոյժը կենդ-
դրոնացրել էին Թանախ և Մեկիդդո քաղաքնե-
րում՝ Կարմեղոսի արևելեան կողմում. Դեբորայի
և Բարակի առաջնորդութեամբ իսրայէլացիք
բուռն յարձակում գործեցին թշնամիների վրայ
և ցրուեցին նրանց։ Քեսոնի առուն, որը գար-
նան անձրևների պատճառով հեղեղել էր իւր
ափերը, արգելք էր հանդիսանում քանանացի-
ների փախուստին։ Միսարան իւր կառքից իջաւ
և փորձեց ոտով փախչել և թագնուել։ Յոգնած
և ծարաւած՝ նա մտնում է մի հովի վրան ջուր
խմելու. վրանի տիրուհին Յայէլը նրան կաթ է
տալիս, խմելուս ժուրճով խփում է նրա ճակատին և
սպանում։ Դեբորան այս առթիւ մի երգ երգեց,
որի մէջ նա փառաբանում է պատերազմող և
յաղթութիւն պարգևող հզօր Եհովա Աստծուն,
որը պատերազմի ձայն է տալիս հերոսի նման,
նետեր է արձակում ու սուրը ճօճում, իւր զին-
ուորներին՝ իսրայէլացի մարտիկներին՝ յաղթու-
թիւն պարգևելու համար։ Նա ծաղրում է Սի-
սարիային, նորա մօրը և թոռնանացի աղջիկնե-

Ա 1/16738

բին, որոնք յոյս են ունեցել, թէ թագաւորը իրենց համար առատ աւար և կողոպուտ պիտի բերի՝ թանգագին զգեստներ և զարդեր։ Նա իւր այդ երդում յանդիմանում Իսրայէլի այն ցեղերին, որոնք օգնութեան չեն եկել (Դատ. Դ. Ե. գլ.)։

Սրանից քիչ յետոյ Դան ցեղը ծովափնեայ փղշտացիներից նեղուած՝ քաշուում է աւելի դէպի հիւսիս և բռնում Հերմոն սարի ստորոտները, Յորդանանի ակունքները, ուր ծաղկում էր Միդոնացւոց Լայիս քաղաքը։ Այս ցեղի 600 կարիշ երիտասարդներ զիշերով յարձակուում են անհոգ կերպով քնած քաղաքի վրայ, կոտորում են նրանց և ապա նրանց տեղը բռնում, ուր և Եհովայի համար մի տաճար են շինում։ Այս նոր սրբավայրի քահանան դարձաւ Մովսէսի թոռը Յոնաթանը (Դատ. ԺԸ.)։ Արևելեան կողմում Ռուբէն ցեղը առանձնացած մնալով՝ չկարողացաւ մովաբացիների յարձակմանը դիմանալ։ Նորա երկիրը երկար ժամանակ կոուախնձոր դարձաւ Մովաբի և Իսրայէլի միւս ցեղերի համար։

Հազիւ էր երկիրը մի քիչ խաղաղել, երբ իսրայէլացիք նորից սկսեցին նեղուել անապատում թափառող անհանգիստ և աւազակաբարոյ ցեղերից։ Նոքա գալիս էին ուղտերի վրայ

հեծած իրենց վրաններբը խփում էին ամառնե-
բը բարձր լեռների սիզաւէտ լանջերին և կո-
զոպառում դաշտի երկրագործ շինական ժողով-
բդին։ Սրանից ամենից աներեսն էր Մադիան
ցեղը, որի երկու առաջնորդներբը միանգամ ի-
րենց ձեռքն ընկած պատուաւոր իսրայելացիներ-
բին թաբոր սարի վրայ զոհեցին իրենց աստ-
ծուն։ Մանասէի ցեղից Յերոբաաղ կամ Գէդէոն
անունով մի մարդ հաւաքեց իւր ցեղից 300
կարիշ կռուողների, ընկաւ նրանց յետևից, անց-
աւ Յորդանան և գիշերով յարձակուեց նրանց
վրայ, որոնք իրենց աւարն էին բաժանում.
բռնում է նրանց առաջնորդներին և սուն բե-
բելով կոտորում։ Մի քանի տարի յետոյ,
երբ դարձեալ վերադարձան, Գէդէոնը կբբ-
կին ջարդեց նրանց և փախցրեց, այնպէս որ
նրանք էլ չհամարձակուեցին երևալ այդ կողմե-
բում։ (Դատ. Զ. և է.)։

Գէդէոնի հռչակը այս յաղթութիւններով
շատ տարածուեց. առանց այն էլ նրա տոհմբ
շատ մեծ էր, բազմամարդ և յարգուած. այն-
պէս որ՝ երբ նա մեռաւ, նորա որդին Աբիմելէքբ
լուրջ կերպով ձեռնարկեց թագաւորութիւն հիմնե-
լու։ Իսրայէլացիներից անկախ մնացած մի քանի
քաղաքներ, դրանց մէջբ Սիւքեմբ, խլեց քանանա-
ցիներից։ Մի գունդ կազմեց, Օֆրայում սպա-

նել տուեց իւր բոլոր եղբայրներին, որպէսզի սրանք իւր թագաւորութեան արգելք չհանդիսանան (Տ. գաս. Թ.) և ապա Սիւքմում իրեն թագաւոր օծել տուեց. բայց երբ նկատեց, որ սիւքեմցիք իւր թագաւորութեան հաւան չեն, յարձակուեց քաղաքի վրայ, առաւ և կործանեց, նոյնպէս առաւ Սալմոն բերդը և հրդեհեց նրա տաճարը, ուր հազարի մօտ մարդ այրուեց։ Յետոյ գրաւեց Թեբաս քաղաքը, և երբ ուզում էր միջնաբերդին կրակ տալ, մի կին պարապի վերայից քարով խփեց նրա գլխին և մահացու վիրաւորեց։ Նա այն ժամանակ ասաց իւր զինակրին «Քաշիր սուրդ և սպանիր, որպէսզի չլինի ասեն, թէ Աբեմելիքին մի կին սպանեց»։ Թագաւորի մահուամբ կործանուեց նաև նրա թագաւորութիւնը։ Յետագայում իսրայէլացիք վերաշինեցին Սիւքեմը և ծաղկեցրին։

Երբ պատերազմի և խռովութեան տարիներն անցան և երբ երկիրը մի քիչ հանդարտուեց, իսրայէլացիներն էլ իրենց կեանքի ձևը փոխեցին։ Հովուական թափառական կեանքից նրանք անցան նստակաց կեանքի և նուիրուեցին յատկապէս երկրագործութեան։ Կամաց կամաց նրանք ենթարկուեցին քանանացիների աւելի բարձր քաղաքակրթութեան, որոնց բոլորին նրանք բնաջինջ չէին արել։ Նրանցից սովրեցին

զանազան արհեստներ, շինեցին տներ և տնկեցին այգիներ, սկսեցին բարեկամութիւն անել և խառնուել այդ ժողովրդի հետ։ Նրանցից սովրեցին նաև գրելու արուեստը, որը նրանք վերցրել էին բաբելացիներից, որոնք դարեր առաջ իրենց ազդեցութիւնը տարածել էին նաև Փաղեստինի վրայ։ Իսրայէլացիք գրելու արուեստին ծանօթանալով՝ սկսեցին գրի առնել իրենց մէջ առաջ եկած բանաւոր երգերն ու աւանդութիւնները, որոնք վերաբերում էին անցած ժամանակներին։

Գ. ԳԼՈՒԽ.

Թագաւորութեան հաստատումը Իսրայէլի մէջ.

Հրէական լեռնաշղթայից դէպի արևմուտք ծովափին բնակութիւն էր հաստատել մի ժողովուրդ, որը փղշտացի էր կոչուում։ Վաղ ժամանակներից նա եկել էր Փոքր-Ասիայից և բնակուելով այստեղ՝ խառնուել էր տեղական սեմական ժողովուրդների հետ՝ իւրացնելով նրանց լեզուն և կրօնը։ Ժամանակի ընթացքում սրանք դարձան վաճառական մի ժողովուրդ և բնակուեցին քաղաքներում։ Նրանց վաճառականութիւնը տեղի էր ունենում ոչ թէ ծովի, այլ ցամաքի վրայ, որովհետև Եգիպտոսի և Փիւնիկէի,

ապրանքատար կարաւանները նրանց երկրի միջով էին անցնում։ Նրանց գլխաւոր քաղաքներն էին Գազա, Գէթ, Ասոտա, Ասկաղոն և Ակրոն։ Հինգ իշխաններ նստում էին այս հինգ քաղաքներում և որոշ դաշնակցութիւններով կապուած էին միմեանց հետ։

Իսրայէլացիք Պաղեստինում հաստատուելուց և քանանացիների վտանգից ազատուելուց յետոյ՝ ընդհարուեցին վերջապէս նաև այս ժողովրդի հետ, որը շատ շուտով հանդիսացաւ իրեն ամենազօրեղ թշնամի։ Այս երկու ժողովուրդների սկզբնական ընդհարումների արձագանգը մենք գտնում ենք Իսրայէլի ժողովրդական հերոս Սամսոնի առասպելախառն գեղեցիկ պատմութիւններում (Տ. Դատ. ԺԶ.)։

Սկզբնական լուրջ կռիւները տեղի ունեցան Սարոնի հովտում, ուր Աֆէքի մօտ իսրայէլացիք յաղթուեցին։ Այս պարտութիւնը նրանք վերագրեցին այն հանգամանքին, որ Եհովան կամ «տապանակ ուխտին» իրենց բանակում չէր։ Սելոմում նստող Հեղի քահանայապետի երկու որդիները Հոփնի և Փինէհաս «Ուխտի տապանակը» բանակ բերին. բայց այս անգամն էլ իսրայէլացիք չարաչար յաղթուեցին, քահանայապետի որդիները սպանուեցին. մինչև իսկ «Ուխտի տապանակն» էլ փղշտացիների ձեռքն ըն-

կաւ։ Բայց դրան առաջ, աթոռի վրայ նստած Հեղի քահանան այդ դժբախտութիւնների լուրն առնելով աթոռից վար ընկաւ վիզը ջարդեց, որով և մեռաւ։ (Տ. Ա. ԹԳ. դ.)։

Այս պատերազմի հետևանքը շատ ցաւալի էր. Յոսէփը ընկճուեց. փղշտացիք տիրեցին Եզրայէլի հովտին և Եփրեմի լեռնաշխարհին։ Նոքա կոծանեցին Սելով սրբավայրը։ Այնտեղ հաստատուած քահանայական ցեղը փախաւ և հաստատուեց Նոբում, Բենեամինի երկրում. բայց փղշտացիք մինչև անգամ Բենեամինի երկիրն էլ մտան Գիբէայում իրենցից մէկին կառավարիչ նշանակեցին։

Այս խայտառակութիւնը բոլորքեց իսրայէլացիների կրօնական զգացմունքը։ Այս ժողովրդի հայեցողական-կրօնական կեանքով սպրող ուխտաւորներն անցան երկրէ երկիր, ցեղից ցեղ և կրօնական երաժշտութեամբ ու պարերով ժողովրդի լքուած սրտերին հաւատի ոյժը ներշնչեցին. և իսրայէլացիք բռնուեցին մոլեռանդ ոգեւորութեամբ։ Ամեն զէնք կրելու ընդունակ մարդ վեր կացաւ փղշտացիների դէմ նրանցից վրէժ առնելու, Եհովայի և ժողովրդի պատուի և փառքի համար կռուելու։ Հին ժամանակներում կրօնասիրութիւնը միացած էր հայրենասիրութեան և ազգասիրութեան հետ։ Այդ ժամանակ-

ներում ապրում էր մի ծերունի և հայրենասէր մարգարէ. դա Էլքանայի որդի Սամուէլն էր, որին իւր ժողովրդի դժբախտութիւնը հալ ու մաշ էր անում։ Նա նկատելով որ շրջակայ ժողովուրդները քաղաքական միութեամբ, մի թագաւորի ձեռքի տակ զօրացել են, զիջելով իւր ժողովրդի թախանձանքին, համաձայնուեց Բենեամինի ցեղից Կիսի որդի յաղթանդամ և արիասիրտ Սաւուղին թագաւոր օծել (Տ. Ա. թագ. Ա. Բ. Ը. և ժ.)։ Իսկապէս Եհովան էր հաստատում իսրայէլացիների իսկական թագաւորը և քահանայապետը, բայց բազմաթիւ ցեղերի բաժանուած և բազմաթիւ վտանգների ենթարկուած այս ժողովուրդը կարիք զգաց պետական և եկեղեցական կազմակերպութեան։ Նորընտիր թագաւորը Եհովայի ներկայացուցիչը պիտի համարուէր երկրի վրայ։ Նորա գլխաւոր պաշտօնն էր բոլոր ցեղերին միացնելով պաշտպանել նրանց արտաքին թշնամիներից. նա ուրեմն պատերազմի ժամանակ ընդհանուր հրամանատարի դեր ունէր կատարելու, իսկ խաղաղութեան ժամանակ նա զօրութիւն ունեցող կարքերի պահապանն էր։ Նոր օրէնք չէր կարող հրատարակել, բայց գատում էր օրինապանցներին։ Իբրև միջնորդ ժողովրդի և Աստծու միջև

նա գործ էր դնում նաև որոշ քահանայապետա-
կան իրաւունքներ։

Առիթը շուտ ներկայացաւ, ուր Սաւուղը
ցոյց տուեց, թէ ինքը արժանի էր այդ կոչման։
Գիլէատի Եաբին քաղաքը պաշարուած էր
ամոնացիներից։ Պաշարուածները դեսպաններ
ուղարկեցին Իսրայէլի զանազան կողմերը օգնու-
թիւն խնդրելու. ոչ ոք կարծես տեղից չէր
ուզում շարժուել՝ օգնելու դժբախտ քաղաքին,
բայց երբ Սաւուղը, որը մի անգամ մի զոյգ
եզ առաջ ձգած, դաշտից տուն էր դառնում,
այդ լուրն առաւ, սրբազան ոգևորութեամբ բը-
ռընկուեց, իւր եզները կտոր կտոր արաւ և
այդ արիւնաթաթախ կտորներն Իսրայէլի ա-
մենն կողմն ուղարկեց ասելով՝ բոլորի տա-
ւարն այսպէս կտոր կտոր կանեմ, եթէ
ինձ հետ չգան Եաբին քաղաքն ազատելու։
Սարսափած ժողովուրդը լսեց նրան և մի առա-
ւօտ վաղ հաւաքուած կռուողների հետ ընկաւ
Ամոնացիների վրայ և հալածեց նրանց։ Այս
յաղթութիւնից յետոյ ժողովուրդը Սաւուղին
տարաւ Գաղգաղա սրբավայր և մի ժողովում
կրկին անգամ ընտրեց նրան թագաւոր։ Այսպի-
սով կարիքն առաջ բերեց Իսրայէլի թագաւորու-
թիւնը։

Սակայն նոր թագաւորի գլխաւոր գործը

պիտի լինէր իսրայէլացիներին ազատել փղշտացիների ձեռքից. և իրաւ շատ չանցած նորընտիր թագաւորի որդին Յոնաթանը սպանեց Գիբէայում նստող փղշտացոց իշխանին։ Փղշտացիք հաւաքուեցին և յարձակուեցին Սաւուղի բնակաւայրի վրայ, և երբ նրանք աւար վերցնելով էին զբաղուած, Յոնաթան իւր զինակրի հետ ընկաւ Միխմաս կրճի պահակախմբի վրայ և կոտորեց բոլորին։ Այս հերոսութիւնը սարսափ ներշնչեց թշնամիների սրտում, որից օգտուելով Սաւուղը յարձակուեց նրանց բանակի վրայ և հալածեց բոլորին։ Սաւուղի պատուէրի համաձայն ոչ ոք իրաւունք չունէր մինչև արևի մայր մտնելը մի բան ուտել կամ աւար վերցնել։ Արև մտնելուց յետոյ՝ քաղցած և յոգնած իսրայէլացիք կերան, խմեցին և աւար վերցրին, որովհետև շատերը քաղցածութիւնից կենդանիներին առանց զոհելու էին ուտում, այդ պատճառով Սաւուղը մի քարէ սեղան շինեց և հրամայեց, որ այդ կենդանիները այդ սեղանի վրայ առաջուց զոհուին։ Երեկոյեան դէմ Սաւուղը փորձեց փախչող փղշտացիների յետևից ընկնել, բայց այդ բանը նրան չյաջողուեց. Նոբի քահանան՝ Եհովային հարցնելուց յետոյ՝ այդ անյաջողութեան պատճառը բանակի մէջ մէկի ձեռքով կատարուած մեղքը համարեց. և իրաւ,

երևաց որ Յովնաթանը մեղանչել էր, որովհետև նա արևի մուտքից առաջ Սաուղի պատուէրը չլսելով անտառում մեղր էր կերել։ Զայրացած թագաւորը ուզում էր իւր որդուն եհովային զոհել, բայց ժողովրդի խնդրին դիմելով թողեց իւր մտադրութիւնը, (Տ. Ա. ԹԳ. ԺԳ. ԺԴ.)։

Սաուղի հոչակն աւելի ևս տարածուեց, երբ սա իւր խմբով Սինա անապատում բնակող ամաղեկացիների վրայ յարձակուեց, որոնք իսրայէլի անպաշտպան դրութիւնից օգտուելով աւազակային յարձակումներով կողոպտում էին երկիրը։ Սաուղը յաղթեց նրանց, բռնեց նրանց Ակակ թագաւորին և յաղթութիւն տօնող ժողովրդի առաջ Գաղգաղայում զոհեց եհովային (Տ. Ա. ԹԳ. ԺԵ.)։

Յայտնի է, որ Սաուղը Բենեամինի ցեղից էր և նորա բանակի մեծ մասը այդ ցեղի կրուողներից էր կազմած. բայց որովհետև այս ցեղը սահմանակից էր Յուդային, այդ պատճառով բանակում Յուդայից կռուողները փոքրաթիւ չէին։ Այս վերջիններին մէջ իւր քաջութեամբ և մանաւանդ ջութակահարութեամբ աչքի ընկաւ Բեթղէհեմցի Դաւիթը։ Նա դարձաւ նախ Սաուղի զինակիրը և ապա մտերիմ բարեկամ, այնպէս որ թագաւորը նոյնիսկ իւր աղջկան նրան կնութեան տուաւ։ Բայց երբ Դաւիթը մեծ ժո-

զոմբզականութիւն էլ ձեռք բերեց, այդ բանը թագաւորի սրտում առաջ բերեց կասկած և նախանձ։ Յոնաթանը, որը սերտ սիրով կապուած էր Դաւթի հետ, խորհուրդ տուեց փախչել գաղտնի և այդպիսով ազատուել թագաւորի ատելութիւնից. Նոբի քահանաները զէնք և ուտեստ տալով այդ փախուստին նպաստեցին։ Դաւիթը գնաց Յուդայի հարաւային կողմն ընկնող անապատ, իւր շուրջը հաւաքեց ուրիշ փախստականների, որոնց մէջ կային փղշտացի և քեռացի տարրեր։ Սրանց միացան Յուդայի ցեղից Դաւթի ազգականներից շատերը. սրանց բոլորի վրայ Դաւիթը Յովաբ անունով մէկին զօրավար կարգեց։ Այս փախստականների հետ էր նաև Նոբի Աբիաթար քահանան, որը փախել և ազատուել էր այն կոտորածից, որը Սաւուղը կատարել էր Նոբում՝ կասկածելով թէ՝ այդ տեղի քահանաները Դաւթին համամիտ են։ Երբ Դաւիթը զգաց, որ իւր զօրութեամբ չի կարող Սաւուղի հալածանքի առաջն առնել և որ կարող է նրա ձեռքն ընկնել, գնաց Գէթի տէր փղշտացի թագաւոր Աքիսին ապաւինեց, որը Դաւթին և իւր խմբին իրրև բնակութեան տեղ յատկացրեց Սիկելակ քաղաքը։ Այստեղից Դաւիթը յարձակումներ գործեց անապատաբնակ թափառական ցեղերի վրայ։ (Տ. Ա. ԹԳ. Ի—ԻԲ և ԻԷ)։

Փղշտացիները նկատելով որ Իսրայէլում մեծանում է գժգոհութիւնը Սաւուղի դէմ, նորից իրենց ոյժերը հաւաքեցին Իսրայէլի դէմ։ Նրանք պաշարեցին Սաւուղի բանակը Եզրայէլի հովտում՝ Գեղբուա սարի վրայ, ուր և տեղի ունեցաւ Սաւուղի վերջին ազէտալի ճակատամարտը։ Այդ տեղը, այս ճակատամարտում տեսաւ իւր բանակի պարտութիւնը, իր երեք որդիների թշնամիներից ընկնելը և յուսահատութիւնից ինքն էլ ընկաւ իւր սրի վրայ և ինքնասպան եղաւ։ Թշնամիները նրա գլուխը կտրեցին և մարմինը կախեցին Բեթսան քաղաքի պարսպից, որտեղից Եաբին քաղաքի բնակիչները գիշերով գողացան և անարգանքից ազատելով նրա մարմինը՝ այրեցին, և այդպիսով յայտնեցին իրենց շնորհակալութիւնը իրենց ազատարարին (Տ. Ա. թգ. իթ և լԱ)։ Դաւիթը այս պարտութեան և կոտորածի լուրն առնելով՝ մի ողբ յօրինեց և ողբաց Իսրայէլացիների առաջին թագաւորի և յատկապէս նրա որդի Յոնաթանի անփառունակ մահը (Տ. Բ. թգ. գլ. Ա.)։

Ե. ԳԼՈՒԽ

Իսրայէլի թագաւորութեան յաւագոյն շրջանը
1025—960

Գեղբուա սարի պարտութիւնից յետոյ Իսրայէլի թագաւորութիւնը կործանման վտանգին ենթարկուեց, որովհետև փղշտացիք ամբողջ երկիրը մինչև Յորդանան տիրեցին. բայց Սաւուղի զօրավարը Աբնեռը իւր շուրջը հաւաքեց մնացած քաջերին և Սաւուղի որդուն Իշբահաղին Յորդանանի արևելեան կողմն ընկած Մանահայիմ քաղաքը տանելով թագաւոր հրատարակեց նրան (Տ. II. ԺԳ. Բ. գլ.)։ Ապա կռիւ մղելով փղշտացիների դէմ տիրեց Եփրեմի և Բենեամինի երկիրներին և Եզրայէլի հովտին։ Դաւիթն էլ բախտի այս փոփոխութիւնից օգտուելով փղշտացիների հաճութեամբ եկաւ և տիրեց Յուդային։ 600 մարդով մտաւ Քեբրոն և Յուդայի ժերերից թագաւոր ընտրուեց։ Սկզբում Աբնեռը աշխատում էր արգելել Դաւթի թագաւորութիւնը, բայց երբ իւր տիրոջ Իշբահաղի կամ Իշբոշէթի հետ թշնամացաւ, գնաց Քեբրոն Դաւթի բանակին միանալու, բայց նրա զօրավար Յովաբը, կասկածելով որ Աբնեռը զօրավարու-

թիւնը պիտի խլի իւր ձեռքից, զաւակնութեամբ սպանեց նրան Քեբրոնի դռանը։

Շատ չանցած Բենեամինի ցեղից երկու իշխաններ, ձանձրացած Իշբահատի թուլատրութիւնից, գողտուկ մտնում են նրա վրանը և սպանում են նրան քնած ժամանակ՝ յոյս ունենալով թէ Դաւիթը իրենց այդ գործի համար վարձահատոյց կլինի։ Իսրայէլի ծերերը տեսնելով իրենց անգլուխ՝ գնում են Քեբրոն և Դաւթին թագաւոր են ընտրում ամբողջ Իսրայէլի վրայ (Տ. II. ԹԳ. Գ. Դ. զլ.)։

Դաւիթը ամբողջ Իսրայէլի վրայ թագաւոր դառնալով՝ գրաւում է Բենեամինի սահմաններում ընկած, բայց Յեբուսացիների ձեռքին մնացած Երուսաղէմ քաղաքը, որը և դարձնում է իւր մայրաքաղաք. այստեղ է փոխադրում նաև զերուիթինից վերադարձած «Ուխտի տապանակը» (Տ. II ԹԳ. Ե. և Զ.)։

Այնուհետև նա սկսում է Սաւուղի կիսատ թողած գործը՝ զլուխ բերել՝ այն է՝ Իսրայէլացիներին ազատել փղշտացիների վտանգից։ Արդէն իրենք փղշտացիք լսելով՝ որ Դաւիթը, իրենց ձեռքի տակ գտնուող իշխանը, ամբողջ Իսրայէլի վրայ թագաւոր է օծուել, եկան նրա վրայ, նորից իրենց գերիշխանութեան ենթարկելու (Տ. II. Ե. 17)։ Բայց Դաւիթը մի քանի

պատերազմներում վերջնականապէս յաղթեց ու ու հալածեց նրանց իսրայէլի սահմաններից. (Բ. թգ. Ը)։ Այդ օրուանից ի վեր այս երկու ժողովուրդների յարաբերութիւնը դարձաւ բարեկամական։ Փղշտացիները սահմանափակուեցին իրենց ծովափնեայ երկրով և վաճառականական յարաբերութեան մէջ մտան իսրայէլացիների հետ։ Նոյնպիսի յարաբերութեան մէջ էին իսրայէլացիք փիւնիկեցիների հետ։

Արևելքից և հարաւից էլ Դաւիթը ընդարձակում է իւր պետութեան սահմանները։ Ամենից առաջ Մովաբացիներին է յաղթում և նրանց երկրին տիրում. ապա երբ լսում է, որ Ամոնի թագաւոր Նախասը մեռել է, դեսպաններ է ուղարկում նրա որդի Հանանի մօտ իւր ցաւակցութիւնը յայտնելու. բայց Հանանը կարծելով, որ այդ դեսպանները լրտեսներ կլինեն, խուզել է տալիս նրանց միրուքները, և հանդերձներն էլ ճղռտելով յետ է ուղարկում. յետոյ զգալով որ Դաւիթը չի դանդաղի այդ անպատուութեան վրէժը հանելու, դաշն է կապում դանդան արամէական ցեղերի և Սօբայի թագաւորի հետ՝ Դաւթին դիմադրելու համար. բայց Դաւթի Յովաբ զօրավարը նրանց բոլորին առանձին առանձին և կամ միացած յաղթեց և երկիրները նուաճեց։ Այսպէս Դաւթի պետու-

թեանը ենթարկուեցին. ամոնացիք, եդոմացիք և արամեացիք կամ Դամասկոսը (Տ. Բ. ԹԳ. Ը—Ժ.)։

Այս յաղթութիւններից յետոյ Դաւիթն արտաքին թշնամիներից այլ ևս վախ չունէր. դորա փոխարէն նորա բազմանգամ ընտանիքում առաջ եկան ներքին երկպառակութիւններ, որոնք առաջացան իւր ընտանիքում բազմաթիւ կանանց և հարճերի պատճառով։ Դաւթի անդրանիկ որդին՝ Ամոնը անպատուել էր իւր խորթ քրոջը. այս անպատուութիւնը Դաւիթը թողեց անպատիժ. բայց այդ աղջկայ եղբայր Աբիսողոմը՝ կամենալով վրէժ հանել ապանել տուեց Ամոնին։ Թագաւորը զայրացաւ Աբիսողոմի վրայ և դուրս քշեց իւր պետութեան սահմաններից։ Երեք տարի յետոյ Յովաբի միջնորդութեամբ իրաւունք ստացաւ վերադառնալ, պայմանով՝ որ իւր տանը փակուած մնայ։ Փիչ յետոյ Դաւիթը կատարելապէս ներեց նրան և իւր թագաւորութեան ժառանգ կարգեց։ Բայց Դաւթի այս ապերախտ որդին օգտուելով իւր ազատութիւնից՝ շատերին ապստամբեցրեց իւր հօր դէմ։ Բենեամինը միացաւ իսկոյն այս ապստամբութեանը, որովհետև նա չէր մոռացել, թէ ինչպէս Դաւիթը խլել էր թագաւորութիւնը իւր ցեղից։

Թագաւորի համար այս շարժումը իւր դէմ շատ անսպասելի էր, և նա շփոթուած խոյս

տուեց Երուսաղէմից։ Իրեն հաւատարիմ մնացած մի փոքրիկ գնդով անցաւ Յորդանան և իւր զօրքերը հաւաքեց Գիլէադում, որտեղի բնակիչներից նա լաւ ընդունելութիւն գտաւ։ Մահանայիմում կարգի դրեց Դաւիթը իրեն հաւատարիմ մնացած բանակը, որպէսզի դիմադրել կարողանայ Աբիսողոմի յարձակմանը։ Ճակատամարտը տեղի է ունենում Եփրոնի անտառում, ուր Յովաբի ձեռքով Աբիսողոմը սպանուեց։ Դաւիթը երկար ողբաց իւր գեղեցիկ որդու եղերական մահը (Բ. ԹԳ. ԺԷ—ԺԸ)։

Սկզբում ապստամբ ցեղերը զղջացին և խնդրում էին Դաւթին վերադառնալ և մեծահոգութեամբ ներելով նորից թագաւորել իրենց վրայ։ Բայց վերադարձին Յուդայի և միւս ցեղերի մէջ մի տարաձայնութիւն պատահեց, իսկ Դաւիթը Յուդայի կողմը բռնեց։ Այն ժամանակ Բենեամինի ցեղից Սեբա անունով մի մարդ պատերազմական փող հնչեցնել տուեց և աղաղակեց «Ով իսրայէլացիք, ինչ գործ ունենք մենք Յեսէի որդի Դաւթի հետ, գնանք ամենքս մեր ճանապարհով». և իսրայէլացիք լսեցին նրան, միայն Յուդան մնաց Դաւթին հաւատարիմ։ Յովաբ զօրավարը առանց ժամանակ տալու՝ ընկաւ ապստամբների երկրի վրայ և բոլորին էլ նուաճեց։ Նա պաշարեց ի վերջոյ Աբէլ

քաղաքը, ուր ամրացել էր Սեբան. բայց քաղաքն առնելու պէտք չկար, որովհետև այդ քաղաքից մի կին կտրելով Սեբայի գլուխը՝ ձգեց Յոփաբի բանակը։ Այդպիսով ապստամբութիւնն ընկճուած էր. բայց այս ապստամբութիւնն ապացուցեց, որ խոր ատելութիւն կար Յուդայի և մնացած ցեղերի մէջ, որ բոլորը միասեղ մի թագաւորութեան մէջ երկար ժամանակ մնալ չեն կարող (Բ թ. Ի.)։

Դաւթի նշանակութիւնը Իսրայէլի պատմութեան համար այնուամենայնիւ շատ մեծ էր։ Իսրայէլի թագաւորութիւնը ոչ նրանից առաջ և ոչ էլ նրանից յետոյ չկարողացաւ այն ծաւալն ու հզօրութիւնը ձեռք բերել։ Դաւթի թագաւորութեան սահմաններն էին՝ արևմուտքից փղշտացիների և փիւնիկեցիների երկրները, արևելքից Եփրատ գետը և ասորական անապատը, հիւսիսից Արամէա, հարաւից Կարմիր ծովն ու Եգիպտոս։ Այդ թագաւորութեան փառքը մնաց ժողովրդի յիշողութեան մէջ։ Նրա գործն էր Երուսաղէմը, որ նա շինեց և զարդարեց և դարձրեց Իսրայէլի կրօնական և քաղաքական ամենանշանաւոր կենդրոն։ Իբրև անձնաւորութիւն քաջ էր նա և ընդունակ։ Իւր ժամանակին ապաւորութիւն է թողել նորա խոր հաւատն ու բարեպաշտութիւնը և նորա զղջալու կամ ապաշխարելու

ընդունակութիւնը։ Նորա զգացումն սիրտը, որով նա կրօնական և աշխարհիկ բանաստեղծութիւններ էր յօրինում։ Այս առաքինութիւնները դարձրել են նրան տիպար թագաւոր և նրա անունը անմահացրել են, չնայած, որ նա ունէր և խոշոր թերութիւններ. օրինակ՝ նա խիստ էր և կրքոտ, խորամանկ և փառասէր։ Այնուամենայնիւ իբրև պետական մարդ նա մեծ հեռատեսութիւն ունէր, որով կարողացաւ իւր գահի շուրջը հաւաքել իւր ժամանակի ընդունակ մարդկանց։ Նա Սաուղի պէս հասարակ կեանք չէր վարում, այլ ապրում էր Երուսաղեմում շինած իւր շքեղ պալատում, որը գիշեր ցերեկ պահպանուում էր վարձկան զինուորների մի գնդով։ Անձամբ քիչ անգամ էր պատերազմ գնում, այլ ուղարկում էր իւր զօրավարներին։ Իսրայէլի ամեն կողմից գալիս էր ժողովուրդը դէպի Երուսաղէմ իւր տուրքը տալու և իւր վէճերը թագաւորի դատաստանին յանձնելու։

Թագաւորութեան վերջին տարիներին Դաւիթը հոգւով և մարմնով մաշուած էր։ Իսկական գահաժառանգն էր իւր որդիներից աւագը՝ Ադոնեան. Յոաբ զօրավարը և Աբիաթար քահանան նորա թեկնածութիւնն էին պաշտպանում, բայց դեռ ևս Դաւթի կենդանութեան ժամանակ Նաթան Մարգարէն, Սատուկ քահանան և պահա-

կախումի առաջնորդը կարողացան սպանել տալ Ադոնային և Յովաբին, իսկ միւս որդուն՝ Սողոմոնին թագաւոր հռչակել։

Սողոմոնը իւր հօր պէս պատերազմի մարդ և հեռատես քաղաքագէտ չէր։ Նա ոչ մի բանի չձեռնարկեց, երբ տեսաւ, թէ Ասորիքում իրեն հարկատու արամէացիք անկախ գառնալով հիմնում են Դամասկոսի թագաւորութիւնը, որը յետոյ Իսրայէլի հզօրագոյն թշնամին դարձաւ։ Յետոյ նա թոյլ տուաւ, որ եդոմացիք ապստամբեն, գրանից օգտուելով Մովաբ և Ամոն սկսեցին դէպի անկախութիւն ձգտել։ Բայց Սողոմոնը յայտնի եղաւ իբրև իմաստուն կառավարիչ, արդար դատաւոր և իբրև փառաւոր և հարուստ թագաւոր (Տ. Գ. ԺԳ. Գ. և Ժ. գլ.)։

Դաւթի և Սողոմոնի ժամանակ քանանացիները ձուլուեցին իսրայէլացիների հետ և անհետացան. այդ բանին շատ օգնեց Սողոմոնի խաղաղ կառավարութիւնը։ Սողոմոնը իւր պետութիւնը բաժանեց 12 նահանգների և իւրաքանչիւրի վրայ մի կառավարիչ նշանակեց։ Նա իւր ամբողջ ժամանակը նուիրեց շինարարական գործին, որով զարդարեց և ամրացրեց Երուսաղէմը։ Նա շինեց Եհովայի համար մի այնպիսի փառաւոր տաճար, որը դարեր շարունակ նրա անունը անմահացրեց։ Տաճարի մօտ իւր

համար էլ մի շքեղ պալատ կանգնեցրեց։ Այս բոլոր շինութիւնների ծախքը ծածկելու համար նա Գալիլեա գաւառը ծախեց Տիւրոսի Հերամ թագաւորին 120 ոսկով, այլ և ամուսնացաւ Եգիպտոսի թագաւորի աղջկայ հետ, որը իրը օժիտ բերեց Գեզեր քաղաքը (Գ. թԳ. Գ. 5—45. Գ. 25—34 Ժ. 23—29)։

Իրրև խաղաղասէր իշխան նա զարկ տուեց վաճառականութեանը ծովի և ցամաքի վրայ, որով թէ ինքը և թէ ժողովուրդը հարստացան։ Նորա հարստութեան և իմաստութեան համբաւը շատ հեռուներ տարածուեց։ Սորա շնորհիւ երկրի մէջ արհեստները սկսեցին ծաղկել և բարեշէն քաղաքներ առաջ գալ։ Այսպիսով իսրայէլացիք քաղաքակիրթ ժողովուրդ դարձան։

Զ. ԳԼՈՒԽ

Պետութեան բաժանումից մինչև Յերոբոամ Բ.-ը.
980—750

Սողոմոնի ժանուանից յետոյ Իսրայէլի ծերերը հաւաքուեցին Սիւքեմ խորհուրդ անելու և մի նոր թագաւոր ընտրելու. այնտեղ էր նաև Սողոմոնի որդին Ռոբոամ։ Ծերերը պահանջ դրին, Ռոբոամին այն ժամանակ միայն

թագաւոր ընտրել և օծել, եթէ նա կ՚խոստանայ իւր հօր դրած հարկերի լուծը թեթևացնել։ Երիտասարդ թագաժառանգը լսելով իւր երիտասարդ խորհրդատուներին, բացատրեց, որ ինչպէս հաստ է իւր ճկոյթը իւր հօր մէջքից, այնպէս էլ ծանր պիտի լինի նրա հարկերի երկաթեայ լուծը հօր դրած փայտի լծից։ Այս յանդուգն պատասխանից յետոյ ծերերը մերժեցին նրան ընդունել թագաւոր, այլ և քարկոծելով նրա հարկահաններին, նրա տեղ ընտրեցին Բենեամինի ցեղից Նաբատեան Յերոբոամին, որը արդէն իսկ Սողոմոնի ժամանակ ապատամբել, Եգիպտոս էր փախել և այժմ վերադարձել, Սիւքեմումն էր բնակուում (Տ. Գ. թգ. ժԲ. գլ.)։

Պարզ էր, որ միջին և հիւսիսային Պաղեստինի իսրայէլացի ցեղերը չէին ուզում տանել Յուդայի գերակշռութիւնը։ Նրանք մի առ ժամանակ լուռ էին մնացել, որովհետև փղշտացիների վտանգ կար. երբ այդ վտանգը Դաւթի և Սողոմոնի շնորհիւ ոչնչացել էր, էլի այդ ցեղերը, դրանց մէջ ամենաուժեղ Յովսէփի ցեղը, բուռն պահանջ դրացին իսրայէլացւոց կրօնական և քաղաքական կենդրոնը հարաւից՝ Երուսաղէմից՝ դէպի հիւսիս տեղափոխել։ Սելովում նստող Աքիա Մարգարէն նպաստում էր այդ փոփոխութեանը։ Այն ժամանակներում Իսրայէլի կրօնա-

կան միակ կենդրոնատեղին Երուսաղէմը չէր. հիւսիսում էլ կային նշանաւոր սրբավայրեր, ինչպէս Դանը և Բէթէլը։ Այս սրբավայրերում կային բազմաթիւ քահանաներ, որոնք նոյն իրաւունքն էին վայելում, ինչ որ Երուսաղէմին։ Արդ Յերոբոամը Իսրայէլի տաս ցեղերից թագաւոր ճանաչուելուց յետոյ՝ աշխատեց իւր սրբավայրերի յատկապէս Բէթէլի յարգը բարձրացնել՝ Երուսաղէմի հեղինակութիւնը կոտրելու համար (Գ. Թ. ԺԲ. 25—33)։

Յուդայի թագաւորը Ռոբոամը և նորա յաջորդները զէնքի ոյժով ուզում էին այս նոր կազմուած թագաւորութիւնն ընկճել. սկզբում նրանց կարծես թէ այդ բանը յաջողուում էր։ Յերոբոամը պարտուած՝ քաշուել էր Յորդանանից դէպի արևելք Փանուել քաղաքը, բայց այս յաջողութիւնը երկար չտևեց։ Եգիպտոսի փարաւոնը Սիսաքը օգտուելով իսրայէլացիների այս ազգամիջեան կռուից, յարձակուեց Երուսաղէմի վրայ, կողոպտեց, այրեց տաճարը և հարուստ աւարով յետ քաշուեց 928 թուին։ Այս ձախորդութիւնը բոլորովին կոտրեց Յուդայի ոյժը (Գ. ԺԴ. 25)։

Սակայն Յերոբոամի հիմնած հարստութիւնն էլ տևական, հաստատուն և հեղինակաւոր չեղաւ։ Հազիւ էր նրա որդին Նատաբը գահ բար-

ձրացել և յաջողութեամբ կռուելով փղշտացիներ-
ի հետ՝ պաշարել էր Գիբէթոն քաղաքը, երբ
Բաաքարի ցեղից Բաասան անունով մի իշխան
սպանելով նրան, իրեն թագաւոր հրատարակեց և Թիրսան իւր մայրաքաղաքը դարձրեց
(Գ. ԹԳ. ԺԵ. 16—31)։

Սա այնչափ զօրացաւ, որ Յուդայի հետ
պատերազմելով՝ նրան նեղը լծեց. պաշարեց
Երուսաղէմի մօտիկ Ռամա բերդը և հրէաստանցիների առաջ հիւսիսային ճանապարհները փակեց։ Ռոմբոամի յաջորդը՝ Ասան վտանգից ազատուելու միակ հնարը գտաւ Դամասկոսի թագաւոր Բենհատատին իրեն օգնութեան կանչելով։ Բաասայի յաջորդը Էլան սպանուեց իւր տան մէջը մի խնջոյքի ժամանակ Զէմրի զօրագլխի ձեռքով, բայց մի ուրիշ զօրավար՝ Օմրին թոյլ չտուաւ, որ Զէմրին թագը իր գլխին դնի։ Նա յարձակուեց սրա վրայ և երբ Զէմրին իւր բանը կորած համարեց, քաշուեց իւր պալատը, յուսահատութիւնից կրակ ձգեց այնտեղ և ինքն էլ մէջը այրուեց, որից յետոյ Օմրին գահ բարձրացաւ։

Հիւսիսային թագաւորութեան Օմրիի հիմնած այս երրորդ հարստութիւնը 900 թ. աւելի զօրեղ և հաստատուն եղաւ։ Օմրին քաջութեամբ պաշտպանեց իւր պետութիւնը և իւր մայրա-

քաղաք դարձրեց Սամարեան։ Ասորեստանցիք այս թագաւորին յիշում են իրենց արձանագրութիւններում։ Սա մոմաբացիներին հարկաւոր դարձրեց և Մեդաբա երկիրը իւր պետութեանը միացրեց. միայն Դամասկոսի հետ նա չկարողացաւ յաջողութեամբ մրցել (Գ. թԳ. ԺԶ.)։

Օմրիին յաջորդեց իւր որդին Աքաաբ, որը դաշնակցելով Դամասկոսի հետ 854-ին Եփրատի ափին՝ Քարքարում դուրս եկաւ ասորեստանցոց դէմ, որոնք անընդհատ յառաջխաղացութեամբ ուզում էին իրենց պետութեան արևմտեան սահմանները մինչև Միջերկրական ծովը հասցնել։ Քարքարի ճակատամարտը երկար տևեց, բայց յաղթութիւնը անորոշ մնաց և ասորեստանցիք յետ դարձան։ Հազիւ էին նրանք հեռացել, երբ դամասկացիք նորից յարձակուեցին Իսրայէլի վրայ։ Աքաաբը քաջութեամբ էր պաշտպանում. նա յետ քշեց նրանց այն ժամանակ, երբ նրանք հաւարձակուեցին մինչև անգամ Սամարեան պաշարել (Գ. թԳ. Ի.)։

Հետևեալ տարին, երբ նրանք նորից իրենց յարձակումը կրկնեցին, նա Աֆէքի մօտ բաց դաշտում յաղթեց նրանց և Բենհատատ թագաւորին գերի բռնեց։ Հակառակ իւր կրօնասէր և հայրենասէր ժարգարէների խորհրդին՝ ազատ արձակեց Բենհատատին պայմանով, որ նա յետ

տայ Գիլէատի քաղաքները և Ռամա բերդը և իրեն էլ միշտ դաշնակից մնայ։ Բենհատատաբ խոստացաւ և ազատուեց, բայց իւր խոստումը չկատարեց. այնպէս որ Աքաաբ նոր պատերազմ մղելով միայն կարողացաւ գրաւել մի քանի քաղաքներ։ Մի անգամ էլ, երբ Յուդայի Յովսափատ թագաւորի հետ դաշնակցած նորից Դամասկոսի վրայ պատերազմի էր գնում, հարցրեց Եհովայի 400 մարգարէներին պատերազմի ելքի մասին. նրանք միաբերան պատասխանեցին «Գնա, և Տէրը քո ձեռքը պիտի տայ քո թշնամիներին»։ Մինչև իսկ Սեդեկիա մարգարէն գլխին երկաթէ եղջիւրներ անցկացնելով գլխով պոգահարելով յայտնեց, որ թագաւորն էլ այդպէս պիտի հարուածի դամասկացիներին և բնաջինջ անի։ Միայն Միքա մարգարէն գուշակում էր դժբախտութիւն. նա տեսնում էր, որ խարայէլացիք ցրուած են լեռների վրայ իբրև անհովիւ ոչխարներ։ Սեդեկիան նրան ապտակեց, իսկ թագաւորը բանտարկել տուեց, ասելով որ եթէ պատերազմից յաջողութեամբ վերադառնայ, նրան ապանել պիտի տայ սուտ մարգարէանալուն համար։ Բայց դժբախտաբար պատերազմից ողջ չվերադարձաւ. Ռամայի մօտ կռուի տաքացած միջոցին մի նետով ծանր վիրաւորուեց և երեկոյեան դէմ շունչը փչեց իւր կառքի մէջ։

Նորա գօրքերը նորա մարմինը բերին և հանդիսաւոր թաղեցին 851 թուին (Գ. ԹԳ. Ի. Բ.)։

Աքաաբի վերջին տարիներում այս պատերազմների ժամանակ Մովաբի թագաւոր Մեսան իրեն անկախ էր հրատարակել և Մեդաբա գաւառն էլ գրաւել էր։ Աքաաբի որդին Աքազիան կարճ թագաւորեց և ոչինչ չկարողացաւ նրա դէմ անել. իսկ Աքազիայի եղբայրն ու յաջորդը Յորամը նախօրօք դաշնակցելով Յուդայի և Եդոմի թագաւորների հետ արշաւեց նրա վրայ։ Հարաւից դաշնակիցները մտան Մովաբի երկիրը, և քանդեցին ամեն ինչ. արտերը քարերով լցրին, աղբիւրները խցեցին, իսկ ծառերը կտրատեցին և մայրաքաղաքն էլ պաշարեցին։ Ի զուր Մեսան փորձեց պաշարողների շարքերը կտրել և անցնել։ Յուսահատութիւնից մղեղնած թագաւորը իւր անդրանիկ որդուն մորթեց քաղաքի պարսպների վրայ թշնամիների աչքի առաջ։ Այս բանը այնպիսի սարսուռ պատճառեց, որ դաշնակիցները առանց քաղաքն առնելու թողին ու վերադարձան (Գ. ԹԳ. Գ.)։

Յորամը այս արշաւանքը կարող էր կատարել, որովհետև Դամասկացիները այդ թուերին զբաղուած էին ասորեստանցիների նոր յարձակումներով (850—848), բայց երբ նրանք հեռացան՝ դամասկացիք նորից յարձակուեցին Իս-

բայէլի վրայ և Յովրամին փակեցին Սամարիայում։ Այստեղ արդէն սով էր ընկել և քիչ էր մնացել, որ քաղաքը թշնամու ձեռքն ընկնէր, երբ 846 թուին տեղի ունեցած ասորեստանցիների մի նոր արշաւանք ստիպեց նրանց յետդառնալ, որից օգտուելով Յովրամը՝ գրաւեց նրանցից Ռամոթ-Գաղաատը։ Այս յաղթութիւնից քիչ յետոյ պետական մի մեծ յեղաշրջում կատարուեց։

Յովրամի հայրը Աքաաբը կնութեան էր առել սիդոնացիների թագաւորի աղջկան՝ Յեզաբէլին, որի համար նա շինել էր Բահաղ աստծուն նուիրուած մի տաճար։ Այս բանը խիստ վրդովեց Իսրայէլի մարգարէներին, որոնք Իսրայէլի Աստծուն Եհովային նախանձախնդիր՝ վիրաւորանք և սրբապղծութիւն էին համարում այդ բանը։ Դրանց մէջ աչքի էր ընկնում Եղիա մարգարէն, որը Բահաղի շատ մարգարէներին և քահանաներին կոտորել տուեց, բայց ինքն էլ երկար և ծանր հալածանքներ կրեց Աքաաբից և նրա կնոջից (Գ. թԳ. ԺԸ. և ԺԹ.)։ Այս կինը բացի դրանից մի մեծ անիրաւութիւն էլ գործել էր տուել իւր ամուսնուն։ Նա Եզրայէլացի Նաբովթ անունով մի մարդու սպանել էր տուել՝ նրա ագարակը ձեռք բերելու համար։ Այդ դէպքին Եղեան ականատես էր եղել և սրբ-

բազան գայրոյթով լցուած գուշակել էր Աքաաբի կամ Օմրիի տան կործանումը։ Եղիսէն՝ Եղիայի աշակերտը՝ լսել էր այդ գուշակութիւնը և ուզում էր գլուխ բերել այն (Գ. ԹԳ. ԻԱ)։

Երբ Յովրամը, Աքաաբի որդին, Ռամովթ-Գաղաատի պատերազմում թեթև կերպով վիրաւորուած՝ գնաց Եզրայէլ քաղաքը կազդուրուելու, Եղիսէն իւր աշակերտներից մէկին, ուղարկեց պատերազմի դաշտ՝ Յէհու զօրավարին թագաւոր օծելու և այդպիսով ապստամբեցնելու Յովրամի դէմ։ Աշակերտ-մարգարէն գտաւ Յէհուին մեծամեծների ժողովում, որին դուրս կանչեց մի ծածուկ տեղ և իւղի սրուակը նրա գլխին թափեց, յայտնելով՝ որ Եհովան նրան թագաւոր օծեց իւր ժողովրդի վրայ։ Այս ասելով անհետացաւ։ Երբ մեծամեծները Յէհուին հարց տուին, թէ այն «դէրվիշն» ինչ գործ ունէր նրա հետ, նա նախ ծածկեց, բայց վերջը յայտնեց եղելութիւնը։ Այն ժամանակ այդ մեծամեծները իրենց շորերը փռեցին Յէհուի աթոռի առաջ, պատերազմի փող հնչել տուին և Յէհուին թագաւոր հրատարակեցին։ Որոշուեց ժամանակ չտալ Յովրամին, այլ մի բանակով նրա վրայ գնալ և Եզրայէլում բռնել նրան։ Եզրայէլի աշտարակի վրայ կանգնած պահապանը նկատեց, որ հեռուից մի գունդ զօրք է գալիս։

Յովրամը երեք անգամ մարդ ուղարկեց իմանալու, թէ ովքեր են եկողները, բայց գնացողները յետ չկան. այն ժամանակ ինքը կառքը լծել տուեց նրանց առաջ գնալու։ Նաբովթի ագարակում իրար հանդիպեցին, որտեղ Յէուն Յովրամին նետահարեց թիկունքից։ Թագաւորի մարմինը Յէուի հրամանով ձգուեց արտի մէջ, որպէսզի անիրաւութեամբ խլուած ագարակը նրա արիւնով ցօղուի։ Քաղաքը մտնելով Յէուն Յովրամի մօրը Եզաբէլին պալատի պատուհանից վայր ձգել տուեց, որպէսզի այնտեղ ճանապարհի աղբակոյտի վրայ շները նրա մարմինը լափեն։ Սրանով չբաւականանալով Յէուն սպանեց Եզրայէլում գտնուող Յովրամի բոլոր ազգականներին և պաշտօնեաներին և Բահաղի քահանաներին. ապա մարդ ուղարկելով Սամարեա, պահանջեց մեծամեծներից, որ կամ Աքաաբի եօթանասուն որդիների գլուխները կտրեն և կողովների մէջ լցրած իրեն ուղարկեն և կամ նրանցից մէկին իրենց թագաւոր ընտրելով դուրս գան իւր դէմ կռուի։ Սամարեայի ծերերը կատարեցին առաջին պահանջը։ Յէուն այդ գլուխներից բուրգեր շինեց Եզրայէլի քաղաքի դռան։ (Դ. Թգ. Ժ.)։

Այս սարսափելի արիւնհեղութեանը յաջորդեց մի ուրիշը։ Նա լուր տարածեց, թէ մատ-

դիր է Բահաղի համար մի մեծ տօն կատարել։ Բահաղի մարգարէները, քրմերը և պաշտօնեաները հաւաքուեցին նրա մօտ հանդիսաւոր զոհեր մատուցանելու տաճարում երբ ինքը զոհել էր և դուրս եկել տաճարից, հրամայեց իւր զինուորներին տաճարի դռները բռնել և բոլոր Բահաղի պաշտօնեաներին կոտորել։ Այսպէս մաքրեց նա կռապաշտութիւնը Իսրայէլից։

Բայց թագաւորի այս բարբարոս վարմունքը Իսրայէլի մէջ ընդհանուր հաւանութիւն չէր գտնում։ Յէուի հիմնած հարստութիւնը վերջինը եղաւ. ժողովուրդը սիրով չէր յարած թագաւորական տունը, որը իւր ոյժը պահպանում էր միայն զինուորների օգնութեամբ։ Այս հարստութիւնն էլ ստիպուած էր իսրայէլացիներին պաշտպանել դամասկացիների յարձակումներից, և երբ Յէուն տեսաւ, որ միայնակ չի կարող նրանց դիմադրել, դիմեց ասորեստանցիների օգնութեան, հարուստ ընծաներ ուղարկելով Սալմանասար III-ին, խնդրեց նրան ազատել իրեն իւր թշնամիներից։ Այդ ընծայաբերութիւնը Սալմանասարը փոխադրել տուեց. 842 և 839-ին թուերին Դամասկոսի վրայ արշաւեց։ Բայց երբ նա հեռացաւ, իսրայէլացիք, Յէուն և նրա երկու յաջորդները դարձեալ անպաշտպան մնացին դամասկացիների առաջ։ Նրանք կորցրին Գա-

զաան, ենթարկուեցին շրջակայ ժողովուրդների մոմարացիների, ամոնացիների և փղշտացիների յարձակման։ Եղիսէ մարգարէն իւր աշակերտ-մարգարէների խմբերով կռուում էր Իսրայէլի անկախութիւնը փրկելու համար։ Յեհու թոռը՝ Յոփասը աւելի բախտաւոր դուրս եկաւ. նա կարողացաւ երեք անգամ ջարդել դամասկացիներին. այնպէս որ Յոփասի որդին և յաջորդը Յերոբոամ Բ-ը կարող էր խաղաղ թագաւորել և երկիրը արտաքուստ և ներքուստ զօրեղացնել։ Դամասկացիք իրենց սահմանների մէջ ամփոփուեցին. մոմարացիք ընկճուեցին և հարկաւոր դառան։ Յերոբոամ Բ-ի օրով Իսրայէլի թագաւորութիւնը վերջին անգամ փայլեց ժամանակաւորապէս 760 թուին։

Է. ԳԼՈՒԽ

Իսրայէլի Առաւածը եւ նրա պաշտամունքը

Իսրայէլի ժողովուրդը՝ ոչ թէ իւր արտաքին քաղաքական պատմութեամբ է նշանաւոր դարձել, այլ իւր կրօնական կեանքով և աշխարհայեացքով, որը յետագայում մարգարէների գործունէութեան շնորհիւ և Յիսուս Քրիստոսի հանդէպ գալով՝ աւելի զուտ վանմացաւ և

տարածուեց միւս ժողովուրդների մէջ։ Այնպէս որ մեր քրիստոնէական կրօնի սկզբնաւորութիւնը կազմում է Իսրայէլի կրօնը, որի մեծ հիմնադիրը Մովսէսն է համարուում։ Իսրայէլի ժողովուրդը հաւատում էր, որ Մովսէսին Աստուած երևացել է Սինա սարի վրայ և յայտնել, որ ինքը Աբրահամի, Իսահակի և Յակոբի Աստուածը Եհովան է։ Եհովան ոչ միայն բնութեան ոյժերի անձնաւորացումն էր՝ այն է՝ ամպրոպի և կայծակի, այլ նա մի զօրեղ և սուրբ էակ է, որի բացարձակ իշխանութեան տակն է գտնուում Իսրայէլի ժողովուրդը։ Նա մի բարոյական ոյժ է, մի սուրբ Աստուած է, որովհետև նա մեղաւոր մարդկանց պատժում և իւր ժողովուրդին օրէնք է տալիս, ինչպիսին էր տասնաբանեայ պատուիրանները։ Իսրայէլի Աստուածը Եհովան է. այս էր այդ ժողովրդի հաւատամքի առաջին և հիմնական խօսքը։ Եհովան ու Իսրայէլը միմեանց են պատկանում։ Ժողովուրդը նրանից էր սպասում օգնութիւն կեանքի բոլոր հանգամանքներում։ Նա էր, որ ժողովրդի համար կռուում և նրան յաղթութիւն պարգևում, երկրագործին արև ու անձրև էր տալիս։ Եթէ պտղաբերութիւնը յաջող էր, նշանակում է Եհովան սիրալիր է դէպի իւր ժողովուրդը և այդ բանը նշանակում էր ուրախութիւն։ Իսկ եթէ

ժողովուրդը դժբախտության մէջ էր ընկնում, թշնամիների յարձակումներին էր ենթարկուում կամ երաշտ էր, նշանակում է Եհովան բարկացել է և ուզում է ժողովրդին նրա ոնէ մեղքի համար պատժել։ Իսրայէլի ժողովուրդը հաւատում էր, որ իւր Աստծու և իր մէջ Մովսէսի միջնորդութեամբ մի դաշինք է կընքուած, մի ուխտ է հաստատուած, որի յիշատակը կատարում էր մի ծիսակատարութեամբ։ Երբ շնորհակալութեան զոհ էին մատուցում Աստծուն, զոհուած կենդանու արիւնը երկու մասի էին բաժանում. մի մասը ցանում էին Աստծու սեղանի վրայ, իսկ միւս մասը մի սափորի մէջ էին հաւաքում և ցանում էին ժողովրդի վրայ. այդպիսով՝ ինչպէս որ մարդկանց համայնակեցութիւնը արենակցութեան վրայ էր հիմնուած, այնպէս էլ արիւնով էր վերահաստատուում Աստծու և ժողովրդի յարաբերութիւնը։

Աստծու և Իսրայէլի մէջ գոյութիւն ունեցող այս դաշնակցական յարաբերութեան գաղափարը հին կտակարանի կրօնի էական տարրն է։ Այս գաղափարի էութիւնն է կազմում թուոց ԻԶ. 12-ի «Ես կամենում եմ ձեր Աստուածը լինել և դուք պէտք է իմ ժողովուրդը լինիք» խօսքը։ Իսրայէլը Աստծուն իրրև իւր Աւտուածը ճանաչել էր յատկապէս իւր Եգիպտոսից ազատուելու

մեծ գործում։ Այս փրկությունը Իսրայէլի Աստծու հիմնական յայտնությունն էր։ Այդ պատճառով ասանաբանեայ պատուիրանի հէնց սկզբում ասած է «Ես եմ քո տէր Աստուածը, որ քեզ Եգիպտոսից, ծառայության տանից հանեցի»։ Ելից Ի. 2։ Իւր ազատած ժողովրդին Նա Սինայում օրէնք է տուել և բերել բնակեցրել աւետեաց երկրում՝ Քանանում և իբրև այդ ժողովրդի իսկական թագաւոր գործում է այնտեղ։ Այդ ժողովրդի կեանքն ու յարաբերությունները, կրօնն ու բարոյականությունը, ընտանիքն ու պետությունը պիտի կառավարուէին իւր թագաւոր Աստծու օրէնքներով, որի հիւքը կազմում են տասն պատուիրանները։ Դրանից առաջինը արգելում է բազմաստուծությունը, երկրորդը՝ պատկերապաշտությունը, երրորդը՝ Աստծու անունը ի զուր գործ դնելը։ Չորրորդը՝ պատուիրում է շաբաթը սուրբ պահել, հինգերորդը՝ հօրն ու մօրը պատուել. վեցերորդը արգելում է մարդասպանությունը, եօթերորդը՝ շնությունը, ութերորդը՝ գողությունը, իններորդը՝ սուտ վկայելը, տասներորդը՝ ընկերոջ ունեցածին աչքը դնելը։

Այս պատուիրաններով Աստուած Իսրայէլի մէջ հանդէս էր գալիս իբրև օրէնսատու թագաւոր. Նա ոչ միայն իւր օրէնքների համաձայն

գառում էր, այլ նաև նրան պատերազմում իբրև զօրավար առաջնորդում էր։ Իսրայէլի պատերազմները Եհովայի պատերազմներ էին. դատերը նրա անունով էին կտրում. այսպիսով Իսրայէլի պետութիւնը մի *աստուածապետութիւն* էր։ Աստուած բնակուում էր իւր ժողովրդի մէջ։ Նրա ներկայութեան խորհրդանշանն էր «Տապանակ ուխտի»-ն Եր. 25—22։ Ըստ աւանդութեան Մովսէս մի արկղ էր պատրաստել տասը պատուիրանների քարեղէն տախտակների համար։ Մինչև Սողոմոնի ժամանակները այդ Տապանակը գտնուում էր «*վկայութեան խորան*» կոչուած մի վրանի տակ, մինչև որ Սողոմոնը տաճարը շինեց, ուր և տեղաւորեցին այդ Տապանակը։ Սրա երեսին դրած կափարիչը ծածկուած էր Քերովբէների քանդակներով, որոնք ամպրոպի խորհրդանշանն էին համարուում, այն ամպրոպի, որի մէջ Աստուած յաճախ յայտնուում էր ժողովրդին։ Մաղադութեան զոհն անելիս՝ քահանայապետը այս կափարիչի վերայ պիտի ցաներ զոհի արիւնի մի մասը, որով ամբողջ ժողովրդի մեղքերին թողութիւն կտրուէր։

Ուխտի տապանակի համար հիմնած էր *վկայութեան խորանը*, որը նոյնպէս Աստծու ժողովրդի մէջ ներկայ լինելն էր ցոյց տալիս։ Սողոմոնի տաճարը բոլոր յետագայում այս

խորանի տեղը, որը նրա օրինակով էր շինած՝ 15 մետր բարձր 10 մ. լայն և 3 մետր երկար մի շէնք էր գաւ։ Ինչպէս այն վկայութեան խորանը նոյնպէս և այս տաճարը բաղկացած էր երեք մասից 1) նախագաւթից եւ գաւթից 2) սրբարանից 3) Սրբութիւն սրբոցից։ Սրբարանում կային մի զոհի սեղան, մի առաջաւորաց հացի սեղան և տասն ոսկեայ աշտանակներ։ Ներքին գաւթում կային մի ողջակիզի սեղան և մի պղնձեայ ծով՝ մի մեծ աւազան ջրով լցրած, ուր քահանաները իրենց ոտներն ու ձեռները լանում էին ծիսակատարութիւնը սկսելուց առաջ։

Սակայն չպիտի կարծել, որ Իսրայէլի մէջ պաշտամունքի վայրը միայն Երուսաղէմի տաճարն էր։ Ելից 20—24 կարդում ենք «Ամեն տեղ, ուր որ ես իմ անունը յիշել կտամ, քեզ մօտ պիտի գամ և քեզ օրհնեմ»։ Այնպէս որ հին ժամանակներից սկսած Իսրայէլը առանց այլ և այլութեան պաշտում էր իւր Աստծուն ամեն տեղ, յատկապէս բարձունքներում. օրինակ Սամուէլը զոհում էր Ռամայում, Դաւիթը՝ Բեթզէհեմում ու Քեբրոնում. Եղիան՝ Կարմեղոսի վրայ։ Երուսաղէմի տաճարի հետ համեմատած սկզբում Բէթէլ և Դան սրբավայրերը հիւսիսային թագաւորութեան մէջ աւելի մեծ հեղինակութիւն ունէին և իրրև արքունի սրբավայր

էին նկատուում։ Շատ տեղ քարակոյտեր սրբավայր էին համարուում, ինչպէս Գաղգաղա։ Սուրբ էին համարուում երբեմն մի կաղնի ծառ, կամ մի արմաւենի և կամ ծառերի մի խումբ. նաև Քադէշի և Բերսաբէի աղբիւրները նշանաւոր սրբատեղիներ էին։ Վերջերը միայն արհեստական քարէ սրբատաշ սեղաններ շինուեցին և բնական ծառերի փոխարէն սրբավայրերի շուրջը արհեստական ծառեր տնկեցին և ուր որ բնական աղբիւր չկար, պղնձէ աւազաններ շինեցին։

Չնայած որ Մովսէսը արգելել էր Աստծուն ներկայացնող պատկերներ շինել, բայց Իսրայէլի հասարակ ժողովրդի մէջ պատկերապաշտութիւնը և կռապաշտութիւնը մուտ էին գործել։ Օրինակ Երուսաղէմում կար մի պղնձէ օձ, որը ներկայացնում էր Եհովային։ Երբեմն էլ իսրայէլացիք, երևի եգիպտացիներից ազդուած, Եհովային ներկայացնում էին եզան կամ հորթի կերպարանքով, դա համարուում էր Յերոբոամի մեղքը։ Քանանացիների ազդեցութեամբ իսրայէլացիք սկսեցին տեղ տեղ նրանց աստծուն Բահաղին պաշտել, որին զոհում էին ոչ միայն կենդանիներ այլ նոյնիսկ երբեմն երեխաներին։ Օր. Բահաղ ճանճիկին (Դ. թգ. Ա գլ.)։ Այս Աստծուն էին նուիրուած լեռների կանա-

չաէա բարձունքները։ Բանալի հետ պաշտուում էր երբեմն նաև Աստարտէն, որը լուսնի աստուած էր համարուում։

Բացի այս գլխաւոր աստուածներից անահաւատ ժողովրդի համար գոյութիւն ունէին նաև ուրիշ աւելի երկրորդական աստուածութիւններ։ Օրինակ ամեն մի տոհմ ունէր իւր տոհմային աստուածութիւն։ Այդ աստուածները անուն չունէին, իսկ դրանց պատկերները Թերափներ էին կոչուում, որոնք երևի ներկայացնում էին տոհմի նախնիքների ոգիները։ Ժամանակի ընթացքում կամաց կամաց այս հեթանոսական հաւատալիքներն ու պաշտամունքները մէջտեղից վերացան, անհետացան ճշմարիտ Աստծու Եհովայի պաշտամունքի առաջ։

Եհովան էր Իսրայէլի իսկական Աստուածը, որը և ցանկացել էր իւր ժողովրդի մէջ բնակուել և որին նուիրուած էր իսրայէլացու աւելն մի գործ, ամբողջ կեանքը։ Բայց չնայած դրան շաբաթուայ մէջ մի առանձին օր նուիրուած էր Աստծուն։ Շաբաթ օրը պիտի բոլոր գործերը կանգ առնէին, որպէս զի ինչպէս անհատը՝ այնպէս էլ ամբողջ ժողովուրդը ի պատիւ Աստծուն հանգիստ ունենով ապացուցէր, թէ ինքը պատկանում է Եհովային՝ Աստծուն։ Ամեն շաբաթ օրը իսրայէլացին պիտի գիտակցէր, որ ինքը

կապուած է իւր Աստծոյ հետ անխզելի «Ուխտով». ահա այս անխզելի դաշնակցութեան խորհրդանշանն է դառնում շաբաթ օրուայ ոտնելը։ Ով շաբաթը սուրբ չպահէր՝ նա կ՚խզէր այդ դաշինքը, որով և կարժանանար մահուան պատժի։ Շաբաթ օրը իսրայէլացիք հաւաքուում էին իրենց սրբավայրերում և Տիրոջ առաջ ուրախանում էին։ Բացի շաբաթ օրուանից ոտնում էին իսրայէլացիք եօթներորդ և յիսուներրորդ տարին, որը անուանուում էր *յոբելենական տարի*։ Հայրենի հողը վեց տարի մշակուելուց յետոյ եօթներորդ տարին պիտի հանգստանար, և ինչ որ այդ տարին ինքնիրեն բուսնէր, պիտի թողնուէր աղքատներին և երկնքի թռչուններին։ Աղքատներին փոխ տուած փողը եօթներորդ տարում չէր կարելի յետ պահանջել։ Եօթն անգամ եօթ տարիները անցնելուց յետոյ պէտք էր ոտնել հետևեալ յիսուներորդ յոբելենական տարին, երբ ագարակները չպիտի մշակուէին և տրուակները ազատ պիտի թողնուէին։ Տարուայ մէջ երեք գլխաւոր ոտներ կային. ա. *Զատիկը*, որը սկզբում գարնան ոտնի նշանակութիւնն ունէր, երբ անասունների առաջին ծնունդը զոհում էին Աստծուն. բայց յետոյ այս գաղափարի փոխարէն Զատիկը իսրայէլացիների Եգիպտոսից ազատուելու յիշատակի ոտնը դար-

ձաւ։ Գարնանային ամսուայ Նիսանի 14-ին ամեն մի իսրայէլացի իւր տան համար մի միամեայ անարատ գառ պիտի առնէր և երեկոյեան դէմ մորթէր, և առանց նրանից մի ոսկոր անգամ կոտրելու, պիտի խորովէր և ուտէր անխմոր հացով և դառն համեմունքներով։ Կենդանու արիւնը պիտի հաշտեցնէր իսրայէլացուն իւր Աստծու հետ։ Այդ արիւնից պէտք էր քսել տան դռան դրանդիին։ Ընդանիքի բոլոր անդամները այդ օրը միասեղ պիտի ընթրէին և ուտէին գառկական գառնից՝ առանց նրանից մի մնացորդ թողնելու։ Այս երեկոյեան ոչնին յաջորդում էր եօթնօրեայ անխմոր հացի՝ կամ առաջին հունձի տօնը։ Երկրորդը *Պենտեկոստէի տօնն էր*, որը կատարուում էր Զատկից 50 օր յետոյ։ Այդ օրը երկու ցորենի հաց իբրև առաջին պտուղ նուէր էին բերում Տիրոջ։ Երրորդ տարեկան տօնն էր *Տաղաւարտաց* տօնը, որը տեւում էր 7—8 օր։ Սա էլ վերջին պտուղների, գինու տօնն էր, երբ ժողովուրդը այդինքներում վրան էր խփում և այնտեղ բացօթեայ տօնախմբութիւններ էր սարքում։

Առանձին նշանակութիւն ունէր այսպէս կոչուած *հաշտութեան օրը*, որը ընկնում էր եօթներորդ ամսուայ տասներորդ օրում։ Այդ օրը իսրայէլացիք ծոմ էին պահում ժողո-

վրդի անքաւելի մեղքերի համար։ Քահանայապետը իւր և իւր ժողովրդի համար զոհ էր մատուցում և զոհի արիւնից քսում էր սրբութեան սրբոցում գտնուող Ուխտի տապանակի ծածկոցին և սեղանի քարին՝ կամենալով այդպիսով ժողովրդի ամբողջ տարուայ գործած մեղքերը քաւել։ Իբրև ժողովրդի հաշտութեան զոհ բերում էին երկու նոխազներ, որոնցից մէկին մորթում էին, իսկ միւսի վրայ քահանայապետը իւր ձեռքը դրնելով ամբողջ ժողովրդի մեղքերի խոստովանութիւնն էր անում, յետոյ բաց էր թողնում այդ նոխազին դէպի անապատը։ Առաջին նոխազով մեղքերն էին քաւուում, իսկ երկրորդովը հեռացուում էին։ Հին հաւատալիքով այդ երկրորդ նոխազը անապատի չար ոգուն՝ Ազազէլին էր զոհուում։ Բացի Զատկի տօնից մնացած բոլոր տօնները երկրագործ ժողովրդի երկրագործական գրաժունքների հետ էին կապուած։

Թ. ԳԼՈՒԽ

Նորայէլի կեանքը։

Մովսիսական կրօնի, ինչպէս ամեն մի յայտնութեան կրօնի մէջ էականն այն է՝ որ Աստուած յայտնուում է ժողովրդին և ցանկանում է յարաբերութեան մէջ մտնել նրա հետ.

բայց անհրաժեշտ է, որ ժողովուրդը ինքն էլ ընդունակ և արժանի լինի իւր Աստուծու հետ յարաբերութիւն պահպանելու. սրա համար ժողովուրդը պիտի հոգ տանէր իւր սրբութեան մասին և նուիրուէր իւր Աստծուն։ Այս պատճառով իսրայէլացին նորածին երեխային ազով շփում էր, մեղր էր քսում նրա քիթին, որով նա ենոմային էր նուիրուում։ Ծննդից ութ օր յետոյ թլփատում էին որով նա համարուում էր ժխի անդամ։ Այնուհետև ամեն մի իսրայէլացի պիտի աշխատէր ամբողջ իւր կեանքում սուրբ մնալ. բայց այդ սուրբ լինելը յաճախ արտաքին և ձևական կերպով էր բնորոշուում։ Օրինակ անասուրբ կոչուում էր մէկը, եթէ մի դիակ կամ մեռելոտի շօշափած լինէր, կամ խոզի միս ուտէր կամ պատահմամբ կենդանու արիւնից ուտէր, ինչ որ խիստ արգելուած էր, որովհետև իսրայէլացու հայեացքով արեան մէջ բնակուում է հոգին։ Նրանք կարծում էին, որ որոշ կենդանիների փորում շար ոգիներ են բնակուում, այդ պատճառով այդ կենդանիները անասուրբ էին համարուում։ Մի քանի հիւանդութիւններ՝ ժառանգական բորոտութիւնը՝ անսրբութեան շատ յայտնի նշան էին համարուում։ Ով ունէ կերպով անասուրբ էր դարձել՝ պարտաւոր էր համայնական ժողովից հեռու մնալ, մինչև որ զանազան

ծիսակատարութեամբ և լուացումներով սրբուէր։ Յեսուագայում քահանան էր որոշում թէ ինչն է սուրբ և ինչը անսուրբ, բայց ըսկզբում նա այդ դիրքը չունէր։ Ամէն մի ընտանիքի գլուխը՝ հայրը զոհաբերում էր ինքը և աղօթում իւր և իւրայիններին համար. նոյն էր անում տոնական իւր տունի համար։ Շատ յաճախ իսրայէլացի թագաւորները առանց քահանաների միջնորդութեանը զոհում էին, բայց հանգամանքների բերմամբ առանձնապէս դևտացիները նուիրուեցին Աստուծոյ ծառայութեան։ Սրանք էին ծառայում սրբավայրերում. քահանաները բազմաթիւ էին. նրանց պաշտօնը ժառանգական էր։ Քահանայական դասակարգի մէջ առանձին դիրք գրաւեց մի տուն, որը իրեն Ահարոնի սերունդից էր համարում։ Քահանաների ապրուստը գոյանում էր զոհի ժամանակ բարեպաշտ մարդկանց տուած նուէրներից։ Նրանց պաշտօնն էր Աստծու կամքը, օրէնքն ու արդարութիւնը յայտնել և սովորեցնել այն ժողովրդին, որի մէջերում խորհրդականները դարձան և այդ ձևով մանաւանդ յետագայում մեծ ազդեցութիւն ձեռք բերին նրա վրայ։

Ինչպէս միւս ժողովուրդների նոյնպէս և Իսրայէլի մէջ անհատի բարեպաշտութիւնը արտայայտուում էր աղօթքով և զոհով։ Իսրայէլացին

անհատապէս կարող էր իւր տան կամ իր ուզած տեղում աղօթել և քահանայի միջնորդութեան պէտք չունէր. բայց երբ նա գալիս էր մի ոնէ սրբավայրում աղօթելու, անյարմար էր համարում դատարկաձեռն ներկայանալ Տիրոջ. այսինքն նա իւր հետ զոհ պիտի բերէր կամ խոստանար բերելու։ Սկզբներում զոհը անհատական ընոյթ էր կրում, բայց յետագայում դա կազմեց ժամապաշտութեան մի մասը։ Գոնէ տարին երեք անգամ իսրայէլացին զոհերով պիտի երևար ոնէ սրբավայրում։ Նախնական ժամանակներում այդ զոհերը նկատուում էին իբրև Աստուծոյ կերակուր, բայց յետոյ իրաւամբ այն գիտակցութիւնն առաջացաւ, թէ Աստուած կերակրի պէտք չունի, այլ Նրան հարկաւոր է զոհաբերողի ներքին մաքուր երախտագիտական զգացմունքը։ Զոհաբերողը զոհից մի օր առաջ պիտի լուացուէր, մաքրուէր, հանդիսական շորեր հագնէր, վատ գործերից հեռու մնար և այդպէս երևար Աստուծու առաջ։ Զոհի արիւնը, ինչպէս ասինք, քսում էին սեղանին, որպէսզի Աստուած հաշտուէր զոհաբերողի հետ. ապա զոհի միսը այրում էին սեղանի վրայ և երբ նրա ծուխը դէպի երկինքն էր բարձրանում, մարդը մխիթարուում էր այն յոյսով թէ իւր զոհը ընդու-

նելի է եղել։ Զոհի մսից մնացած մասերը ուտում էին քահանաները։

Քահանաներից մի քիչ աւելի նուազ յարգ ունէին ժողովրդի աչքին նախնական մարգարէները, որոնք հանդէս էին գալիս մանաւոր պատահական դէպքերում Աստուծու կամքը ժողովրդին յայտնելու։ Նշանակալից է, որ Իսրայէլի ժողովուրդը վնկութեան և կախարդութեան շատ չէր հաւատում, այլ ընդունում էր, որ իւր Աստուածը ընտիր մարդկանց միջոցով խօսում է իւր ժողովրդի հետ. այդ ընտիր մարդիկ մարգարէներն էին՝ ներշնչեալ առանձնապէս նուիրուած, նրա փառքին նախանձախնդիր մարդիկ։ Ոչ պակաս յարգանք էին վայելում Իսրայէլի մէջ ծերերը, որոնք տոհմի կամ ցեղի ներկայացուցիչներն էին, որոնք և պիտի հակէին ցեղականների, տոհմականների և համայնքի բարի և աստուածահաճոյ կենցաղավարութեան վրայ։ Ծերերի ժողովը քաղաքների կամ գիւղերի հրապարակներում, դռների մօտ վճռում էր համայնքի գործերն ու դատերը։ Որոշ գրաւոր օրէնքներ շատ չկային, այլ առաջնորդուում էին սովորոյթով. յանցաւորին չէին դատում, եթէ բողոքող չլինէր. բողոքողը կամ ամբաստանողը կոչուում էր վկայ։ Ծնողներին կամ թագաւորին հայհոյելը շատ մեծ յանցանք էր համարում և պատժուում

էր մահով. մահուան պատիժը ի գլուխ էին հանում քարկոծութեամբ։ Արեան վրիժառուն իրաւունք ունէր մարդասպանին հետևելու և սպանելու։ Եթէ չարագործութիւնը դիտամբ չէր կատարուած, չարագործը կարող էր մի սրբավայր ապաստանել և ազատուել տուգանք տալով։ Արեան տեղ արիւն, աչքի տեղ աչք և ատամի տեղ ատամ, անա այս էր Իսրայէլի իրաւունքի հիմնականսկզբունքը։ Վրէժով չլուծուած արիւնը կ'բողոքէր երկնքին ու Աստծու բարկութիւնը կ'իջնէր այն աշխարհի վրայ։ Եթէ դաշտում անյայտ ձևով սպանուած մի մարդ գտնուէր և մարդասպանը չյայտնուէր, այն ժամանակ այդ դաշտին մօտիկ գտնուող քաղաքը կամ գիւղը մի կով պիտի զոհ բերէր սպանողի փոխարէն, որպէսզի նրա մեղքը չծանրանար այն երկրի վրայ։ Անէծքը կրօնական ինքնապաշտպանութեան մի միջոց էր. անիծում էին մանաւանդ գողերին։

Մեծ անդամ լինել և ժխական բոլոր իրաւունքները վայելել կարող էր նա միայն, որը զէնք կրել, վրէժ լուծել և պատերազմի գնալ կարող էր։ Միայն զէնք կրողը հնարաւորութիւն ունէր ժառանգութիւն ձեռք բերելու և հարստանալու։ Որբերը, այրիները և օտարականները զրկուած էին ժողովներում ձայնի իրաւուն-

քից։ Երբ նրանց դատը ծերերի ժողովում չէին տեսնում կամ ուղղությամբ չէին դատում, նրանք «Ովսաննա» էին բացականչում, որով օգնություն էին կանչում Թագաւորին, որը երկրի գլխաւոր տէրն էր համարուում։ Բայց Թագաւորները մեծ մասամբ անկարող էին իրենց այս մեծ պարտքը ամեն տեղ լրիւ կատարել. մանաւանդ որ Թագաւորական տները արագ արագ փոխուում կամ ընկնում էին։ Ժամանակի ընթացքում որոշ դասակարգ սկսեց հարստանալ և ճնշել գիւղացիներին։

Ամենահաստատ բանը Իսրայէլի մէջ ընտանիքն էր, որը որչափ բազմանդամ լինէր, այնքան պատուի կարժանանար. ընտանիքի անդամները սիրտ կերպով կապուած էին միմեանց հետ. Թէպէտ բազմակնութիւնը ընդունուած էր, բայց միակնութիւնը գերադասում էին։ Իսրայէլացիք աւելի ընտանիքի յաջորդականութեանն ու անմահութեանն էին հաւատում։ Թագաւորական տունը ամենամեծ տունն էր։ Նորա եկամուտի աղբիւրներն էին ա) մուտք՝ սեփական կալուածներից, որոնք կապալով էին տրուում, բ) Թագաւորական հարկը, որը առաջին խոտի հունձն էր կազմում. դրանից զատ ուրիշ ընդհանուր պարտադիր կանոնաւոր հարկեր չկային, որովհետև տասանորդը պատկանում էր ոչ թէ Թագաւորին՝ այլ Աստ-

ծուն. թագաւորները միայն իրրև բացառութիւն՝ օգտուում էին սրբավայրերի գանձերից պատերազմի կարիքները հոգալու համար։ 3) պատերազմի աւարը, որը եկամուտների մէջ փոքր տեղ չէր բռնում. քանի որ թագաւորը ինքը առաջին կռուողն էր։ Կանոնաւոր զինուորագրութիւն էլ չկար, ամբողջ ժողովուրդը և մանաւանդ հարուստներն էին իսկական զինուորներ համարուում։ Իւրաքանչիւր նշանաւոր կռուող ունէր մի կապարճակիր և կամ վահանակիր. պատերազմի մէջ յետագայում սկսեցին գործածել ձիեր և կառքեր էլ։ Սովորական զէնքեր էին նետը և նիզակը։ Զօրքի վրայ հսկում էր թագաւորից զատ նաև մի ընդ հրամանատար։ Թագաւորական իշխանութիւնը մայրաքաղաքից դուրսը շատ թոյլ էր. սահմանները լաւ չէին պաշտպանուած։

Առ հասարակ իսրայէլացու ամբողջ կեանքը պարզ էր ժանաւանդ սկզբնական ժամանակներում։ Պաղեստին մտնելուց և հաստատուելուց յետոյ՝ նոր նրանք իրենց թափառական կենցաղը փոխեցին և սկսան երկրագործութեամբ պարապել, որը և բաւական ծաղկեցրին։ Պարտէզների, այգիների և դաշտերի մշակութիւնը դարձաւ նրանց զբաղման սիրելի առարկայ. բարի իսրայէլացին ուենչում էր իւր ձեռքով խաղողի այգի

ունկել և հասցնել և կամ իւր ունկած թղենու հովանու տակ հանգչել։ Ցորենի, գարու մշակութիւնը նոյնպէս շատ առաջ գնաց. դորա փոխարէն արհեստները շատ ծաղկած չէին։ Երկրագործ ժողովուրդ լինելով՝ իսրայէլացիք չէին սիրում քաղաքներում բնակուել. ընդհակառակն բաց տեղերում, բլուրների լանջերին, աղբիւրների գլխին ցրուած էին նրանց տները։ Պատ կամ պարիսպ չկար նրանց բնակութիւնների շուրջը։ Վտանգի ժամանակ միայն նրանք փախչում և ապաստանում էին մօտակայ ամրոց։ Տները շինած էին կաւից. լոյսը թափանցում էր տան մէջը երդիկից։ Օջախը տան մէջ չունէր կրօնական նշանակութիւն, ինչպիսին ունէր յոյների մէջ։ Բարձեր, սեղաններ, ժոժակալ և նստարան, սրանք էին սովորական կահաւորութիւնը։ Հագնուում էին նոյնպէս շատ պարզ. ամբողջ հագուստը երբեմն մի վերարկուից էր բաղկացած, որը գործ էին դնում երբեմն նաև իբրև վերմակ։ Կօշիկ հագնում էին, բայց ման էին գալիս մեծ մասով գլխաբաց։ Ուտեստը բաղկացած էր գլխաւորապէս արմտիքից և պտուղներից։ Հասարակ մարդը միս ուտում էր միայն զոհի օրերին՝ տարին երեք անգամ։ Ճաշը տեղի էր ունենում կէս օրին, ուր ձիթապտուղը գլխաւոր տեղն էր բռնում։ Կեանքը այսքան պարզ

էր. վերջերում միայն իսրայէլացիք վաճառականութեան վարժուեցին և դրա շնորհիւ յառաջ եկան նաև քաղաքներ և հարուստ վաճառական դասակարգ, որը իւր համար սկսեց քարէ կամ մարմարիոնէ մի քանի յարկանի տներ շինել և շռայլ ու շուայտ կեանք վարել. ամեն օր կերուխումով և արբեցութեամբ պարապել, անուշահատ իւղերով օծուել, իրենց կանանց չափից դուրս պճնազարդել։ Գնալով հարստի և աղքատի տարաբերութիւնը մեծացաւ. առաջինները ամբարտաւանացած սկսեցին ճնշել աղքատներին և թոյլերին։

Դասակարգային այս մեծ չարիքի և անարդարութեան դէմ սկսեց դարձեալ Իսրայէլի Աստուած Եհովան կռուել. որովհետև նա չէր կարող թոյլ տալ անարդարութիւն իւր ընտրած ժողովրդի մէջ, և նա սկսեց պատժել նրան իւր այս մեծ մեղքի համար։

Ժ. ԳԼՈՒԽ

Սամարիայի թագաւորութեան անկումը

750—722.

Յերոբոամ Բ-ի թագաւորութեան երկրորդ կիսին հիւսիսային կամ Սամարիայի թագաւո-

բութիւնը արտաքուստ հզօր և փառաւոր էր երևում։ Դամասկոսի արամէացիք ուժասպառ էին եղել և չէին կարող այլևս Իսրայէլի պետութեան վտանգ սպառնալ։ Այնտեղ խաղաղութիւն էր թագաւորում և ժողովուրդն սկսել էր հարստանալ, բարգաւաճել և ապագայի վառ յոյսերով, ոսկի երազներով օրօրուել։ Բայց այս ամենը միայն խաբուսիկ երևոյթ էր, որովհետև թէպէտ պետութիւնը արտաքուստ անվրդով և հզօր էր երևում, ներքուստ ընդհակառակն ամեն ինչ խախուտ էր և փտած։ Ժողովուրդը բաժանուում էր երկու խոշոր դասակարգերի՝ հարստի և աղքատի։ Երկրի հարստութիւնը կիտուել էր փոքրաթիւ ազնուական ընտանիքների ձեռքին, որոնք բնակուում էին Սամարիայում և այլ մեծ քաղաքներում. ունէին հոյակապ ապարանքներ, իրենց ձեռքն էին կենտրոնացրել պետութեան գլխաւոր պաշտօնները, բայց վարում էին փարթամ, շուայտ և դատարկապորտ կեանք։ Իրենց դիրքի և պաշտօնի շնորհիւ անպատիժ կողոպտում էին ժողովրդին. չէին պաշտպանում արդարութիւնը, այլ կաշառքներ վերցնելով աղքատի դատը կամ չէին կտրում և կամ նրան զրկում էին։ Օրերով և տարիներով այս կեանքով ապրելով ժողովրդի վարիչները բթացել էին, ոչ երկրի ներքին աւերն էին տեսնում և ոչ էլ

հեռաւոր արեւելքից մօտեցող ասորեստանցոց ապառնալից վտանգն էին կռահում։

Այս պայմաններում Ամոս մարգարէի երևան գալը հրաշալի բնաւորութիւն ունի։ Յուդայի թագաւորութեան պատկանող Թեկուա գիւղացի էր նա։ Ինքը իւր համար վկայում է «Ես ոչ մարգարէ էի և ոչ մարգարէի որդի. այլ հովիւ էի և թութ էի հաւաքում. բայց Տէրն ինձ խլեց իմ հօտերից և ասաց. գնա և մարգարէացիր իմ Իսրայէլի ժողովրդի մասին»։ Եւ այս հովիւը մի ուռնախմբութեան ժամանակ Իսրայէլի նշանաւորագոյն սրբավայր Բէթէլում հանդէս եկաւ յայտարարելու հրճուող ամբոխին. «ընկել է Իսրայէլի տունը և այլևս չի կանգնի. իւր երկրի վրայ ընկաւ Իսրայէլի կոյսը և ոչ ոք չկայ, որ բարձրացնէ նրան» (Ամոս Ե. 1 3)։ Եւ ինչպէս կարող է ապատուել այն ժողովուրդը, որը իւր անարդար և անբարոյական կեանքով զարմացնում, ապշեցնում էր մինչև իսկ ասորեստանցիներին և եգիպտացիներին, որոմնեան Իսրայէլի շարութիւնն ու եղեռնագործութիւնը անցել է ամեն չափ ու սահման։ Այս ժողովրդի հարուստ դասակարգը առաւօտից մինչև երեկոյ նեղում, զրկում է ազքատներին։ Նրանք ապատում են, որ անցնեն շաբաթ և ուռն օրերը, որպէսզի սկսեն իրենց

խայտառակ առևտուրը. կշեռքը խաբդախեն, ապրանքը կեղծեն, շլաված տոկոսներով պարտք տան, աղքատին մի գոյդ կոշկի գնով ծախեն, կաշառք առնեն և խեղճերին, որբերին և այրիներին մեղաւորցնեն։ Ահա այսպիսի միջոցներով աշխատում են հարստանալ, ապարանքներ շինել, այգիներ տնկել, փղոսկրեայ գահաւորակների վրայ քնել, հորթի և ուլի փափուկ մսերով կերակրուել, գտուած գինին էլ վրայից խմել, անուշահոտ իւղով օծուել, քէֆ անել ու պար գալ սրինգների նուագածութեամբ։ Նրանք ժամանակ չունին հոգալու ժողովրդի վրայ. չեն նկատում իրենց ազգի անկումը։ Նրանց այսպիսի շռայլ ու շուայտ կեանքի վարժեցնող և դրդողը նրանց կանայքն են, Բաասանի երինջները, որոնք իրենց ամուսիններին ասում են, գնացէք, գրկեցէք աղքատին, ոտի տակ տուէք տնանկին, միայն թէ մեզ գինի տուէք, որ խմենք։ Եւ այս բոլորի հանդէպ մինթէ կարող է լուռ մնալ Իսրայէլի ամենակարող Աստուածը, որ գիշերն և ցերեկն է ստեղծել, որ շարժում է երկինքն ու երկիրը ու ծովի ջրերը, որ բարձունքում *իրատունք* է ստեղծել և *արդարութիւնը* երկրի վրայ։ Եթէ անտառում առիւծը գոչում է, նշանակում է նա որս է արել, եթէ թռչունը երկնքից վեր է ընկնում, նշանակում

է, որսորդը նրան խփել է, և եթէ Ամովս մարգարէանում է այս ժողովրդի կործանումը, նշանակում է Տէր Աստուածն է խօսել և յայտնել նրան իւր կամքը։ Նրա սուրբ կամքն է, որ այս ժողովուրդը, որին ինքն է Եգիպտոսից հանել և ամեն նեղութիւնից ազատելով բերել բնակեցրել Քանանում, ընկնի, ոչընչանայ։ Որովհետև Աստուած բոլոր ժողովուրդներից Իսրայէլին է ընտրել և արտակարգ կերպով խնամել, դրա համար էլ աւելի վրէժխնդիր պիտի լինի նրանից նրա մէջ գործուած բազմաթիւ չարիքների համար։ Անցեալում Աստուած յաճախ է խրատել այս ժողովրդին զանազան միջոցներով, երբեմն մարգարէներ ուղարկելով, որ իւր կամքը յայտնեն և զարձի բերեն, երբեմն էլ սովով և երաշտով, հիւանդութեամբ և բնական պատահարներով պատժելով, որ խելքի գան. սակայն և այնպէս ժողովուրդը չի կամեցել ուղղուել. մարգարէներին պատուիրել է չմարգարէանալ. իսկ պատիժներից խուսափելու համար նա դիմում է զանազան սրբավայրեր, Բէթէլ և Գաղգաղա ողջակէզ անելու, զոհեր մատուցանելու և այսպիսով Տիրոջ սիրտը շահելու։ Այն ինչ Աստուած ատել մերժել է ամեն տեսակի ոճն, չի ընդունում ոչ ողջակէզ և ոչ զոհ. այդ ատթիւ երգած երգ ու նուագա-

ծութիւն չի ուզում լսել։ Այսպիսի բան Աստուած երբէք չի ցանկացել և դրանով կարելի չէ հաճելի լինել նրան և փրկուել։ Փրկուելու միակ պայմանը, քարին որոնելը եւ շարը մերժելն է։ Պէտք է իրաւունքը ջրի պէս յորդի եւ արդարութիւնը անհուն հեղեղի նման։ Ուրիշ բանի վրայ յոյս դնել չի կարելի։ Անմիտ և սխալ է ժողովրդի այն հաւատը, թէ Եհովան իրեն առանձնապէս ընտրել է, նա չի կարող նրան ոչընչացնել, նա նրա համար պատրաստել է փառաւոր օր. «Տիրոջ օրը», երբ Իսրայէլը կատարելապէս պիտի երջանկանայ։ Վայ այսպէս կարծողներին, վայ նրան, որ ցանկանում է, որ «Տիրոջ օրը» շուտ գայ։ Իսրայէլի որդիները խափշիկներ են Տէր Աստուծու համար, քանի որ նրանք չարութիւն են գործում։ Սրանք չեն իմանում, որ «Տիրոջ օրը» խաւար է և ոչ լոյս, ոչ մի լուսաւոր ճառագայթ չկայ այնտեղ։ Այդ օրը ժողովուրդը նման կըլինի այն մարդուն, որը կամենալով առիւծից փախչել, ճանապարհին արջի է պատահում, և եթէ նրանից էլ պրծնի և տուն հասնի պատին յենուելով կամենայ շունչ քաշել, օձը պիտի կծի։ Այսպէս սարսափելի է այն օրը և ժողովրդի կորուստը անխուսափելի։ Նա այն օրը առիւծի բերանը ընկած գառան կ՚նմանի, որից ողջ կտորը ականջի փլթակն է մնում միայն։

Իսրայէլը հասած թուզի է նման, որը այլևս գոյութեան ունենալու իրաւունք չունի։ Աստուած որմնադրի նման ադամանդեայ լարադնդով չափել և գտել է, որ այդ ազգի մէջ ամեն ինչ ծուռն է, ուրեմն հիմքից պիտի քանդել։ այդ է պահանջում Աստուծու արդարութիւնը։ Պիտի կործանել Իսրայէլի քաղաքները հրով և սրով, այնպէս որ նրանց բնակիչներից հազարից մէկը մնայ։ Պիտի քանդել Բէթէլի և Գաղգալայի սրբավայրերը, որոնք Իսրայէլի հպարտութիւնն են կազմում և անբարոյականութեան վայրեր են։ Պիտի կործանել փառաւոր պալատները և իշխաններին կոտորել, որոնք ասում են, թէ մենք մեր զօրութեամբ ենք այսպէս մեծացել։ Ամեն տեղ հրապարակներում, կոծ պիտի անեն և վայ տէր պիտի կանչեն, սուգ անեն. բայց արդէն ուշ կ՚լինի։ Այս բոլոր չարիքը Աստուած պիտի բերի ժողովրդի վրայ ասորեստանցիների ձեռքով. որոնք պիտի գան, ժողովրդի մեծ մասին կոտորեն, երկիրը աւերակ պիտի դարձնեն, իսկ մնացորդներին էլ պիտի գերի տանեն Ասորեստան։

Ամոս մարգարէի այս քարոզութիւնը Բէթէլում մեծ յուզմունք առաջ բերեց։ Այդ սրբավայրի քահանան, Ամասեան գնաց, Յերոբո-

վամ թագաւորին յայտնեց, թէ ժողովուրդը Ամովսի ճառերից յուզուած է։ Թագաւորը ուղարկում է քահանային, որ գայ Ամովսին ասի. հեռացիր, տեսանող, թագաւորական սրբավայրից, գնա քո Հրէաստան և եթէ կուզես այնտեղ մարգարէացիր։ Ամովս վերադառնում է իւր հայրենիքը լիովին համոզուած իւր ասածների ճշմարտութեանը, գրի է առնում իւր քարոզը, որ ապագայ սերունդը իմանայ։ Նրա մարգարէական գործունէութիւնը տեղի ունեցաւ 860—850 թուերին։

Նորա գործը շարունակեց Բերրի որդին Ովսեան։ Իսրայէլի վերջին հզօր թագաւոր Յերոբոամ Բ-ի մահուանից յետոյ՝ նրա գահի շուրջը բռնկուեցին ազգամիջեան կռիւներ, որի պատճառով Յերոբոամի որդին գահից զրկուեց։ Մի իշխան Մենախեմ անունով վերջապէս կարողացաւ գահը ձեռք ձգել 745-ին։ Բայց այդ ժամանակ ասորեստանցոց՝ Տեկլաթ—Պալասար կամ Փուլ թագաւորը արշաւեց Պաղեստինի վրայ և Մենախեմ դարձաւ նրան հարկատու, որով կարողացաւ մի առժամանակ մնալ իւր գահի վրայ։ Բայց յետոյ կամենալով հարկատուութիւնից ազատուել՝ դաշն կապեց եգիպտացիների հետ, որոնք խոստացան իսրայէլացոց օգնել, որով ուզում էին ասորեստացոց յառաջխաղացու-

թեան ճանապարհը դէպի Միջերկրական ծովը և դէպի Եգիպտոսը փակել։ Մենախեմի մահից յետոյ գահն անցաւ նրա որդուն Պեկախիային, բայց սրա թիկնապահը Փակէն սպանեց նրան և ինքը թագաւոր դարձաւ նրա տեղը 736-ին. ապա դաշնակցելով Դամասկոսի Ռասոն թագաւորի հետ արշաւեց Յուդայի վրայ, որպէսզի այս թագաւորութեանը ստիպեն իրենց հետ միանալ ասորեստացւոց դիմադրելու համար։ Բայց Յուդայի թագաւոր Աքազը դաշնակիցների սպառնալիքից ազատուելու համար դիմեց Տեկլաթ-Պալասարի օգնութեանը, որը 734-ին արշաւեց Դամասկոսի վրայ, աւերեց Ասորիքն ու Գալիլեան. սամարացիներից պահանջեց հարկ և իրենց թագաւորի գլուխը։ Սամարիայի իշխաններից մէկը Ովսէն կատարելով այդ պահանջները սպանեց Փակէին և ինքը դարձաւ նրա տեղը թագաւոր ասորեստանցոց հարկատու։ Այս վիճակում մնաց նա մինչև Տեկլատ—Պալասարի մահը։ Մէկ միւսին յաջորդող այս բռնակալ թագաւորները ոյժ չունէին իրենց պետութիւնը արտաքին թշնամիների յարձակմունքներից պաշտպանելու և ոչ էլ կարող էին ժողովրդի մէջ իրաւունքի և արդարութեան պաշտպան հանդիսանալ։

Այս քաղաքական խառնաշփոթութեան ժա-

մանակը մարգարէացաւ Ովսէն, որը ամուսնացել էր մի գեղեցիկ կնոջ հետ։ Մարգարէն իւր կնոջը շատ էր սիրում և ամեն կերպ աշխատում էր, որ իւր կինը երջանիկ լինի. բայց հակառակ այդ բոլորին կինը դաւաճանում է իւր ամուսնուն։ Ընտանեկան այս մեծ դժբախտութիւնը Ովսէին մարգարէ է դարձնում։ Նա նայում է իւր ժողովրդի վրայ և այստեղ էլ նկատում է նոյն երևոյթը։ Աստուած ընտրել և սիրել է այս ժողովրդին և պատուիրել է նրան կրօնական բարոյական կեանքով ապրել, բայց ժողովուրդը դաւաճանում է նրան օտար աստուածների յետևից գնալով և անբարոյականութիւն ու անարգարութիւն գործելով։ Չկայ այս ժողովրդի մէջ ոչ ճշմարտութիւն, ոչ ողորմութիւն և ոչ էլ աստուածաճանաչութիւն. այն ինչ անէծքն ու ատութիւնը, սպանութիւնը, գողութիւնն ու շնութիւնը հեղեղել են երկիրը։ (Ով. Դ. գլ.)։ Մարգարէն ու քահանան մոռացել են Աստուծու օրէնքը և մերժել աստուածածանութիւնը։ Դորա փոխարէն նրանք բոլորովին հարբած՝ զոհ են անում լեռների բարձունքների վրայ հովանաւոր ծառերի տակ և կախարդութեամբ և պոռնկութեամբ են պարապում։ Նրանք չեն մտածում, որ «*Աստուած ողորմութիւն է կամենում եւ ոչ զոհ*»։ Այդ պատճառով Աստուած պիտի կո-

տորի քահանաներին և մարգարէներին, իշխաններին և թագաւորներին, որովհետև բոլորն էլ հարբած են և իրենց զօրութեամբ են պարծենում. և չնայած որ նրանց թագաւորները մէկ միւսի յետևից ընկնում են, օտարները նրանց ընկճում են, բայց նրանք անմիտ ապաւնու նրման իրենց յոյսը երբեմն Եգիպտոսի և երբեմն ասորեստանցոց վրայ են դնում և դէպի իրենց Տէր Աստուածը չեն դառնում (գլ. Ե.)։ Այս բոլորի պատճառով Սամարիան պիտի ապականուի. երիդասարդներին պիտի սուրը լափի, ամուսնները քարի պիտի խփուեն, ամբողջ երկիրը սուգ պիտի անի։ Այս բոլոր դժբախտութիւնների ժամանակ Իսրայէլին ոչ պիտի օգնի, ուր է նրա թագաւորը, որ փրկի նրան և իրաւունք պաշտպանի (ԺԳ. գլ. 7—11)։

Ոչնչն իրաւունք ունէր. այդ ընկած դրութեան մէջ գտնուող Իսրայէլի պետութիւնը շուտով պիտի կործանուէր ընդմիշտ։ Տեկլաթ—Պալասարի մահից յետոյ Ոչնչ թագաւորը յոյս դնելով եգիպտացիների օգնութեան վրայ Ասորիքի միւս մանր պետութիւնների հետ ապստամբեց ասորեստանցիներից։ Տեկլաթի յաջորդը Սալմանասար IV-ը յարձակուեց Իսրայէլի վրայ։ Եգիպտացիք օգնութեան չեկան. Ոչնչն մի պատերազմում գերի ընկաւ. Սամարիան պաշարուեց,

բայց դիմացաւ 3 տարի և միայն Սամմանասարի յաջորդ Սարկոնի օրով անձնատուր եղաւ 721 թուին։ Այսպէս կործանուեցաւ Իսրայէլի թագաւորութիւնը. ժողովուրդը գերի գնաց Ասորեստան, ուր նրանք խառնուեցին հեթանոսների հետ և անհետացան։

ԺԸ. ԳԼՈՒԽ

Յուդայի թագաւորութիւնը եւ նրայի մարգարէն

Յայտնի է, որ 980 թուին Սողոմոնի մահուանից յետոյ Իսրայէլի թագաւորութիւնը երկու մասի բաժանուեց։ Դրանցից առաջինն էր Սամարիայի թագաւորութիւնը, որը կործանուեց 721-ին, իսկ երկրորդը Յուդայի կամ Երուսաղէմի թագաւորութիւնը, որը թէպէտ աւելի թոյլ էր, բայց աւելի երկար պահեց իւր գոյութիւնը։ Այստեղ թագաւորական տունը Դաւթի տունն էր։ Թէպէտ Երուսաղէմումն էլ խռովութիւններ դահի շուրջը պակաս չէին, բայց որովհետև Դաւթի անունը հեղինակաւոր էր, այդ պատճառով դահը միշտ էլ մնաց նրա սերունդներին։

Ռոբովամին յաջորդող մի շարք թագաւորներ, ինչպէս Ասա, Յոսափատ և ուրիշներ, Իսրայէլի թագաւորներից կախումն ունէին։ Սամարիայի Յերոբոամ Բ. թագաւորի ժամանակ

Երուսաղէմում թագաւորում էր Ոզիան. նորա երկարատև իշխանութեան ժամանակ Յուդայի թագաւորութիւնը սկսեց ծաղկել։ Նորա որդին և յաջորդը Եօթամը շուտ մեռաւ, իսկ թոռը Աքազը աւելի երկար իշխեց։ Իսրայէլի նկատմամբ Յուդան մի առաւելութիւն ունէր։ Նախ՝ այստեղ Երուսաղէմում թագաւորող Դաւթի տունը հաստատուն էր։ Այստեղի ազնուականութիւնը շատ ուժեղ չէր և շատ ճնշում չէր կարող գործել թագաւորների վրայ, որոնք իրենց ապահովութեան համար պահում էին վարձկան զինուորներից մի անձնապահակախումբ։ Յետոյ պիտի ասել, որ այս թագաւորութեան մայրաքաղաք Երուսաղէմը Յուդայի քաղաքական և կրօնական միակ կենտրոնն էր. Տաճարը և թագաւորական պալատը տպաւորութիւն էին թողնում ժողովրդի վրայ։

Ոզիայի թագաւորութեան ժամանակ հանդէս եկաւ Եսայի մարգարէն, որը Ամովսից և Ովսէից տարբերուում էր իւր ազնուական ծագումով և այդ դիրքի պատճառով էլ կարողանում էր ազդել կառավարութեան վրայ։ Մարգարէական կոչումը նա ձեռք է բերում մի տեսիլքի միջոցով Ոզիայ թագաւորութեան մահուան տարում՝ 740-ին։ Նա տեսնում է Իսրայէլի Տէր Աստծուն մի բարձր աթոռի վրայ նստած, սե-

բոմբէններով շրջապատուած, որոնք իրենց երկու զոյգ թևերով ծածկում էին իրենց ոտներն ու դէմքերը, իսկ երրորդ զոյգով թռչում էին երգելով «Սուրբ, սուրբ, սուրբ, աշխարհը լի է Տիրոջ փառքով»։ Այս վեհ և սրբազան տեսարանի առաջ մարդկային մեղանչականութեան գիտակցութեամբ լի մարգարէն Տիրոջ այրող, ոչընչացնող սրբութեան առաջ իրեն կորած է համարում. բայց սերոմբէններից մէկը նրա շրթունքներին ատուածային կրակ է մօտեցնում և այդպիսով սրբում է մարգարէին ու արժանի կացուցանում նրան Տիրոջ առաքեալ և մարգարէ լինելու։ Այսպէս ատուածային կրակով սրբուած Եսային պիտի դուրս գար ժողովրդին յայտնելու իւր Տէր Ատուծու կամքը։ Այդ նշանակում է, որ նա դարձաւ մարգարէ (Ես. Զ. 1--13)։

Եսայու մարգարէական գործունէութիւնը սկսուում է 740-ից և վերջանում 701-ին, որը կարելի է բաժանել չորս շրջանի.

Ա. 740—734 մինչև դաշնակիցների արշաւանքը Յուդայի վրայ։

Բ. մինչև Սամարիայի անկումը 734—721 թ.

Գ. մինչև Յուդայի դաշնադրութիւնը. Եգիպտոսի հետ 721—704.

Դ. Եգիպտական դաշնադրութիւնը Սենեքերիմի արշաւանքը 704—701.

Ա. Եսային իւր հրապարակական գործունէութիւնը սկսում է իւր բարեկամի այն երգը երգելով, որ նա նուիրել է իւր սիրելի այգուն։ Հաւանօրէն ուսնական մի մեծ բազմութեան առաջ երգում է նա այն պարարտ այգու մասին, որին տէրը ցանկով պատել, ձողերով զարդարել, սորեկ որթ է տնկել. մէջը աշտարակ է շինել և հնձան փորել և սպասել է, որ քաղցր խաղող բերի, իսկ նա ազոխ է բերել. թող Յուդայի և Երուսաղէմի բնակիչները դատ անեն, թէ ինչ կարող էր այգու տէրը անել և չի արել. իսկ եթէ ամեն բանը արուած է, ինչու փուշ բերեց։ Այսպիսի ապերախտ այգու ցանկերը պէտք է քանդել, պարիսպները կործանել, որպէսզի ոտնակոխ լինի և խոպան դառնայ. պէտք է պատուիրել նոյնիսկ ամպերին, որ անձրև չթափեն նրա վրայ։ Այսպէս պիտի խոպան, աւերակ դառնայ Աստծու այգին՝ Իսրայէլի ժողովուրդն ու երկիրը, որի վրայ Աստուած այնքան հոգս է քաշել և սպասել է, որ այնտեղ իրաւունք և արդարութիւն աճի, բայց դորա փոխարէն խռովութիւնն՝ անիրաւութիւնն է արձագանգել (Ե. 1—7)։ Որովհետև այնտեղ մարդիկ ագահ են, աշխատում են տուն տան մօտեցնել և ագարակ ագարակի կպցնել, որպէսզի ընկերին տեղահան անեն։ Կարծում են, մենակ պիտի

բնակուեն այս երկրի վրայ։ Չեն իմանում, որ Տէրը վերից տեսնում է և վճռել է երկիրը աւերակ դարձնել։ Ինչքան էլ նրանք աշխատեն մեծամեծ և գեղեցիկ տներ շինել, այնուամենայնիւ անբնակ պիտի մնան, իսկ արտերը և ագարակները անպտուղ պիտի լինեն։ Վա՜յ նրանց, որոնք առաւօտից մինչև երեկոյ գինի և օղի են խմում, իրենց աչքերը չեն բաց անում Տիրոջ գործը տեսնելու համար։ Վա՜յ, որ ասում են, թող Իսրայէլի Աստուածը իւր անելիքը շուտ անի, որ տեսնենք. նրանք չեն հաւատում Տիրոջ դատաստանին. նրանք չարին բարի են ասում, բարիին չար, քաղցրին դառն, իսկ դառը քաղցր. որովհետև իրենք իրենց աւելի իմաստուն են համարում. բայց վա՜յ այս ժողովրդի իմաստուն ներին, հզօրներին և իշխաններին, որոնք գինի և օղի են խմում, ամբարշտից կաշառք առնելով արդարացնում են, արդարի իրաւունքը զոհանում։ Ինչպէս կրակն այրում է եղէգն, այնէլ նրանց արմատը ժղեղ պիտի դառնայ, իսկ ծաղիկը փոշի. որովհետև Աստուծու կամքը չկատարելով բարկացրին նրան, որը իւր ձեռքը բարձրացրել ու հարուածում է. և չնայած որ այս ժողովրդից ընկածների դիակները ճանապարհի աղբ դարձան, բայց այնուամենայնիւ նրա բարկութիւնը չի իջել և նրա ձեռքը դեռ

բարձրացած է։ Ինչքան հարստացաւ Յակոբի տունը՝ Իսրայէլի ժողովուրդը, այնքան ապականուեց, այնքան հպարտացաւ. այդ պատճառով Զօրութեանց Տէրը մի օր պիտի բերի Սամարիայի վրայ, երբ այնտեղի ամէն բարձրութիւն խոնարհուի։ Ա՞ւմ հետ են ուզում չափուել նրանք։ Անա հեռաւոր երկրից նա մի ազգ է վեր կացրել և բերում է, որոնք արագ և թեթև թռչում հասնում են, չեն քաղցում, չեն յոգնում, չեն քնում, իրենց մէջքի գօտին և կօշկի կապերը չեն արձակում. նրանց նետերը սրուած են աղեղները լարուած։ Առիւծի պէս են գիմերու, գազանաբար գոչերու, ծովի ալիքների պէս գոռալու, և երբ նրանք հասնեն, այս ժողովրդի գլխին երկինքն ու երկիրը պիտի սեռնայ։ Ինքը ժանն է յարձակուել Յակոբի տան՝ Իսրայէլի վրայ, և թող զգան Եփրեմի և Սամարիայի ամբարտաւանները, որոնք ասում էին. ոչինչ, եթէ աղիս է դուրս ընկել մեր շէնքից, մենք տեղը սրբատաշ քարեր կդնենք, եղեւնափայտերով և մայրիներով մեզ համար պաշտպանութիւն աշտարակ կշինենք և այս ասողները նրանք էին, որոնք ժողովրդին ուտում, կուլ են տալիս՝ բերանը արշին բաց արած։ Այս բոլորի համար Աստծու զայրոյթը չի շիջել, և բա ձեռքը դեռ երկարացած է։ Նա դեռ պիտի

հարուածի անխնայ փոքրին և մեծին, ծերին և երիտասարդին։ Նոյնիսկ որբին, այրուն չպիտի ողորմի. որովհետև բոլորեքեան անիրաւ են և սուտ են խօսում։ Նրա բարկութեան առաջը ամբողջ երկիրը կրակի պիտի մատնուի. եղբայր եղբօրը չի ողորմելու. քաղցից պիտի կամենայ աջ ու ձախ կրծել, բայց իւր բազկի միսը ուտելուց յետոյ էլ չպիտի յագենայ։ Եփրեմ Մանասէին է ուտում, Մանասէն Եփրեմին, երկուսը միասեղ Յուդային. ինչ պիտի անեն Աստուծու այցելութեան օրում. ո՞ւմ մօտ պիտի փախչեն օգնութիւն գտնելու։ Այս բոլոր դըժբախտութեան հանդէպ Աստծու բարկութիւնը դեռ չի իջել և նրա ձեռքը դեռ բարձրացել է հարուածելու։

Այն հիւսիսային ժողովուրդը, որոնց մասին խօսում է Եսային, ասորեստանցիքն են, որոնք ութերորդ դարու երկրորդ կիսին սպառնում էին կործանել Դամասկոսի և Սամարիայի թագաւորութիւնը։ Եւ Եսային մարգարէանում է, որ Դամասկոսը պիտի կործանուի, աւերակ դառնայ. որովհետև նա լաւ չէ Սամարիայի թագաւորութիւնից, որի փառքը նոյնպէս պիտի նուազի և պիտի նմանուի այն ձիթենու ծառին, որի բազմաթիւ պտուղներից միայն մի երկուսն են մնացել ճիւղերի գլխին։ Սամարիայի թագաւո-

բութեան քաղաքները աւերակը պիտի լինեն, որովհետև անհաւատութեան տունկ մնկեց և սերմեր ցանեց, դատարկաձեռն և քաղցած մընաց (Բ. 6—22 Թ. 7—4 Ե. 26—30 ԺԷ. 1—11)։

Չնայած որ ասորեստանցիք իրենց թաթը պարզել էին դէպի արևմուտքը և սպառնում էին Դամասկոսն ու Սամարիան իրենց ճանկերի մէջ ճմլել, այնուամենայնիւ այս վերջիններները իրենց խղճալի դրութիւնը չտեսնելով՝ դաշնակցել էին միմեանց հետ, ուզում էին ընդդիմանալ նրանց, և որպէսզի աւելի յաջողութիւն գտնեն, կամենում էին, որ Յուդան էլ իրենց հետ միանայ. և երբ Յուդայի թագաւորը չէր ցանկանում նրանց ապստամբութեանը մասնակցել, դաշնակիցները՝ Դամասկոսի Ռասիմ և Սամարիայի Փակէ թագաւորները՝ արշաւեցին 734-ին Յուդայի վրայ՝ Աքազին էլ ստիպելու, որ իրենց հետ միանայ։ Դաշնակիցների այս արշաւանքի լուրը շփոթեցրեց թագաւորին, և նա նրանից ազատուելու ուրիշ հնարք չգտնելով՝ մտադրուեց ասորեստանցոց Տեկլաթ Պալասարից օգնութիւնը խնդրելու։

Ահա այս միջոցին Եսային պատուէր է տանում Աստծուց՝ դուրս գալ Աքազի առաջ իւր որդու հետ և յայտնել նրան իւր կամքը։ Այս քաղաքական դէպքով սկսում է Եսայու երկրորդ շրջանը։

Բ. Զգոյշ եղիր, հանդարտուիր և մի վախենա, ասում է Եսային թագաւորին. դաշնակից թագաւորները փայտի երկու ծխացող խանձողներ են, ոչ աւելի։ Զէ՞ որ արամայեցոց գլուխը Դամասկոսն է, իսկ Սամարիայի տէրը՝ Փակէն։ Սրանք ինչ են, որ մարդ նրանցից վախենայ, եթէ չես հաւատում, մի նշան խնդրիր Աստծուց։ Եւ երբ թագաւորը չհաւատալով Եսայու խօսքին, նշան էլ չի խնդրում, որպէս թէ չուզենալով Աստծուն փորձել, գայրանում է մարգարէն և ասում, որ իւր խօսքերի հաստատութեան համար՝ ինքը մի նշան պիտի տայ. այն է՝ շուտով մի երեխայ է ծնուելու՝ անունը Էմմանուէլ. այդ երեխան դեռ չարն ու բարին չճանաչած, այսինքն մօտաւորապէս 3 տարեկան չեղած, Յուդան կազատուի՝ այդ երկու թագաւորներից (է. 1—16)։

Ինչպէս երևում է, մարգարէի այս խօսքերի վրայ թագաւորն ուշադրութիւն չդարձրեց. այն ինչ Եսային իւր ասածի ճշմարտութեանը խիստ համոզուած էր. այդ պատճառով նա մի տոմս է վերցնում և վրան գիւրընթեռնելի կերպով գրում է «Արագ արագ աւար վերցնել և շտապով կողոպուտ հաւաքել»։ Այս տոմսը, այլ և ուրիշ հաւատարիմ մարդիկ, ինչպէս Ուրիա քահանան և Բարուքի որդին Զաքարիան, պիտի

վկայեն, որ Դամասկոսի և Սամարիայի վերջը հասել է։ Բացի այս նշաններից մարգարէն մի որդի է ունենում և անունը դնում է «Մահէլ Շալալ Հաշ Բազ» այսինքն՝ «Արագ արագ կողոպտիր և շուտ շուտ աւար վերցրու» և այս երեխայի հայրիկ, մայրիկ ասել կարողանալուց առաջ՝ ասորեստանցոց ձեռքով Դամասկոսը պիտի կործանուի և Սամարիան պիտի աւերուի։ Բայց մարգարէն դէմ էր ասորեստանցոց օգնութեան դիմելուն. նա խորհուրդ էր տալիս հաւատալ և հանգարտուել։ Յոյսդ դիր, ասում էր նա թագաւորին, Սելոմի գետակի վրայ. իսկ եթէ Եփրատի և Տիգրիսի ջրերից ես ախորժում, Աստուած այդ մեծ գետերի ջրերը—ասորեստանցոց,—բաց կթողնի այս երկրի վրայ, և յորդացած ջրերը կլեցնեն ձեր երկրի տարածութիւնն ու կաւերեն։ Այն ինչ դամասկոսցիք, այդ հեթանոսները, ոչինչ չեն կարող անել, որովհետև Աստուած մեզ հետ է։ Սրանց կազմած խորհուրդը գլուխ չի գայ. սրանք կպարտուեն, որովհետև մեզ հետ է Աստուած։ Միայն Աստծուց պիտի վախենալ և Նրան հաւատալ։ Զգէտք է դիմել վհուկներին և կախարդներին, որոնք կենդանի մարդկանց վիճակի մասին մեռելներին են հարցնում. ես և իմ երեխաները, ասում է Եսային, վկայ կլինենք Զո-

բութեաց տէր Իսրայէլի Աստուծու գործերին, որ նա անելու է Սիոնում։

Եսային խորհուրդ չէր տալիս Աքազին դիմել ասորեստանցոց օգնութեան նրա համար, որ կարծում էր, թէ նրանց գալով թերևս դաշնակիցներից առաջ գալիք վտանգը վերանայ, բայց դրա փոխարէն նա վախենում էր, որ ասորեստանցիների երևալը և Պաղեստինի գործերին խառնուելը պիտի գրգռի Եգիպտացիներին, որոնք պիտի մրցեն իրենց հզօր ախոյանի հետ. իսկ այս երկու հզօր պետութիւնների մրցման մէջ Յուդան կուսակցաբար կրգառնայ, կաւերուի։ Եւ նա իրաւունք ունէր։

Աքազը նրան չլսեց և դիմեց Տեկլաթ Պալասարի օգնութեան։ Ասորեստանցիք եկան 732-ին, կործանեցին Դամասկոսը, իսկ տաս տարի յետոյ ընկաւ նաև Սամարիան 721-ին։ Յուդան էլ արժան չպրծաւ. նա էլ դարձաւ ասորեստանցոց հարկատու։

721 թուից յետոյ Եսայու մարգարէութիւնը վերաբերում է միմիայն Յուդային և Երուսաղէմին։ Հիւսիսային թագաւորութիւնը՝ Սամարիան կամ կորսուում է աչքից և կամ բերում է իբրև օրինակ. որովհետև Երուսաղէմն ու Յուդան Սամարիայի վիճակից չիրատուեցին, ընդհակառակն սկսեցին զոռոզանալ։ Այն հանգա-

մանքը, որ Յուդան համեմատաբար թեթև պըրծաւ վտանգից, երես տուեց Երուսաղէմի տիրապետող դասակարգին և նոքա իրենց հարստութեամբ յղփացած՝ վարում էին այն անհոգ և անբարոյական կեանքը, որը առաջ իշխում էր Սամարիայում։ Այս անմիտ կեանքի հանդէպ վրդովուած մարգարէն գուշակում է, որ Երուսաղէմն ու Յուդան էլ պիտի պատժուին, որ Աստծու արդարութիւնը չի կարող համբերել և չպատժել այս անպատկառ ժողովրդին, որը փոխանակ իւր փրկութեան համար շնորհակալ լինելու իւր Աստծուց, կամենում է Եգիպտոսի հետ դաշնակցել և այդ ձևով իրեն ապահովել։ Այսպիսով սկսում է Եսայու մարգարէութեան երրորդ շրջանը։

Գ. Զօրութեանց Տէրը, ասում է Եսային, Հրէաստանում և Երուսաղէմում չպիտի թողնի զօրաւոր և խելօք մարդ, ոչ պատերազմող, ոչ դատաւոր, ոչ մարգարէ, ոչ սքանչելի խորհրդական, ոչ իմաստուն ճարտարապետ և ոչ հանճարեղ ունկնդիր։ Մանուկներն ու խաբեբաներն այս ազգին իշխան պիտի լինեն, անիշխանութիւն պիտի տիրի։ Ընկերը ընկերոջ դէմ, մանուկը ծերի դէմ, անարգը պատուականի դէմ պիտի դառնայ։ Մարդիկ պիտի ման գան և մի ձեռք հագուստ ունեցողին բռնեն և ասեն. արի, մեզ իշ-

խան եղիր, իսկ նա պիտի ասի. տանս հաց չունեմ, այս ժողովրդի վրայ իշխան չեմ կարող լինել։ Այսպէս պիտի աղքատանայ Երուսաղէմը, որովհետև անօրէն է ժողովուրդը. արդարին կապում են ասելով թէ անտանելի է դարձել։ Հարկահաններըը ճռաքաղ են անում, բռնաւորներն տիրում են։ Զօրութեանց Տէրը դատաստան պիտի անի այս ժողովրդի, նրա ծերերի և իշխանների վրայ. ինչպէս էք հրկէզ արել իմ այգին. ձեր տներումն է տնանկից կողոպտածը. ինչպէս էք զրկում իմ ժողովուրդին և աղքատին ամօթով թողնում։ Երուսաղէմի կանայք, ինչպէս երբեմն Սամարիայում, ամենից աւելի են հպարտացել, վզները բարձր բռնած ճեմում են, աչքով ունքով են անում. գնալիս իրենց շրջազգեստի փէշերը բարձրացնում, կարծես պարել են ուզում։ Ասուած այդ բարձրացած կանանց պիտի խոնարհեցնի և պիտի զրկի այն շորերից, որով պարծենում են։ Պէտք է քուրձ հագնեն, պարան կապեն մէջքից, պիտի կորցնեն իրենց սիրելի զաւակներին և իշխաններին։ Այն օրի պիտի հասնեն, որ եօթն կին մի մարդու պիտի բռնեն և ասեն. հացը մեզնից, շորը մեզնից, միայն թէ արի, եղիր մեր մարդը, որպէսզի բառնաս մեր այրիութեան նախատինքը (Գ. 1 Դ. 1)։ Այս դրութեան մէջ գտնուող ժողովրդին

հարուստ Եգիպտոսի հետ դաշնակցելը չի փրկի։ Եգիպտոսի թագաւորական տունը այն ժամանակ եթովպական ցեղից էր, որ զգալով թէ ասորեստանցոց գերիշխանութիւնը Պաղեստինի վրայ վտանգ կարող է լինել Եգիպտոսի համար, ուղարկել էր դեսպաններ Երուսաղէմ, որպէսզի Յուդայի հետ դաշինք կապէին ընդդէմ ասորեստանցոց։ Եսային դէմ էր այսպիսի դաշնագրութեան. և հեգնանքով ասում է. այդ երկիրը երեւելի երկիր է. ունի մեծամեծ գետեր. նրա նաւերը ծովերն են շափում։ Բայց լաւ կանեն, յետ դառնան այդ պատգամաւորները իրենց բարձրահասակ, անժողովուրդ ժողովրդի մօտ, դէպի իրենց սարսափ ազդող, հսկայ բայց անյոյս ժողովուրդը։ Աստուած ինքը ամառուայ անձրեւաբեր ամպի նման պիտի Սիոնի զէնիթի վրայ կանգնի և անշարժ նայի, տեսնի, ինչ են անում անմիտ երուսաղէմացիք։ Չեն իմանում, թէ Տէրը ինչ է որոշել Եգիպտոսի համար։ Ասորեստանցիք եգիպտացիներին և եթովպացիներին գերի պիտի տանեն, պիտի մերկացնեն և անպատուեն նրանց, այնպէս որ եգիպտացին եթովպացուն նայելով պիտի ամաչի (ԺԸ. 1—4 Ի. 1—6)։

Այսպէս եռանդուն և ոգեորուած քարոզում էր Եսային Երուսաղէմում, որպէսզի կարողա-

նայ Հրէաստանը հեռու պահել մեծ պետութիւն-ների քաղաքականութիւնից. և անշուշտ Երուսաղէմը Եսայու գործունէութեան էր պարտական, որ Յուդան Աքազի, նրա որդու Եօթամի և Եզեկիայի առաջին տասն տարում, ընդամենն 30 տարի շարունակ խաղաղութիւն վայելեց. այն ինչ ասորեստանցոց աշխարհակալները Տեկլաթ-Պալասարի Գ. 745—727, Սալմանասար Գ. 726—722 և Սարկոն 721—705 ճմլում էին Յուդայի շրջակայ ազգերին, որոնք միշտ փորձում էին ասորեստանցոց լուծը թօթափել։ Օրինակ փղշտացոց Ասոտ քաղաքը, որը իւր յոյսը դնելով Եգիպտոսի վրայ՝ ապստամբել էր, 711-ին ընկաւ Սարկանի ձեռքը և կործանուեց. Եսային էր պատճառը, որ Երուսաղէմի թագաւոր Եզեկիան Եգիպտացիների խաբէութեան զոհ չգնաց և չապստամբելով Սարգոնից՝ պահպանեց իւր կիսանկախութիւնը։

Բայց այս դէպքերը ժողովրդին չբդգաստացրին. նա իւր քաղաքական լաւ դրութիւնից չօգտուեց, իւր կեանքը չբարենորոգեց։ Ընդհակառակն քաղաքական ապահովութիւնը բարձրացրեց երկրի անտեսականը։ Ժողովուրդը անձնատուր եղաւ զեխութեան, անարդար և անբարոյական կեանքի։ Հարուստ և ազնուական դասակարգերը արդարութեան ու բարոյականու-

թեան սկզբունքներին ուշադրութիւն չէին դարձնում. կարծում էին, թէ իրենց քաղաքական իմաստութիւնն է փրկել Երուսաղէմը. յոյս ունէին թէ կըկարողանան շատ շուտով ազատել Յուդայի պետութիւնը հարկատութեան անվայել դրութիւնից։ Շուտով մի առիթ ներկայացաւ, որը նիւթ տուեց նրանց այս սնոտի յոյսերին։ Ասորեստանցոց մեծ թագաւոր Սարկոնը Նինուէում սպանուեց գաւառանութեամբ 705։ Նրա հպատակ ազգերը գլուխ բարձրացրին և կամեցան ապստամբել ասորեստանցիներից, կարծելով թէ Սարկոնի տեղը մի ուրիշը չի անցնի և նրա պէս չի կարողանայ բոլոր երկրները հրպատակութեան մէջ պահել։ Եգիպտացիքն էլ ձեռքի տակից գրգռում էին Պաղեստինի ժողովրդներին իրենց դեկավարութեամբ դաշնակցել միմեանց հետ և ապստամբել։ Յուդայի Եզեկիա թագաւորն էլ նոյն հովերով էր տարուած՝ հարկատութիւնից ազատուելու յոյսով։ Եսային դարձեալ տարբեր հայեացքի էր. այդ պատճառով նա 704 թուից սկսում է իւր ազգու քարոզներով ժողովրդական անմիտ հոսանքի դէմ գնալ և ցոյց տալ, որ հարկատու մնալը մեծ դժբախտութիւն չէ, այլ մեծագոյն չարիքը մի ժողովրդի և պետութեան համար նրա ներքին սոցիալական անարդարութիւնն է, որը ամեն մի

ազգի կործանման հիմնական պատճառն է դառնում։ Մարգարէի այս ուղղութեամբ գործունէութիւնը տևեց 704—701 թ. և եղաւ վերջինը բայց ամենից զօրեղը։

Դ. Հաւատարիմ Սիօն քաղաքը ինչպէս է փչացել. ասում էր նա. այն քաղաքը, ուր երբեմն հաւատով լի արդարութիւնն էր բոյն դրել։ Չեր իշխանները ապստամբ են, գողերին գողակից. վրէժխնդիր, կաշառակեր. որբերի և այրիների իրաւունքը ոտնակոխ. վաճառականները անող խարդախ են, արծաթը կեղծում են, գինու մէջ ջուր են խառնում։ Այս պատճառով Տէրը դատաստան պիտի անէ հզօրների վրայ, և ապստամբել ցանկացողներին պիտի ոչընչացնի. գոռոզներին խոնարհեցնի։ Նրանք բոլորը գինովցել, օղիով հարբել են։ Նոյն օղին է յիմարացրել քահանաներին և մարգարէներին. հարբելուց դանդաղում են և ասում. Ո՞ւմ է պատմում սա չարիքների մասին կամ ո՞ւմ է գուժում. մի՞թէ մենք կաթից նոր կտրուած ծծկեր երախաներ ենք, որ մեզ նոր այբ, բեն, գի՞մ է սովորեցնում։ Այս գինեմոլների անզգամ լեզուի պատճառով Աստուած սրանց հետ օտար՝ այսինքն ասորեստանցոց լեզուով պիտի խօսի։ Աստուած պատանջում է հանգիստ տալ ժողովրդին և ապստամբելու մասին չմտածել,

այլ հանդարտ մնալ դէպի Աստուած ունեցած վստահութեամբ և հաւատալ։ Բայց փոխանակ այդ հաւատի՝ Երուսաղէմի իշխանները ասում են ժողովրդին. ապահով եղէք. մենք մահուան և դժոխքի այսինքն եգիպտացոց հետ բարեկամական դաշն ենք կապել. մրրիկն անգամ մեզ չի կարող հասնել, որովհետև մեր ապաստարանը ստութիւնն է և խաբէութիւնն է մեզ քօղարկում։ Դրա փոխարէն այսպէս է ասում Եհովան. Միօնում մի հիմնաքարփորձաքար եմ դրել. ով հաւատայ, նա չի սայթաքի։ Այդ քարն իրաւունքն ու արդարութիւնն է. այն ինչ կարկուտը ձեր ստութիւնը պիտի խորտակի, իսկ հեղեղը ձեր խաբէութեան բերդը պիտի սրբի, տանի։ Ձեր դաշինքը մահուան և դժոխքի հետ արժէք պիտի չունենայ. մրրիկը նրան պիտի քանդի։ Վէր է կացել Աստուած դառնութեամբ և բարկութեամբ լեցուած. ձեզ սաստիկ պիտի դատի։ Վայ քեզ, Աստծու քաղաք, կանչում է մարգարէն, Երուսաղէմի համար, որովհետև քեզ պիտի պաշարեն և կործանեն, պիտի ընկնես գետին և քո ակար ձայնը, մրմնջիւնը կարծես հողի տակից, գերեզմանից պիտի լսուի։ Կարծես, երազի մէջ ես. ուտում ես կամ խմում, յետոյ արթնանում, տեսնում, թէ քաղցած ես թէ ծարաւ։ Այդ նրանից է

որ առանց Աստծու խոր խորհուրդներ էք անում և այն էլ ծածկում, ասելով՝ ով կարող է իմանալ, թէ մենք ինչ ենք անում։ Վայ ձեզ ապստամբների որդիներ, որ առանց Աստծուց խորհուրդ հարցնելու՝ դաշինք էք կռուել, որ իջնում էք Եգիպտոս փարաւոնից օգնութիւն խնդրում և ձեր Աստծուն չէք հարցնում։ Չէք իմանում, որ փարաւոնը ամօթի և նախատինքի առարկայ կըլինի նրանց համար, որոնք նրա վրայ են յոյս դրել։ Ի զուր ջանք, անօգուտ վաստակ՝ դիմել առիւծներով և օձերով լի Եգիպտոսի օգնութեանը. զուր է ձեր մխիթարութիւնը։ Մարգարէն պատուէր է ստանում Աստծուց՝ նստել, և յաւիտենական յիշատակի համար գրել մի տախտակի վրայ, որ այդ ժողովուրդը անհաւատ է և սուտ. մարգարէներին ասում է նա, ճշմարտութիւնը մի պատմէք մեզ, այլ մեզ մեր ճանապարհից դուրս հանէք. Աստծու օրէնքը մեր միջից հեռացրէք։ Որովհետև այս տեսակ ժողովուրդ էք, հաւատ չունիք, այլ սրտութեան վրայ էք յոյս դրել, կործանուած պարսպի պիտի նմանիք և ջարդուած խեցեղէն անօթի։ Միայն զղջման և հանգարտ մնալու մէջ է ձեր փրկութիւնը. ձեր ոյժը ձեր անվրդով վստահութեան մէջն է։ Բայց դուք ասում էք. ոչ, ձիերով ուզում ենք թռչենք և կառքերով

արշաւենք. յիրաւի, ձեր թշնամին ձեզ արագագոյն ձիերով պիտի հալածի և կառքերով պիտի հասնի. նրանցից մէկը ձեզնից հազարին պիտի փախցնի, իսկ հինգը՝ բոլորիդ. և դուք կըմնաք մենակ լերան գլխին ցցուած ձողի և բլրի գլխին կանգնած կոթողի պէս։ Վայ է կանչում մարգարէն նրանց, որոնք Իսրայէլի Սուրբին անարգելով Եգիպտոսի ձիերի, կառքերի, հեռեակների վրայ են յոյսը դրել։ Բայց Աստուած իմաստուն է. նա իւր խօսքը յետ չի առնի, այլ շարիք է բերելու նրանց և նրանց օգնութիւն խոստացողների գլխին։ Զէ՞ որ եգիպտացիք մարդ են և ոչ Աստուած. նրանց ձիերը մսից են շինած և ոչ հոգուց։ Բաւական է, որ Աստուած իւր ձեռքը պարզի, և անա օգնութիւն խնդրողները և օգնել խոստացողները կընկնեն և կըկործանուեն։ Որովհետև, ինչպէս որ հովիւները իրենց ազապակներով ոչինչ չեն կարող անել այն առիւծին, որը աւարը իւր թաթի մէջ բռնած մոռում է, այնպէս էլ Եհովայի դէմ ոչ մի ժողովուրդ ոչինչ չի կարող անել. նրանք կյաղթուեն, կհալեն, կոչնչանան։ Ի՞նչ պատրաստութիւն էք տեսնում. հին ջրմուղը քանդում էք և նոր ջրմուղով ջուր էք բերում Երուսաղէմի պարսպի ներսը. դրա վրայ ուրախանում և ցնծում էք. ոչխարներ էք մորթում, միսն ու-

տում, գինին խմում և անոգ նստում, և չէք նայում, թէ տիեզերքի ստեղծողը, Արարիչն ինչ է անում։ Նա երկինքն ու երկիրը վկայ է կանչում, թէ ինչպէս իւր որդիները՝ իսրայէլացիք՝ իրեն մոռացել են. *եզն իւր տիրոջն է ճանաչում, էշն իւր տիրոջ մսուրը, այն ինչ այս ժողովուրդը իւր Աստծուն չի ճանաչում։* Վա՜յ այս մեղաւոր ազգին. չարագործների ծնունդներ են, վատերի սերունդ, որոնք իրենց Աստծուն թողել են։ Հարուածելու տեղ էլ չի մնացել. որովհետև այս ժողովուրդը գլխով վիրաւոր է, սրտով թոյլ, ոտից գլուխ առողջ տեղ չունի իւր վրան. վէրքերը բոլորը թարմ են և ոչ ոք չկայ ապեղանի դնող։ Նրանց երկիրը անապատ է, քաղաքները հրձիգ, նրանց ագարակները ուրիշն է ուտում։ Սիոնը մենակ է մնացել այգու խրճիթի նման։ Եթէ Աստուած չխղճայ և մի մնացորդ չթողնի, այն ժամանակ նա Սոդոմի նման կլինի և Գոմորի պէս ընդմիշտ կանհետանայ աշխարհիս երեսից։ Այս անհաւատ ժողովուրդը այնուամենայնիւ ուզում է զոհեր շատացնելով փրկութիւն ձեռք բերել, բայց Աստուած նրանց զոհին չի նայիւ Խոյի ողջակէզը, հորթի ճարպերը, ցուլի և նոխազի արիւնը չի կամենում նա։ Ի զո՞ւր է կոխում այս ժողովուրդը տաճարի գաւիթները. նրանց զոհը, շաբաթը, ամսագլուխը և այլ տօնները պիղծ

են. Ասուած ձեր աղօթելուն չպիտի նայի և չպիտի լսի։ Ի՞նչ է, եթէ ձեր մեղքերը ծիրանեգոյն են, ձիւնի նմա՞ն ապիտա՞կ պիտի լինեն, կամ եթէ որդանկարմիր են, ապիտակ բուրդի պէս պիտի փայլե՞ն։ Միայն եթէ դադարէք չարութիւն գործելուց, իրաւունք մնատէք, փրկէք զկուածին, որդի դատը կտրէք եւ այրուն իրաւունք տաք, լուացուէք, սրբուէք, ահա այն ժամանակ կփրկուէք (Ա. 19—26, ԻԸ. 7—22, ԻԹ. 1—8, Լ. 1—17, ԼԱ. 1—4 ԻԲ. 15—18 Ա. 2—17)։

Անհունապէս վրդովուած մարգարէի խօսքերը այս անգամ ի զուր անցան։ Եզեկիան ըակզրում Բաբելոնի Մարդոխ-բալադան թագաւորից զրդուած դաշնակցեց նրա և փղշտացոց մի քանի քաղաքների հետ և ապստամբեց ասորեստանցիներից դադարեցնելով հարկը։ Սարգոնի յաջորդ Սենեքերիմը (704—681) զբաղուած էր Բաբելոնը ճնշելով (Տես ԼԹ.)։ Այդ միջոցին Եզեկիան շտապեց եգիպտացոց հետ դաշն կապել, աշխատելով ծածկել այդ նայուց։ Ահա թէ ինչու մարգարէն այդպէս զայրացած է թագաւորի այս անմիտ քաղաքականութեան վրայ և ինչպէս տեղին ուզում է նա իւր վերոյիշեալ ճառերը թագաւորի և նրա անխորհուրդ, անհաւատ և թեթեւամիտ խորհրդականների դէմ։

Մարգարէի ասածը այնուամենայնիւ իրա-

կանացաւ։ Այդ միջոցին Սենեքերիմը մի մեծ բանակի գլուխ անցած՝ եկաւ փիւնեկիական ափով Պաղեստինի և Յուդայի վրայ 701-ին։ Փղշտացոց Ասկաղոն քաղաքը գրաւեց և պաշարեց Աքրոն, որին օգնութեան եկող եգիպտական բանակը ջախջախուեց։ Կարգը եկաւ Յուդայինս. ասորեստանցիք ժան և աւերեցին Երուսաղէմի շրջակայքը գրաւելով մի քանի բերդեր։ Զարդերից սարսափահար ժողովուրդը փախչում և ապաստան է գտնում մայրաքաղաքի պարիսպների յետև։ Անա այս տաղնապալից րոպէին նորից հանդէս է գալիս Եսային։ Ի՞նչ կայ, ինչ է պատահել ուրախ, ազմկալից քաղաքին, կանչում է նա կծու ծաղրով ժողովրդին, որը սարսափահար կտուրն էր բարձրացել հաւանօրէն թշնամի բանակի շարժումները դիտելու։ Քո քաջ որդիները իսկի սրով չեն ընկել պատերազմում. քո առաջնորդներն առանց մի նետ ձգելու կամ գերի են ընկել կամ փախել են։ Այլևս ինձ մի նայէք. թողէք որ ես դառնագին ողբամ. իմ հայրենակիցների կորստի վրայ էլ մի փորձէք ինձ մխիթարել։ Սիոնի վրայ ուղարկել է զօրութեանց Տէրը զարմացումի, շփոթութեան և անկման օրը (ԻԲ. 1—5)։

Սարսափած թագաւորը՝ Եզեկիան իսկոյն ընդունեց Սենեքերիմի պահանջած հարկատուութեան ծանր պայմանը, որով առ ժամանակ ե-

բուսադէմը ազատ մնաց։ Այնուհետև Սենեքերիմը անցաւ դէպի հարաւ՝ եգիպտացիներին պատժելու. բայց վախենալով, թէ մի գուցէ ազատուած Երուսաղէմը իւր վերադարձի ճանապարհը յանկարծ յետևից փակի, պահանջեց Եզեկիայից՝ այդ քաղաքն իրեն յանձնել։ Գլուխը կորցրած փոքրոգի թագաւորը պատրաստ էր այդ անել, եթէ չլինէր Եսային, որը վախկոտ թագաւորին Եհովայի անունով սիրտ տուաւ։ Իւր խօսքը ուղղում է Սենեքերիմին և ասում. քո վրայ ծիծաղում է Իսրայէլի կոյսը. ումն ես հայհոյում, ում դէմն ես բարկացնում ձայնդ և աչքերդ ոլորում. Իսրայէլի Սուրբի՞ վրայ։ Նա քո քթին մի օղ կանցկացնի և սանձ կդնի քո բերանին և յետ կդարձնի այն ճանապարհով, որով եկել ես։ Ապա դառնալով Եզեկիային սիրտ է տալիս ասելով՝ նա նա չպիտի կարողանայ մտնել այս քաղաքը և ոչ էլ մի նետ ձգել քաղաքի մէջ (ԼԸ. Գլ.)։

Այդպէս էլ եղաւ. յայտնի չէ, թէ ինչ պատճառով ասորեստանցոց բանակը ոչընչացաւ Եգիպտոսի սահմանի վրայ. Սենեքերիմը ստիպուեց աճապարելով նիներ վերադառնալ։ Երուսաղէմը ազատուած էր. բայց չպէտք է կարծել, որ ասորեստանցոց պետութիւնն իսկոյն ընկաւ։ Ճիշտ է, Սենեքերիմը քիչ յետոյ ապանուեց իւր երկու դաւաճան որդիներից, որոնք փախան Ա-

բարատեան աշխարհը, բայց գոցա փոխարէն, նրա երրորդ որդին Ասուրհադդոն ասորեստանցոց պետութիւնը հասցրեց իւր փառքի գագաթնակէտին։ Նա 681-ին տիրեց Եգիպտոսին և հալածեց այնտեղից Եթիոպացի թագաւորներին։ Պաղեստինի բոլոր իշխանութիւնները ենթարկուեցին նրան։ Քաղաքական այս սարսափելի փոթորիկների ժամանակ Երուսաղէմը համեմատաբար հեշտ պրծաւ. նա միայն կիսանկախ պետութիւն. այն ինչ Իսրայէլի միւս աւելի մեծ պետութիւնը, Սամարիան, հիմնայատակ վաղուց կործանուած էր։ Այս հանգամանքը ժամանակակիցների վրայ մեծ ազդեցութիւն թողեց։ Երուսաղէմ քաղաքը և նրա տաճարը ստացաւ կենդրոնական և բացառիկ նշանակութիւն, որովհետև ժողովրդի մէջ այն հաւատն առաջ եկաւ, որ Եհովան այդ տաճարի պատճառով խնայեց Երուսաղէմին։

ԺԳ. ԳԼՈՒԽ

Մարգարէական եկեղեցական բարենորոգութիւնը, Երուսաղէմի անկումը եւ Երեմիա մարգարէն.

Եսային Յուդայի պետութեան կործանումը անհրաժեշտ էր համարում, բայց հաւատում էր, որ այս ժողովրդից մի մնացորդ

պիտի մնայ, որը պիտի կազմի նոր Իսրայէլը նոր հիմքերի վրայ։ Նրա մէջ պիտի թագաւորեն յաւիտենական խաղաղութիւնը, եղբայրութիւնը և արդարութիւնը, մի խօսքով իւր քարոզած բոլոր կրօնաբարոյական գաղափարները։ Նա սպասում էր, թէ շուտով Դաւթի ցեղից աստուածային զերազանց կարողութեամբ և շնորհքով օժտուած մի էակ պիտի ծնուի, որը խորտակելով բոլոր հեթանոս թագաւորութիւնները և ամբարիշտ բռնակալներին՝ մի այնպիսի թագաւորութիւն պիտի հիմնի, որի մէջ թոյլերն ու ճնշուածները իրաւունք գտնեն, ուր իշխի անմեղութիւնը (Թ. 1—6 ԺԱ.)։

Այս գաղափարներով տոգորուած՝ նա կազմել էր մի մարգարէական կուսակցութիւն, որը մեծ մարգարէի մահուանից յետոյ, ցանկանում էր նրա ջանքերն արդիւնաւորել։

Այդ կուսակցութեան գլխ էր Եզեկիայի որդին Մանասէ թագաւորը, որը իշխեց 50 տարի. նա մինչև իսկ բարենորոգիչ մարգարէներից շատերին կոտորել տուեց։ Ասորեստանցոց ու Բաբելոնի ազդեցութեան տակ նա իւր պետութեան մէջը մտցրեց երկնքի և երկրի աստուածուհու պաշտամունքը։ Բանն այնտեղ հասաւ, որ իսրայէլացիք չէին քաշուում այդ աստուածներին զոհելու ոչ միայն իրենց անասունների

անդրանիկ ծնունդները, այլ նաև իրենց անդրանիկ զաւակներին։ Երուսաղեմի մօտ Գեհենի ձորում կանգնեցրել էին մի սեղան, որի վրայ զոհաբերում էին իրենց երեխաներին։ Մանասէի որդին Ամմոնը հօր ճանապարհով գնաց, բայց շուտ մեռաւ։ Սրա յաջորդ Ոմսէն ութ տարեկան էր, երբ գահ բարձրացաւ։ Սրա օրով Յուդայի համար մի նոր ժամանակաշրջան սկսուեց։

Յայտնի է որ սկիւթացիք եօթներորդ դարում մտան Փոքր-Ասիա և հարուածելով ասորեստանցոց և առհասարակ սեմական արևելեան պետութիւններին՝ նախապատրաստեցին արիական ցեղերի գերիշխանութիւնը սեմական ցեղերի վրայ։ Նրանց արշաւանքների պատճառով Ասորեստանը մաս մաս բաժանուեց, թուլացաւ և միայն Նինուէի շրջանով սահմանափակուեց։ Սկիւթացիների մուտքը Ասորիք առիթ տուեց Յուդայի մէջ նոր մարգարէների երևան գալուն։

626 թուին Երեմիա և Սեփոնիա մարգարէները մատնացոյց էին անում այդ հիւսիսից եկող, ահ ու սարսափ տարածող, բարբարոս ժողովուրդների վրա, որոնք գալիս են Եհովայի հրամանով կոտորելու, ոչնչացնելու Յուդային ու բոլոր ամբարիշտ ժողովուրդներին։ Յիրաւի սկիւթացիք մտան Պաղեստին և դիմեցին մինչև Եգիպտոս, բայց նոքա ծովի ափով գնացին այ-

բելով ու աւերելով ամեն ինչ, իսկ Յուդայի երկիրը չմտան։ Այս հանգամանքը ազդեց Ոմէ երիտասարդ թագաւորի վրայ, որով սա բարեկամացաւ վերանորոգիչ կուսակցութեան հետ։ 621-ին, զատկի ոտնից առաջ յանկարծ յայտնեցին թագաւորին, թէ տաճարում մի նոր գիրք է գտնուած, որի մէջ գրուած է, թէ իսրայէլացիք միայն այն ժամանակ լիովին կարող են փրկուել, եթէ Եհովայի պատուէրները պահեն։ Թագաւորը իսկոյն ժողովի կանչեց բոլոր մեծամեծներին, կարդալ տուեց այդ նոր գիրքը և պարտաւորեցրեց, որ բոլորը այդ գրքի համաձայն վարուեն. այսինքն՝ ոչնչացնեն բոլոր հեթանոսական տաճարներն ու սեղանները, արգելեն հեթանոս պաշտամունքները, Երուսաղեմի տաճարը միակ կրօնական կենդրոնը համարեն (Գ. թգ. 22 գլ.)։

Այս բարեփոխութիւնը տեղի ունեցաւ մարգարէների գործունէութեան շնորհիւ. բայց փոխուեց միայն արտաքինը, ձևը, և ոչ թէ ժողովուրդի սիրտն ու զգացմունքը։ Մարգարէների կրօնաբարոյական և հասարակական գաղափարները չը-գործադրուեցին. ահա այս բանի դէմ է բողոքում Երեմիան։

Սա Երուսաղէմի մօտ գտնուած Անաթոթի քաղաքից էր, մի քահանայի որդի։ Նա իւր ժար-

գարէական կոչում ստանալը նկարագրում է իւր գործի Ա. գլխում։ Աստուած ընտրել է նրան մարգարէ լինելու դեռ ևս չծնուած ժամանակից, և դեռ ևս մանուկ հասակում Աստծուց պատուէր է ստանում քարոզել իւր կամքը ժողովրդեան չվախենալով ոչ ոքից։ Նա Հրէաստանի թագաւորների ու իշխանների, քահանաների և ազնուականների առաջ անդրդուելի պիտի ճնայ ինչպէս անառիկ բերդ, երկաթէ սիւն և պղնձէ պարիսպ։ Ամենքը պիտի կռուեն նրա դէմ, բայց ոչինչ չպիտի կարողանան անել։ Յիրաւի կէս դար շարունակ (626—586) գործեց այս մեծ մարդը հաւատարիմ իւր կոչմանն։

Նա հանդէս եկաւ այն ժամանակ, երբ սկիւթացիք տակնուվրայ էին անում ամբողջ արևմտեան Ասիան այնպէս՝ ինչպէս կրակի ոյժից կաթսայի ջուրն է վերուվայր լինում (Ա. 13—17)։ Այս խառն ժամանակին Յուդայում մարգարէանում էին նաև Սոփոնիան, Ամբակումը, Եսայիները, բայց ոչ մէկը չի կարող համեմատուել Երեմիայի հետ, որը Յուդայի մէջ միխիթարական ոչինչ չէր տեսնում։

Չնայած Ոմսէի առաջ բերած եկեղեցական վերանորոգութեանը՝ մարգարէն զգում է, որ ժողովրդի ներքին կեանքը ոչնչով չի բարեփոխուած. նա ոչնչով լաւ չի կործանուած Սամա-

բիայից։ Երեք բան՝ կռապաշտութիւնը, բարքերի անկումը և սուտ մարգարէների բազմութիւնը Երուսաղէմում, ահա սրանք են վրդովում մարգարէին և համոզում նրան, որ այս թագաւորութեան կործանումը Աստծու բացարձակ արդարութիւնից բղխող անմիջական հետևանք պիտի լինի։

Ինչ վնաս են գտել Իսրայէլի Աստծուց քո հայրերը, հարցնում է նա ժողովրդին, որ թողին նրան և գնացին օտար աստուածների յետևից։ Նա էր, որ ձեզ հանեց Եգիպտոսից և առաջնորդեց մի անապատով, որով ոչ մի հոգի չէր անցել։ Անշունչ երկինքն անգամ զարմանում է Իսրայէլի յիմարութեան վրայ, որովհետև սա թողեց կենդանութիւն պարգևող ջրի աղբիւրը և գիմեց Եգիպտոսի ու Ասորեստանի գետերին։ Ինչքան էլ նա լուացուի և ապրանուի, այնուամենայնիւ ապերախտութեամբ և անիրաւութեամբ ապականուած կմնայ։ Այս ժողովրդի քահանաներն ու մարգարէները պիտի գողի պէս բռնուեն իրենց անիրաւութիւնների մէջ, որովհետև գիտում են քարին ասելով՝ իմ հայրն ես, փայտին՝ իմ ծնողն ես։ Զարիքի ժամանակը այդ քարն ու փայտը կարող կլինեն օգնել նրանց։ Իսրայէլը՝ Սամարիան ելնում էր բարձունքները և սաւերախիտ ծառերի տակ ուրիշ աստուածներին պաշտում. նոյն ուխտադրուժութիւնն ա-

նում է Յուդան. նա չխրատուեց նրա կրած պատիժներից. ինչքան ասում են, դարձիր, բայց նա չի դառնում իւր վատ ճանապարհից։ Նա հերկել է ուզում քարքարոտ տեղերը և սերմել փշերի մէջ։ Այս պատճառով ինչպէս առիւծը իւր ժուտքից դուրս է գալիս, այնպէս դուրս է գալիս հիւսիսից մի ազգ, որն Երուսաղէմն և Յուդան աւերակ պիտի դարձնի։ Այդ ժամանակ թագաւոր և իշխան պիտի վհատուեն, քահանան ու մարգարէն հիացած մնան ասելով, ուրեմն Եհովան մեզ խաբել է. Նա ասել էր խաղաղութիւն կլինի, այն ինչ սուրը մեր ոսկորին է հասել։ Զեն իմանում. քանի ժողովուրդն անսուրբ է, այնքան նա պիտի պատժուի։ Հիւսիսից գալիք պատուհասը ժողովրդին կորստեան պիտի մատնի. այդ բանը հայրենասէր մարգարէի սրտին ծանր վիշտ է պատճառում։

Այս ընդհանուր շփոթութեան և սարսափի մէջ, մարգարէն վեր է նայում և լուսոյ յուսոյ մի ճառագայթ չի գտնում, վայր է նայում և ահա ամենն ինչ թափուր է. նայում է լեռներին և բլուրներին, նրանք էլ սարսռում, տատանում են։ Տիրոջ բարկութեան առաջ ամենն ինչ խռոված, ապականուած է երևում։ Երուսաղէմի փողոցներում և հրապարակներում մարդ եկողը չի գտնի մէկին, որ իրաւունք գործի և ճշմարիտ հա-

ւատք փնտռել։ Նրանք իրենց երեսը քարի պէս պնդացրել են և չեն կամենում յետ դառնալ։ Չկարծէք թէ՝ աղքատ են, դրա համար այդ միջոցներին են դիմում. հարուստն էլ այդ նոյն դրութեան մէջն է. նրանք բոլորն էլ անհնազանդ եղան են համանում, որոնք իրենց սատեանները ջարդում են, որպէսզի առիւծի կամ ինձի կուլ գնան։ Այդ առիւծն ու ինձը այն հիւսիսային ժողովուրդն է, որի ծագումը անյայտ է, որի լեզուն անքսելի և անհասականալի է, և որոնք պիտի ուտեն այս ժողովրդին և նրա հարստութիւնը՝ արջառն ու ոչխարը, նրա արտն ու այգին. և այս բոլորը նրա համար, որ այս յիմար և անմիտ ժողովուրդը իւր ամենակալ Աստծուն թողած՝ օտար աստուածների է ծառայում։ Այն Աստծուց չեն վախենում, որ ծովին սահման է դրել. ինչքան էլ աղմկեն նրա ալիքները չեն կարող իրենց աւազէ սահմանն անցնել։ Ահա նա հիւսիսից բերում է թշուառութիւն և թափում գերեցիկացած, փոփկացած Երուսաղէմի վրայ. պիտի գան պատերազմեն նրա հետ. այն ժամանակ օրը կկարճանայ և կխաւարի, իսկ գիշերը կերկարի, որովհետև այս սուրեամբ և բռնութեամբ լի քաղաքը պիտի կործանուի։

Մարգարէական բարենորոգութիւնից յետոյ, երբ Երուսաղէմի տաճարը միակ սրբավայր ճա-

նաշուեց Յուդայի մէջ, ժողովրդի մէջ այն մնոտի հաւատքն առաջացաւ, թէ այդ տաճարը կփրկի իրեն ամեն չարիքից։ Այն ինչ Երեմիան տարբեր հայեացք ունէր։ Նա Եհովայից պատուէր է ստանում՝ գնալ, կանգնել տաճարի դռան և երկրպագութեան եկողներին ասել. մի լինիք մնոտիապաշտ, որովհետև ամեն օր «Տիրոջ տաճարը, Տիրոջ տաճարը» աղաղակելը չի փրկի ձեզ. բայց ուղղութիւն գործէք, արդարութեամբ վարուէք ձեր ընկերների հետ, օտարականին, որբին եւ այրուն ոտնատակ չտաք, անպարտ արիւն չթափէք, օտար աստուածների յետեւից չերթաք, այն ժամանակ յաւիտեան յաւիտենից կենակուիք այս երկրում։ Բայց դուք գողանում, սպանում, շնանում, ատում էք, Բահաղին խունկ էք ծխում և յետոյ գալիս էք այս տունը աղօթելու։ Մթէ աւազակների այր է իմ տունը, ասում է Աստուած։ Այս տաճարը Սելովի պէս մի սրբավայր է, բայց տեսէք, Իսրայէլի ժողովրդի չարութեան երեսից այդ սրբավայրը ինչպէս աւերակ դարձրի։ Որովհետև իմ ձայնին չէք լսում և իմ պատուէրները չէք պահում, ես էլ այդ տաճարը Սելովի օրը կձգեմ։ Աստուած պատուիրում է Երեմիային աղօթք չանել և չբարեխօսել այս անօրէն ժողովրդի համար, որովհետև նրա հայրերն ուղարկում են իրենց որդիներին փայտ հաւաքե-

լու, իրանք էլ վառում են, նրանց կանայք խմոր են հունցում, որպէսզի զոհ մատուցանեն, կարկանդակներ նուիրեն երկնային ոգիներին, օտար աստուածներին։ Նրանք իրենց արածի համար պիտի ամաչեն, որովհետև Եհովան կրակ պիտի թափի այս երկրի վրայ։ Ո՞վ է սովորեցրել նրանց ոգեկոչներ մատուցանել. Իսրայէլի Աստուածը այդպիսի պատուէր չի տուել։ Նա ասել է, լսեցէք իմ ձայնին և ես կլինեմ ձեր Աստուածը, դուք կլինէք իմ ժողովուրդը. բայց նրանք չլսեցին։ Նրանց մօտ ուղարկեցի մարգարէներ, իսկ նոքա նրանց ձայնին արձագանգ չտուին։ Սա մի ազգ էր, որ իւր տիրոջ պատուիրանը չլսեց, դրա համար պակասեց հաւատը, հեռացաւ ճշմարտութիւնը։ Տափեթի ձորում զարշելի կուռքեր կանգնեցրեց, իւր տղաներին ու աղջիկներին զոհեց՝ կրակի մէջ այրելով։ Այս բոլորի պատճառով այս երկիրը պիտի քանդուի։ Յուդայի թագաւորների և իշխանների, քահանաների և մարգարէների ոսկորները պիտի հանեն գերեզմանից և փռեն այն կուռքերի և երկնային ոգիների՝ այն է արեւի և աստղերի առաջ, որոնց պաշտում էին, որպէսզի ծաղրի առարկայ դառնան։

Բայց ժողովրդի վրայ դալիք դժբախտութիւնը հայրենասէր մարգարէին անհուն վիշտ է

պատճառում՝ նա կսկծալի աղաղակով դիմում է Աստուծուն ասելով՝ «Մի կասայ ինձ, որ գլուխս ջուր դառնար եւ աչքերս արտասուքի ակունքներ, եւ ես լայ լինէի օր ու գիշեր իմ ժողովրդի վրայ, իմ ժողովրդի վիրաւորուածների վրայ: Մի կասայ ինձ անապատում մի անշուք օթեւան եւ ես թողնէի իմ ժողովրդին եւ հեռանայի նրանցից». որովհետեւ բոլորը շնանում են, շարիք շարիքի վրայ են աւելացնում, ընկեր ընկերոջից պիտի կասկածի, եղբայր եղբօր վրայ յոյս չպիտի ունենայ, որովհետեւ ամենքը խաբում են, ամենքը նենգութիւն են գործում, բարեկամին ծաղրում են, ճշմարտութիւն չեն խօսում, գրկում են, ստոյգ ստոյգի վրայ են բարդում: Այս բոլորից յետոյ ինչպէս այս ազգը պիտի կորչի. և թող այժմեանից կանչեն ողբասաց և ճարտար կանայք, որ ճչան և արցունք թափեցնեն ձեր աչքերից: Թող խնամուն իւր խնամութեամբ շարժենայ եւ ոչ էլ հզօրն իւր զօրութեամբ, այլ միայն նրանով պարծենայ, որ Տիրոջն իսկապէս ճանաչում է, որ իրաւունք, արդարութիւն եւ ողորմութիւն է ասեղծել: Եւ Երեմիան, որ լաւ էր ճանաչում իւր Աստծուն, համեմատելով փայտից քարից կամ ոսկուց շինած աստուածների հետ՝ մատնացոյց է անում նրանց ոչնչութիւնը, իսկ իւր Աստծուն փառաբանական խօսքեր է նուիրում, որոնք

աղօթքի բնաւորութիւն են կրում, «Մեր Տէր Աստուածը ճշմարիտ, կենդանի Աստուած է, ասում է նա, յաւիտենական թագաւոր, որի բարկութեան առաջ երկիրն է դողում և ազգերը չեն կարող հանդարդուել»։ Այս այն Աստուածն է, որը տիեզերքն իւր զօրութեամբ և իմաստութեամբ ստեղծեց, երկրի ծայրից ամպեր է բերում և կայծակներն անձրևի է փոխում (Ա. Ժ. Գլ.)։

Երեմիան այսպէս էր խօսում ժողովրդեան առաջ դեռ ևս այն ժամանակ, երբ Յուդան համեմատաբար լաւ վիճակի մէջ էր (626–608), որովհետև, ինչպէս յայտնի է, սկիւթական վտանգն անցաւ, առանց Երուսաղէմին մի շօշափելի վնաս հասցնելու. մինչև իսկ այդ սկիւթացիներն ասորեստանցիների այմն էին ջլատել, այնպէս որ նա այլ ևս չէր կարող առաջուայ նման հարկ պահանջել Յուդայից։ Կարելի է ասել, հրճուանքի մէջ էր Հրէաստանի ժողովուրդը, որովհետև Ոմանի թագաւորութեան վերջին տարիներում նա մի առժամանակ ազատ շունչ քաշել կարող էր։ Թւում էր, թէ Երեմիայի գուշակածները Յուդայի պետութեան անկման մասին չէին ճշտուում։ Ընդհակառակն այդ պետութիւնը տեսնելով թէ մարերն ու բաբելացիք միացել են նինուէն կործանելու, սկսեց յոյսեր տածել կատարեալ անկախութիւն ձեռք բերելու։ Բայց այս

յոյսերն ու հրճուանքը շատ կարճատև եղան։ Եգիպտոսի Նեխաո Բ. թագաւորը՝ կամենալով օգտուել իւր թշնամու՝ ասորեստանցիների անկեալ դրութիւնից, դուրս եկաւ մի բանակով իւր գերիշխանութեան ենթարկելու Պաղեստինի ժողովրդներին։ Բայց Ոմսէն արամադիր չէր իւր նոր ձեռք բերած անկախութիւնը եգիպտացիներին զոհելու. այդ պատճառով շտապեց խանգարելու Նեխաոյի մտադրութիւնները։ Եգիպտոսի սահմանի վրայ, Մեկիդդոյի մօտ 608-ին տեղի ունեցաւ մի ճակատամարտ, որտեղ Ոմսէն յաղթուեց ու սպանուեց։ Ոմսէի որդին Սալլումը բռնուեց և գերի տարուեց. Նեխաո փարաւոնը Ոմսէի երրորդ որդուն՝ Յոյակիմին հարկատու թագաւոր նշանակեց Երուսաղէմում։

Ժողովուրդը այս աղէտներից գլուխ կորցրած՝ տաճար թափուեց՝ իւր թագաւորի կորուստը ողբալու։ Նա չէր հասկանում, թէ ինչպէս նոր-վան կարող էր պատժել բաբելոնրոգիշ թագաւորին. միայն Երեմիան գլուխը բարձր բռնած բացատրում էր ժողովուրդին, որ այս դժբախտութիւնը հետևանք է իւր անարդարութեան և Աստծուն դաւաճանելուն։ Նա խորհուրդ էր տալիս՝ սպանուածի վրայ չզալ, այլ ողբալ Սալլումի վրայ, որովհետև նա գերութեան մէջ պիտի մեռնի։ Միևնոյն է, ինչքան էլ ողբան, ե-

թէ նոյն իսկ Մովսէսն ու Սամուէլը յարութիւն առնեն և բարեխօսեն, Տէրը չպիտի լսի և նեղի կամ հաշտուի այս ժողովուրդի հետ։ Երբ Երեմիային հարցնում էին, հապա ի՞նչ անենք կամ ո՞ւր երթանք, նա նրանց պատասխանում էր, ոմանք ժանտախտով պիտի մեռնեն, ոմանք սովով, և ոմանք գերութեան մէջ։ «Մ՞ով կխղճայ քեզ, Երուսաղէմ, քո լաւն ու վատը ո՞վ կհարցնի. չէ՞ որ քո չարութիւնը աւելից շատ է»։ Այս խօսքերը գայրոյթ առաջ բերին. ժողովուրդը դաւաղրութիւն սարքեց նրա դէմ, և ինչպէս Երեմիան ինքն է վկայում, անմեղ գառան պէս ուզել են մորթել և անուն երկրի երեսից ջնջել. նրանք ասում են. մի մարգարէանար, թէ չէ՝ քեզ կսպանենք։ Այս սպառնալիքի հանդէպ մարգարէն աղաղակում է. «Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, մայր իմ. ի՞նչու ինձ վէճի և կռուի մարդ ծնար։ Ոչ ոքի պարտք չեմ, ոչ էլ ուրիշն է ինձ պարտ, բայց ամենքն ինձ անիծում են։ Տէր, Դու գիտես, յիշիր ինձ, փրկիր ինձ իմ հալածիչներից... յիշիր, որ ես Քո պատճառով եմ նախատինք կրում։ Դու ինձ տուիր քո պատգամը, Քո խօսքերն ինձ ուրախութիւն ու ցնծութիւն են պատճառում... Ես չնստայ ուրախացողների շրջանում, ընդհակառակն Քո պատճառով մենակ նստեցի ու գառնութեամբ լցուեցի... ի՞նչու իմ

ցաւը տեսական է, իմ վէրքերը վատ տեսակի, որոնք չեն առողջանում. չլինի՞ դու ինձ համար խաբող առուակի ես նման, կամ ջրի, որի վրայ վստահել կարելի չէ»։ Իւր հալածանքներից և վիշտերից յուսահատուած մարգարէն՝ միայնակ խօսելով այսպէս իւր Աստծու հետ՝ դարձեալ այն հաւատիացումն է ձեռք բերում, որ Աստուած իրեն պղնձէ ամուր պարիսպ է դարձրել, որի դէմ ինչքան ուզենան կռուել, ոչինչ չպիտի կարողանան անել. որովհետև Աստուած իւր հետն է՝ օգնելու և չարերի ձեռքից փրկելու համար։

Յամենայն դէպս մարգարէն թող չրաբեխօսի այս ժողովրդի համար, որովհետև ոչ նրանց ծոմ պահելն է հարկաւոր, ոչ նրանց ողջակէզը, այլ նրանց սուրը պիտի ուտէ։ Եթէ Երեմիան չարիք չգուշակէր, այն ժամանակ ժողովուրդը կսիրէր նրան այնպէս, ինչպէս սիրում և լսում էր այն մարգարէներին, որոնք ասում էին, թէ ոչ, այլեւ ոչ սուր և ոչ սով պիտի տեսնի ժողովուրդը, այլ խաղաղութիւն պիտի թագաւորի։ Բայց Երեմիան ասում է, թէ այդ մարգարէները սուտ են մարգարէանում. Աստուած չէ ուղարկել նրանց. նրանք տեսիլ են տեսնում և կախարդութիւն են անում. հէնց այդ սուտ մարգարէներն էլ նրանց լսող ժողովրդի հետ պիտի կոտորուեն սրով և սովով, և ոչ ոք չի լինի նրանց թաղող։ Նրանց

դիակներն երկնքի թռչունների և գազանների կերակուր պիտի դառնան. Աստուած իւր ողորմութիւնն ու գթութիւնն իսպառ հեռացրել է. այդ պատճառով մարգարէն պատուէր է ստանում չամուսնանալ, և որդիներ չունենալ այս վտանգի օրերում. մեռելի տունը չմտնել հօրն մօրը մխիթարելու համար. իսկ եթէ հարցնեն, թէ ինչու համար է այս բոլորը, թող մարգարէն պատասխանի, նրա համար, որ թողիք մեր Աստծուն և ուրիշ աստուածների յետևից գնացիք։ Յուդայի մեղքերը երկաթեայ գրչով, ադամանդեայ եղէգնով են գրուած, ուրեմն անջնջելի են։ Փառք տուէք Աստծուն, քանի օրը չի խաւարել. լոյսի էջ ապառում, ժանեան տուներն են ձեզ պատում։

Երեմիան տանձին պատճառ ունէր Յոյակիմի ժամանակ այսպէս վրդովուած և խիստ խօսելու, քանի որ սա իրրև Եգիպտոսի փարաւոնի վասալ՝ օտար աստուածների պաշտամունքը բաջալերեց, որովհետև նրա կարծիքով Միկեդոյի ճակատամարտը ապացուցանում էր, որ ճշմարիտ Եհովայի պաշտամունքից էլ շատ օգուտ չկար։ Նա իրրև թեթեամիտ իշխան՝ իւր հպատակների գոյքն ու կեանքն էլ չէր խնայում։ Այս պատճառով Երեմիան պատուէր է ստանում՝ գնալ նրա ժամ, արքունիքը մտնել և ասել. դու՝ որ քո

տունը շինում ես անիրաւաբար և վերնայարկեր ես կառուցանում անարդարութեամբ, քո մերձաւորներին ձրի ես աշխատեցնում և նրանց վարձքը կտրում ես, դու որ ասում ես, թէ ես մի լայնաթաւակ տուն պիտի շինեմ լաւ պատուհաններով, մայրի փայտով ասխատկեմ և նկարել տամ. մի թէ դրա համար թագաւոր դարձար։ Քո հայրն էլ կերաւ, խմեց, բայց նա արդարութիւն էր գործում, ճնշուածներին և խեղճերին օգնում էր։ Այն ինչ քո աչքն ու միտքն ուղղուած են ագահութիւն անելու, անմեղի արիւնը թափելու, ճնշելու և կողոպտելու վրայ։ Այս պատճառով այս թագաւորի վրայ ոչ ոք սուգ չպիտի անի՝ ասելով, ա՛խ տէր իմ, վա՛յ քո բախտին, այլ իշի պէս պիտի թաղեն, այսինքն քաշ տան և Երուսաղէմի դռների մօտ ձգեն (Իր.)։

Սրանից յետոյ, երբ Երեմիան մի անգամ էլ տաճարի դրան կանգնած քարոզում էր, թէ Յուդան պիտի գերի գնայ և Երուսաղէմն էլ Սելոմի պէս պիտի աւերուի, քահանաներն ու սուտ մարգարէները բռնեցին նրան և կանչեցին իշխաններին՝ դատելու և մահուան պատիժ տալու Երեմիային։ Իսկ Երեմիան դիմելով իշխաններին՝ հաստատում է, որ, այո՛, ինքը չարիք է նախագուշակում այս քաղաքի, և այս տաճարի վրայ և թէ ինքը հիմա նրանց ձեռքին է. ինչ

կուգեն, թող անեն, միայն իմանան, որ եթէ ապանելու լինեն՝ անմեղ արիւն թափած կլինեն։ Բայց դատող ծերերից մի քանիսը պաշտպանեցին մարգարէին և նորա խօսքը ժահուան արժանի չհամարեցին. թէպէտ այդ նոյն թագաւորի օրով մի ուրիշ մարգարէ՝ Ուրիա անունով, որը նոյնպէս չարիք էր գուշակել Երուսաղէմի վրայ և փախել էր Եգիպտոս, Յոյակիմի ջանքերով ապանուել էր։ Երեմիան ազատուեց ժահուանից մի ազդեցիկ պալատականի՝ Սափանի պաշտպանութեան շնորհիւ, բայց բանտարկուեց։

Քաղաքական պայմանները նորից այնպէս էին դասաւորուել, որ թագաւորը և ժողովուրդը կարծես իրաւունք էին հաւատում Երեմիայի քարոզութիւնների վրայ ուշադրութիւն չդարձնելու։ Բանն այն էր, որ Երեմիայի գուշակութիւնը, թէ հիւսիսային մի ժողովուրդ պիտի կործանի Երուսաղէմի պետութիւնը՝ չիրագործուեց։ Դորա փոխարէն Եգիպտացիների տուած հարուածից նրանք շուտ բժշկուեցին։ Նեխաս փարաւոնը իւր արշաւանքը շարունակելով՝ հասաւ Ասորիք և օգտուելով այն հանգամանքից, որ մարերն ու պարսիկները Նինուէի պաշարումով և առումով են զբաղուած, ուզեց ամբողջ Ասորիքին տիրել, բայց բաբելացոց Նաբոնէտ թագաւորի ժառանգը Նաբուգոդոնոսորը, եկաւ նրա

դէմ։ Եփրատի վրայ Կարկեմիշի մօտ տեղի ունեցաւ մի ճակատամարտ, ուր եգիպտացիք շարաշար յաղթուեցին և յետ նահանջեցին դէպի Եգիպտոս 604-ին։ Նինուէի անկումը հրճուանքով լցրել էր արդէն Երուսաղէմ. եգիպտացոց պարտութեան պատճառած ուրախութիւնն անչափ էր։ Թագաւորն ու ժողովուրդը կարծում էին, թէ եգիպտացիների յաղթուելովն իրենք ազատուում են հարկատուութիւնից. այն ինչ Երեմիան բոլորի յոյսը ծաղրում էր ասելով, որ բաբելացոց լուծը աւելի ծանր կլինի։ Բաբելացոց թագաւորը պիտի գայ և պիտի ջնջի մարդ և անասուն այս երկրից։ Նոյնն էր ասում նաև Նաում մարգարէն։ (Տ. Նաում Ա—Գ.)։

Երեմիան բանտարկուելուց առաջ, 604-ին կանչել էր իւր աշակերտ Բարուքին և թելադրել էր նրան իւր 23 տարուայ մարգարէութիւնները, և նա գրի էր առել։ Այժմ բանտից մարդ է ուղարկում իւր աշակերտին ասելու. ես բանտարկուած եմ, չեմ կարող քարոզել ժողովրդին. վերցրու դու իմ մարգարէութեան գիրքը և կարդա տաճարում հաւաքուող ժողովրդեան առաջ, թերևս լսի և դարձի գայ։ Բարուքը կատարում է իւր մեծ վարդապետի պատուէրը։

Ժողովուրդն ու իշխանները լսելով Երեմիայի ամբողջ մարգարէութիւնը՝ մանաւանդ վեր-

ջին մասը՝ շփոթվում և զայրանում են. իմաց են տալիս թագաւորին, որն և հրամայում է բերել իւր առաջ էլ կարդալ այդ գիրքը, բայց նրա ընթերցումը թագաւորի մէջ առաջ չի բերում զղջման զգացմունքը. ընդհակառակն ամենայն հանդարդութեամբ նա ձգում է այդ ժառանգը իւր առաջ գրուած կրակարանի մէջ և վառում է։ Երեմիան լսելով այդ՝ կանչում է Բարուքին և յանձնարարում է նրան՝ նորից գրի առնել իւր առաջին մարգարէութիւնները և այդ բոլորի վրայ աւելացնել.—որովհետև Յոյակիմը չուզեց լսել իմ մարգարէութիւնը, այդ պատճառով նա յաջորդ չպիտի ունենայ Երուսաղէմի գահի վրայ. նորա դիակը պիտի ընկնի օրուայ ոսթի և գիշերուայ ցրտի առաջ։

Երեմիայի գուշակութիւններն այս անգամ արագութեամբ կատարուում էին։ Կարկեմիշի ճակատամարտում բաբելացիներն Ասորիքից դուրս քշեցին փարաւոնին, այնպէս որ Յոյակիմը 602-ին ստիպուեց հարկ տալ յաղթողներին, բայց երեք տարի վճարելուց յետոյ՝ կտրեց։ Կրօնական ժողովրդութեամբ բռնկուած ազատասէրները՝ ապրելով քահանաների, մարգարէների և նոյնիսկ արքունիքի վրայ, ապստամբութեան դիմեցին։ Նաբուգոդոնոսորը բաւականացաւ ահռելի պատժիչ զօրախմբեր ուղարկելով Երուսաղեմ

դէմ, այլ և գրգռեց շրջակայ մանր ցեղերին, յատկապէս եդոմամացիներին՝ աւերելու Յուդայի պետութիւնը։ (Տ. Երեմ. ԽԹ. 7—22 Եզեկ. Իե. 8—11)։

Վերջապէս 597 թուին Նաբուզոդոնոսորը մի մեծ բանակով անձամբ եկաւ Երուսաղէմի վրայ և պաշարեց։ Պաշարման ժամանակը մեռաւ Յոյակիմ և նրա գահը ժառանգեց Յեքոնիան՝ նորա որդին։ Երեմիան, որն այս ընդհանուր ապստամբի ժամանակն ազատուած էր բանտից, ցաւած սրտով տեսաւ իւր գուշակութիւնների կատարումը։ Յոյակիմը մեռաւ և ոչ ոք նրա վրայ սուգ անելու կամ կոծելու ժամանակ չունէր. թշնամին պաշարել էր քաղաքը և ժամանակ չէր տալիս մտածելու։ «Հանի խաղաղութեան մէջ էիր, ասում է Երեմիան Յեքոնիային դառնալով, ես խօսեցի քեզ հետ, բայց դու չկամեցար լսել. մանկութիւնից ի վեր այս էր քո վարմունքը։ Դու լսում էիր քո հովիւներին, որ հողմարածներ են. քո սիրելիները գերի պիտի գնան. դու ինքդ ամօթով և խայտառակութեամբ պիտի ծածկուես. ծննդականի պէս ցաւ քաշես։ Կենդանի է Իսրայէլի Աստուածը, Որը քեզ պիտի մատնի Նաբուզոդոնոսորին քո ձեռ հետ և ձեզ պիտի շպրտի մի օտար աշխարհ, ուր և պիտի մեռնէք, ինչպէս արհամարհուած, ա-

նարգուած մի պատկեր կամ մի աման։ Մվ երկիր, երկիր, լսիր Եհովայի խօսքը և գրիր Յեքոնիային քո ցուցակում իբրև անզաւակ, իբրև անբախտ մէկը, որին իւր ամբողջ կեանքում, ոչինչ չի յաջողուել, որովհետև նրա յաջորդներից ոչ մէկին չպիտի յաջողուի Դաւթի աթոռվրայ նստել և Յուդայի վրայ իշխել։ (ԻԲ. 20—30)

Յիրաւի անբախտ թագաւորը չորս ամսից յետոյ անձնատուր եղաւ և իւր հօր մեղքերը քաւեց Բաբելոնի բանտում, գերութեան մէջ։ Նաբուգոդոնոսորը Յեքոնիայի հետ գերի տարաւ Երուսաղէմի ազգաբնակութեան ընտիր մասը, հարուստներին և ազնուականներին, ընդամենն 10000 մարդ, իսկ մնացած աղքատ ժողովրդեան վերայ կարգեց Ովսէի միւս որդուն Սեդեկիային իբրև հարկատու թագաւոր։

Սա մի սարսափելի հարուած էր Յուդայի փոքրիկ պետութեան համար. այնուամենայնիւ ապստամբութեան կրակը չմարեց։ Եհովայի տաճարը դեռ կանգուն էր նրանում։ Գերի գնացողները յոյս ունէին, որ Եհովան կկործանի հեթանոսների պետութիւնը և իրենց յետ կդարձնի. այդ պատճառով աշխատում էին Երուսաղէմում ապստամբութեան կրակը վառ պահել։ Քաղաքում յետ մնացողներն ամեն ինչ դէպի լաւն էին բացատրում. իրենք իրենց համարում էին գր-

ուած ցորեն, իսկ գերի գնացողներին՝ դարման. որորովին հակառակ կարծիք է յայտնում Երեմիան (Տ. ԻԳ. գլ.) Նա երկու կողով թուզ է տեսնում, մէկի մէջ լաւ ու քաղցր թուզեր ածած, իսկ միւսի մէջ վատ ու դառն։ Այդ լաւ թուզերը գերի գնացողներն են, որոնց վրայ Եհովան պիտի ողորմի, իսկ վատերը Երուսաղէմում մնացողներն են. սրանց թագաւորն է Սեդեկիան. սրանք պիտի կործանուեն, ամօթի և նախատինքի առարկայ դառնան։

Արդէն իսկ Սեդեկիայի թագաւորութեան առաջին տարիներում սկսուեց բաբելացոց դէմ ապստամբական շարժումը։ Եդոմից, Տիրոսից Ամմոնից, Մովաբից դեսպաններ եկան Երուսաղէմ՝ միացեալ ոյժով ապստամբութիւնը գլուխ բերելու համար։ Երեմիան դուրս եկաւ նրանց առաջ և տուեց նրանց մի մի կապ, մի մի լուծ յայտնելով, որ լաւ կանեն հպատակուեն Նաբուգոդոնոսորին՝ ընդունելով բաբելացոց լուծը. և թող չլսեն իրենց ծերերին, մարգարէներին, հաւատմամներին, կախարդներին, որոնք խորհուրդ են տալիս նրանց՝ հարկ չտալ Նաբուգոդոնոսորին։ Նոյն բանը ասում է նա Սեդեկիային՝ խնդրելով նրան, որ նա չլսի այն մարգարէներին և քահանաներին, որոնք ասում են, թէ շուտով Բաբելոն գերի տարուած Տիրոջ

տաճարի սպասները ու անօթները յետ պիտի դառնան Երուսաղէմ։ Իսրայէլի ամենակալ Աստուածն ասում է, որ եթէ չլսէք ու չհնազանդուէք, այն ժամանակ մնացած սպասներն ու անօթները նոյնպէս պիտի ընկնեն բաբելացոց ձեռքը. քաղաքն ու տաճարը աւերի ենթարկուեն։ Սրան հակառակ՝ դաբաւոնացի Անանիա մարգարէն դուրս է գալիս և ժողովրդին ասում, թէ երկու տարուց յետոյ Եհովան պիտի կործանի Բաբելոնը և յետ պիտի դարձնի գերիներն ու տաճարի սպասները։ Այդ միջոցին Երեմիան իր վիզը մի փայտեայ լուծ ձգած՝ գընում է տաճար ընդդիմաբանելու Անանիային, բայց վերջինս վերցնելով Երեմիայի վզի լուծը՝ ջարդում է բոլոր ժողովրդեան առաջ, ասելով՝ թէ այսպէս պիտի ջարդի Տէրը բաբելացոց լուծը երկու տարուց յետոյ։ Հետևեալ օրը Երեմիան իւր վիզը երկաթէ լուծ ձգած գալիս է, Անանիային ասում. դու ջարդեցիր փայտեայ լուծը, իսկ բաբելացոց թագաւորը այս ժողովուրդների վզին երկաթէ լուծ պիտի դնի։ Երեմիան նկատելով՝ որ ապատամբութեան կայծը Երուսաղէմում Բաբելոն գերի գնացածներն են բորբոք պահում, մի նամակ է գրում նրանց, որի մէջ նա խորհուրդ է տալիս նրանց հանդարտուել, տներ շինել, այգիներ տնկել և առժամանակ

վերադարձի յոյս չունենալ. չխաբուել սուտ մարգարէների մանաւանդ Սամէա Ելիմացու խօսքերից, որոնք զրգռում են ժողովրդին ապստամբելու և Երեմիային էլ պատժելու։

Ինչպէս երևում է, Սեդեկիան ինքն այնքան էլ որամադիր չէր ապստամբելու. նա յոյս չունէր, թէ այդ մանր իշխանութիւնների օգնութեամբ մի որև է բան զլուխ գայ. այս պատճառով նա մինչև իսկ Բաբելոն գնաց՝ Նաբուզոդոնոսորի կասկածանքը փարատելու և դէպի իրեն լաւ որամադրելու։ Սակայն վերջը, երբ 588-ին Եգիպտացոց Ապրիէս կամ Հօֆրա փարաւոնն ապստամբել ցանկացողներին իւր օգնութիւնը խոստացաւ, այն ժամանակ Երուսաղէմում այլևս հնար չեղաւ յետ պահել ժողովրդին ապստամբութիւնից։ Մի տարի յետոյ բաբելական մի բանակ Երուսաղէմի վրայ արշաւեց։ Սեդեկիան ուղարկեց Պասքուր անունով մի իշխանի Երեմիայի մօտ, որպէսզի նրանից իմանայ, թէ Աստուած ինչ է որոշել այս քաղաքի համար։ Երեմիան պատուիրում է Պասքուրին՝ յետ դառնալ և ասել թագաւորին, մի աշխատէք պաշտպանուել բաբելացոց դէմ, որովհետև Աստուած ձեր ձեռքի զէնքը ձեր դէմ կդարձնի։ Պէտք է շուտով անձնատուր լինել և այդպէս փրկուել. Աստուած չպիտի ողորմի և

գթայ այս քաղաքին, որի բնակիչները սովով և սրով պիտի ընկնեն, իսկ քաղաքը պիտի այրուի։

Մի առժամանակ այնպէս թուաց, որ Երեմիայի ասածներն այս անգամ էլ չպիտի ճշտուէին, որովհետև քաղաքում ընդհանուր ոգևորութիւն էր իշխում և քաջութեամբ էին կռուում. նրանք ազատ արձակեցին իրենց հրէայ ստրուկներին, որպէսզի բոլորը կարողանան սուրբ պատերազմին մասնակցել. բայց սրանից յետաւ եկաց մի եգիպտական բանակ՝ օգնելու պաշարուած Երուսաղէմին։ Բաբելացիք առժամանակ պաշարումը վերցրին՝ փարաւոնի դէմ կռուելու համար։ Սրանից քաջալերուած և իրենց ազատով զգալով՝ նորից բռնեցին իրենց ազատ թողած ստրուկներին և ծառայեցրին։ Այս բոլոր երևոյթների հանդէպ Երեմիան միշտ մնաց յոռետես քաղաքի ապագայի նկատմամբ. մանաւանդ այս վերջին ստոր վարմունքը ստրուկների վերաբերմամբ, լցրեց նրան զայրոյթով։ Նա գնաց թագաւորի մօտ ասելու նրան, թէ չլինի կարծի, թէ քաղդէացիները ընդմիշտ հեռացան և էլ չեն գալու, եթէ նոյնիսկ ամբողջ բաբելական զօրքը կոտորուի և միայն մի երկու վիրաւոր մնայ, զրանք էլ բաւական կլինեն Երուսաղէմն առնելու և հրդեհելու։ Զէ՞ որ օրէնքը պատուիրում է խա-

բայէլացի ստրուկներին վեց տարի ծառայեցնելուց յետոյ եօթներորդ տարին արձակել, ինչու նորից բռնելու ծառայեցնում են։ Դուք՝ որ ձեր եղբայրներին ազատ չէք արձակում, խեղճի գառը չէք տեսնում, գրկուածին չէք վերադարձնում նրանից կողոպտածը, ահա այդ պատճառով Աստուած կարձակի ձեզ վերայ սուր, սով և մահ. թագաւորին և իշխաններին և բոլոր քաղաքը կմատնի բաբելացոց ձեռքը։

Այն ժամանակ՝ երբ բաբելացիք պաշարուած էին վերցրել էին, Անաթովթից գալիս է Երեմիայի մօտ իւր հօրեղբօրորդին և յայտնում է, որ նրան մի ագարակ է հասել իբրև ժառանգութիւն. այս բանում Երեմիան նկատում է Աստուծոյ մի ցուցում այն մասին, թէ ապագայում Պաղեստինը նորից պիտի վերաշինուի, այդ պատճառով նա սիրով ընդունում է իրեն հասանելիք ժառանգութիւնը և ճանապարհ է ընկնում Անաթովթ՝ ստանալու հաւաք իրեն ընկած բաժինը. բայց քաղաքի դռան մօտ պահապանը նրան կալանաւորում է, կարծելով՝ որ նա ուզում է իբրև գաղտագիր բաբելացոց մօտ գնալ։ Մարգարէին տանում են իշխանների մօտ, որոնք և նրանց գանակոծել են տալիս և բանտարկում ժանապարհների բանտում։ Սեդեկիան նորից ժարդ է ուղարկում, կանչում Երեմիա-

յին, որ իմանայ, թէ Աստուած ինչ է յայտնել մարգարէին քաղաքի մասին։ «Այո՛, ասում է Երեմիան թագաւորին, Աստուած որոշել է, որ դու բաբելացոց թագաւորի ձեռքը պիտի մատնուես։ Բայց ո՞ւր են կորել ձեր մարգարէները, որոնք ասում էին, թէ Բաբելոնի թագաւորն այս երկիրը չի գայ։ Ես ինչով եմ մեղաւոր քո և ժողովրդեան առաջ, որ Աստծու պատգամը ճշտութեամբ եմ հաղորդում. ազատիր ինձ ուրեմն մահապարտների բանտից, որ չմեռնեմ։ Թագաւորը հրամայում է ձգել Երեմիային բանտի գաւիթը և օրական մի մի հաց տալ նրան։

Մինչ այդ բաբելացիք արդէն յետ էին մղել եգիպտացիներին և վերադառնալով՝ նորից վերսկսել էին քաղաքի պաշարումը։ Երուսաղէմացիք որոշել էին մինչև վերջին շունչը պաշտպանել քաղաքը. այնպէս որ Երեմիայի խորհուրդները՝ զոնէ վերջին րոպէին անձնատուր լինել, անցան անհետանք։ Սեդեկիան, որը ծածկաբար մարգարէին պաշտպանում էր, վախենալով հայրենասէրների կատաղութիւնից՝ չէր համարձակուում նրանց դէմ մի բան ձեռնարկել։ 586-ին վերջապէս կարողացան բաբելացիք պարիսպը ճեղքել և մտնել քաղաքը, ուր որ սովը արդէն ուժասպառ էր արել բնակչութիւնը։ Սեդեկիան սկզբում փորձեց քաղաքի միւս կողմից

փախչելով ազատել իւր անձը, բայց բռնուեց և իւր իշխաններին հետ բերուեց Նաբուզոդոնոսորի առաջ, որը նրանց վրայ խիստ դատաստան արաւ։ Սեդեկիայի որդիներին իրենց հօր աչքի առաջ սպանել տուեց, ապա հանել տուեց թագաւորի աչքերը։ Ապատամբ քաղաքի պարիսպները հրամայեց քանդել, տաճարը այրել և ժողովրդի մի խոշոր մասին՝ կուրացած թագաւորի և իշխանների հետ գերի տանել։ Երեմիային բանտից ազատելով՝ յանձնեց իւր Նաբուզարդան դահճապետին, որ ամեն կերպ խնամք տանի նրա վրայ։ Նրան թողնուեց ընտրութիւն անել՝ կամ միւսների հետ Բաբելոն գնալ և կամ մնալ Հրէաստանում։ Երեմիան մնաց իւր հայրենիքում, ուր Նաբուզոդոնոսորը տեղապահ նշանակեց Գեդալիա անունով մի հրէայի, որովհետև մարգարէն յոյս ունէր թէ՝ այս բոլոր դժբախտութիւններից յետոյ Եհովան կգթայ և յետ կբերի գերիներին 70 տարուց յետոյ։ Բայց երբ Գեդալիան սպանուեց Իսմայիլ անունով հարիւրապետի ձեռքով, ժողովուրդը բաբելական նոր վրէժխնդրութիւնից վախեցած՝ գաղթեց Եգիպտոս։ Երեմիան հակառակ էր այդ գաղթին, բայց նրան բռնութեամբ տարան իրենց հետ։ Մերացած և տանջուած մարգարէն ցաւած սրտով նկատեց, որ այս գաղթական ժողովուրդը՝ թողնելով իւր հայ-

բերի Աստծուն՝ պաշտում է «Երկնքի Տիկնոջը», կշտամբեց նրանց և գուշակեց, որ այդ տեղի հրէաները բոլորը պիտի ոչնչանան և Եգիպտոսն էլ բաբելացոց ձեռքը պիտի ընկնի։ Գաղթական հրէաների կանայք, որոնք ամենից աւելի ջերմեռանդութեամբ պաշտում էին երկքի աստուածուհուն, ըստ աւանդութեան բռնում են մարգարէին և նրա բերանը աւազով խցելով նահատակում են։

ԺԴ. ԳԼՈՒԽ

Հրէաները բաբելոնեան գերութեան մէջ Եզեկիէլ եւ Նայի մարգարէները 586—538.

Աստուածատանցիներից գերի տարուած Սամարիայի հրէութիւնը ձուլուեց հեթանոսների հետ. նոյնպէս ձուլուեցին և անհետացան այն հրէաները, որոնք Եգիպտոս էին գաղթել։ Անշուշտ նոյնը կպատահէր Բաբելոն գերի գնացող երուսաղէմացի հրէաների հետ, եթէ իրենց կրօնին հաւատարիմ կապուած չմնային։ Ցիրաւի սրանք տեղի աւանդապահ դառնուեցին. մանաւանդ սրանց օգնեց այն հանգամանքը, որ խրժբուած մի տեղ էին բնակուում և ոչ թէ հեթանոսների մէջ ցրուած։ Նրանք տները շինեցին,

այգիներ տնկեցին և որոշ բարեկեցութեան հասան։ Նրանց քաղաքական կեանքը կործանուած էր, բայց ցեղակցական կապերը պահպանուեցին։ Ազնուական և իշխանական տները պինդ պահեցին իրենց ներքին ինքնուրոյն կեանքը և կապուելով միմեանց հետ՝ կազմեցին եկեղեցական համայնքներ։

Օտարութեան մէջ չէր կարելի զոհեր կամ ողջակէզներ մատուցանել Աստծուն, և ոչ էլ տօները տօնել, բայց կարելի էր շաբաթ օրը սուրբ պահել, ոչ թէ զոհեր մատուցանելու, այլ միատեղ հաւաքուելու համար։ Այսպիսով առաջացան գերութեան մէջ ժողովարանները (սինագոգա), ուր զոհ չէր կարելի անել. սա մի հիմնական փոփոխութիւն էր հրէայ ժողովուրդի աստուածապաշտութեան մէջ։ Հրէաները ժողովարաններում Աստուծոյ խօսքն էին լսում, որը մասամբ գրի էր առնուած և մասամբ էլ բերանացի քարոզուում էր։ Բայց որովհետև հազիւ թէ ամեն մի ժողովարանի կամ սինագոգայի համար մի մի մարգարէ կարելի լինէր գտնել, որ Աստուկենդանի խօսքը քարոզէր, այդ պատճառով կամաց կամաց սկսեց ս. գրքի ընթերցանութիւնը գլխաւոր տեղ բռնել։ Շաբաթ օրերի սուրբ պահելը ստացաւ կրկնակի նշանակութիւն. արտաքուստ նա բաժանում էր հրէութիւնը հեթանո-

սութիւնից, իսկ ներքուստ կապում էր հրէաներին միմեանց հետ և զօրեղացնում էր հրէութեան մէջ նրա ազգային և կրօնական կողմերը։ Նոյն ձևով թլպատութեանը տրուեց այս շրջանում ազգային կրօնական անհրաժեշտ սովորոյթի նշանակութիւնը։ Տաճարի կործանումից յետոյ անպաշտօն մնացած քահանայութիւնը գերութեան մէջ նորից իւր պաշտօնի մէջ մտաւ՝ սովորեցնելու ժողովրդին, թէ ինչն է սուրբ և ինչը ոչ սուրբ։

Ազգային ինքնապահպանութեան այս զօրեղ բնազդին օգնութեան էր գալիս այն յոյսը, թէ շուտով Աստուած պիտի վերադարձնի իրենց հայրենիք։ Այս յոյսը բորբոք էր 597 թուականին տարուած գերիների մէջ, քանի որ Երուսաղէմը դեռ բոլորովին չէր կործանուել։ Ի զուր էր աշխատում Յեքոնիա թագաւորի հետ գերի գնացող Եզեկիէլ մարգարէն, որն իւր մարգարէական կոչումն ստացել էր 592 թուին, իւր նոր բնակավայր Թէլ-աբիբում՝ համոզել ժողովրդին, որ Երուսաղէմը հիմնայատակ պիտի կործանուի (Տես. Եզեկիէլ Զ. Է. Ը. Գլ.)։ 586 թուից յետոյ, երբ այդ քաղաքը բոլորովին կործանուեց, նոր սկսեցին ուշք դարձնել Եզեկիէլի քարոզութեան վրայ։ Շարունակ սրա մօտ են հաւաքուում հրէայ ծերերն ու իմաս-

տունները, և նա նրանց խրատներ է տալիս և ապագայի յոյսերով ոգևորում։ Սիոնի և տաճարի կործանումը. դաղթականների վրայ թողեց յուսահատեցնող տպաւորութիւն։ Թէ ինչ տրամադրութիւն էր իշխում յուսահատ ժողովուրդի մէջ՝ երևում է Երեմիային վերագրուած ողբերից աւերակ Սիոնի վրայ և ՃԶ. սաղմոսից, ուր ասած է. «բաբելացոց գետի մօտ նստած լաց ենք լինում, երբ Սիոնն ենք յիշում։ Մեր կիթառները կախում ենք նրանց ուռենիներից. մեզ գերողները ստիպում են մեզ և ասում, երգեցէք մեզ Եհովայի օրհնութեան երգերից, բայց ինչպէս պիտի կարողանանք օտարութեան մէջը Տիրոջ օրհներգը երգել»...

Այս խուլ յուսահատութիւնից դարձեալ մարգարէութիւնն էր, որ պիտի փրկէր ժողովրդին։ Գերութիւնից և Սիոնի վերջնական կործանումից յետոյ մարգարէութիւնն ուրիշ ուղղութիւն բռնեց։ Մինչև կործանումը ժողովուրդն էր հաւատամ իւր պետութեան յաւիտենական գոյութեանը, իսկ մարգարէներն անհրաժեշտ էին համարում նորա շուտափայթ կործանումը. գերութիւնից յետոյ ժողովուրդը յուսահատութեան մէջ է ընկնում, իսկ մարգարէները մէկ միւսի յետևից վերարծարծում են նրա մէջ գեղեցիկ և փառաւոր ապագայի վառ յոյսերը։ Ա-

ռաջուայ ապառնալիքների փոխարէն մարգարէների բերանից լսում են խոստումներ՝ Մեսիայի գալստեան մասին։

Առաջինը Եզեկիէլն է գուշակում, որ քաղդէացիներից ոտնահարուած, գիակնացած ժողովուրդն Աստծու շնչով պիտի վերակենդանանայ. նա յետ պիտի դառնայ սուրբ երկիրը և Դաւթի ցեղից առաջ եկող մի թագաւորի գաւազանի հովանու ներքոյ միանայ, մի հօտ և մի հովիւ դառնայ (Եզ. ԼԷ.)։ Պաղեստինի շրջակայ բոլոր ժողովուրդները պիտի պատժուեն, միայն իսրայէլացիք փառաւորուեն ապագայում։ Իսրայէլի Աստուածն իւր անուան, իւր պատուի համար չի թողնի Սիօնն ու Պաղեստինն աւեր և Իսրայէլը գերութեան մէջ։ Աստուածաբանական այս գաղափարներով տոգորուած՝ Եզեկիէլը գուշակութիւններ է անում ապագայի մասին, որոնք ոչ թէ եղած պատմական փաստերից եզրակացութիւններ են, ինչպէս էին գերութիւնից առաջ ապրած մարգարէների գուշակութիւնները, այլ հեռաւոր ապագայում իրականանալիք երազներ։ Այսպէս ԼԸ. գլխում Եզեկիէլը նկարագրում է, թէ ինչպէս Գոգ և Մագովգ կոչուած մի հիւսիսային վայրենի ժողովուրդ մեացած հեթանոս աշխարհի հետ դրսի պիտի տայ Սիօնի վրայ. բայց դա արդէն վերջինը կլինի։ Սիօնի

Աստուածը բնական արհաւիրքներով՝ անձրևի հեղեղներով, քարէ կարկուտներով, կրակով ու ծծումբով կոչնչացնի նրանց. այն ժամանակ բոլորը կիմանան, թէ ով է միակ, սուրբ Աստուած։

Այս բոլորի միակ պայմանը Եզեկիէլը համարում է այն, որ իւրաքանչիւր հրէայ առանձին առանձին արդար լինի, որպէսզի ամբողջ հրէութիւնը վերածնուի (Տես. ԺԸ.)։ Յուսահատ ժողովուրդը յաճախ ասում էր. մեր մեղքերը ծանրանում են մեր վրայ և մենք փտում ենք նրանց մէջ, ինչպէս կարող ենք առողջանալ, այն ինչ Աստուած Եզեկիէլի բերանով ասում է. *յիրաւի, ես չեմ կամենում մեղաւորի մահը, այլ որ նա դառնայ եւ ապրի*. դարձէք, դարձէք, ինչու էք ուզում մեռնել։ Իսկ այսպէս զղջացած և արդարացած անհատի և ժողովրդի համար ենովան կործանուած Երուսաղէմի փոխարէն մի նոր Երուսաղէմ կշինի, որը ոչ թէ մի աշխարհական պետութեան մայրաքաղաք կը-դառնայ, այլ իւր մէջ կամփոփի մի սուրբ տաճար, որի ժանրամասնութիւնները Եզեկիէլը հոգու աչքերով տեսնում և նկարագրում է, և որի հետ կապուած կլինի մի սրբազան եկեղեցական պաշտօնէութիւն, իսկ սրա մէջ կենդրոնացած կլինի ճշմարիտ աստուածապաշտութիւն և ծիսապաշտութիւն։ Այսանց քաղաքական կեանքը

մոռացուում է. գլխաւորն այն է, որ ծիսապաշտութիւնն իւր իսկական տեղում, նախորոշուած ձևով և որոշ մարդկանց ձեռով կատարուի։ Այն քահանաները, որոնք Երուսաղէմից դուրս գոհում են, իրրև պատիժ պիտի զրկուեն իրենց քահանայական կոչումից և ենթարկուեն Սադովկի ցեղի քահանաներին. նրանք պիտի վարձատրուեն սատուածպաշտութիւնը՝ միայն Երուսաղէմի տաճարում կատարած լինելուն համար։

Արդէն տեսանք, որ վաղ ժամանակուանից Սիօնի սարը գլխաւոր սրբավայրերից մէկն էր համարուում։ Սամարիայի կործանումը և Երուսաղէմի անսպասելի փրկութիւնը Սենեքերիմի ժամանակը՝ էլ աւելի բարձրացրին Երուսաղէմի տաճարի նշանակութիւնը, այնպէս որ 621 թուին՝ Ոմսէ թագաւորի բարենորոգութեան շնորհիւ Երուսաղէմը համարուեց միակ սրբավայր։ Հրէաստանի քաղաքական կեանքի կատարեալ անկումը և օտարների տիրապետութիւնը, որը միայն սատուածպաշտութեանն ազատութիւն էր տալիս, նպաստեցին այն բանին՝ որ հրէութիւնը մի եկեղեցական համայնք դառնայ և կազմակերպուելով կապուի Սիօնի հետ։ Ահա այս էլ էր Եզեկիէլի մարգարէական գործունէութեան նպատակը։

Մինչև Նաբուգոդոնոսի մահը, որն ուժեղ և

իմաստուն կերպով կառավարեց երկիրը, հրէաները յոյս չէին կարող ունենալ հայրենիք վերադառնալու. բայց 562-ից յետոյ Բաբելոնի պետութիւնն սկսեց ընկնել։ Նրա յաջորդը Էվիլմարդոխը 2 տարուց յետոյ գահազուրկ եղաւ իւր փեսի ձեռքով, որը 4 տարի կառավարելուց յետոյ թողեց մի անչափահաս յաջորդ, որին դաւադրութեամբ սպանեց Նաբոնէտ անունով մի իշխան և նորա գահը բարձրացաւ 556-ին։ Սրա օրով մարաց Աժդահակ թագաւորը յաղթուեց իւր վասալ պարսից Կիւրոս թագաւորից և գերի բռնուեց 550-ին, այնպէս որ մարերի փոխարէն առաջաւոր Ասիայում մի մեծ պետութիւն կազմեցին պարսիկները Կիւրոսի առաջնորդութեամբ։ Լիւդիայի Կրէսոս թագաւորը երկիւղ կրելով պարսիկներից՝ դաշն կապեց Եգիպտոսի Ամազիս փարաւոնի և Սպարտայի հետ. այս դաշնակիցներին միացաւ նաև Նաբոնէտը 547-ին։ Բայց Կրէսոսը, առանց իւր դաշնակիցների աջակցութեանն սպասելու՝ պատերազմ սկսեց պարսից դէմ։ Կիւրոսը յաղթեց Կրէսոսին Ալիս գետի ափին. տիրեց նրա մայրաքաղաք Սարդիկային և Կրէսոսին էլ գերի բռնեց՝ տէր դառնալով նրա անբաւ գանձերին։ Այս յաղթութեամբ պարսից պետութիւնն իւր սահմանները տարածեց մինչև Եգէական ծովը 546-ին։

Ամենքի համար պարզ էր, որ կարգն եկել է Բաբելոնին, որ Կիւրոսի և Նաբոնէտի ընդհարումն անխուսափելի է։ Հրէայ ժողովուրդը, որն արդէն մօտ 50 տարի կրում էր բաբելացոց լուծը, հաշտուել էր իւր դրութեան հետ և Բաբելոնի անկումից առանձին օգուտ չէր սպասում։ Միակ բանը, որը նրանց մխիթարել կարող էր, այդ այն կլինէր, որ իրենց միջից մի հերոս դուրս գար, բոլոր հեթանոսների լուծը խորտակէր և Դաւթի թագաւորութիւնը Սիօնում վերանորոգէր։ Ոչ ոք չէր մտածի՝ թէ պարսիկներն և Կիւրոսը Սիօնը պիտի վերականգնեն։

Ժողովրդական այս ընդհանուր վհատութեան դէմ է դուրս գալիս մի ուրիշ մարգարէ որի գրուածները սխալմամբ կցուած են Եսայու մարգարէութեան։ Այս ժամանակում գործող մարգարէին են պատկանում Եսայու մարգարէութեան Խ.—ԿԶ. գլուխները։ Այս շրջանի արդիւնք են նաև Եսայու ԺԱ. 11 — ԺԲ. 6. ԺԳ. 1—ԺԴ. 23. ԻԴ—ԻԷ. ԼԲ. ԼԳ.ԼԵ. գլուխները։

Մխիթարեցէք, մխիթարեցէք իմ ժողովրդին, կանչում է այս Եսային. ասէք, որ նրա մեղքերը թողնուած են։ Անապատում մի ձայն է հնչում, թէ պատրաստեցէք Տիրոջ ճանապարհը, թուղ որոնները խոնարհուեն, ձորերը լցուեն, որովհետև Իսրայէլի Աստուածն իւր ժողովրդին

գերութիւնից ազատած բերում է։ Մարդը խոտ է, եւ նրա փառքը ծաղկի է նման, թառամում է խոտը, թափթափում է ծաղիկը մի ակնթարթում, միայն Աստծու խօսքն է, որ մնում է յաւիտեան։ Մի աւետարեր, բարձրացիր Սիօնի վրայ կանչիր, որ Իսրայէլի ամենակալ Աստուածը ժողովրդին իւր առաջն արած՝ բերում է այնպէս խնամքով, ինչպէս հովիւը իւր հօտը։ Մի կարող է չափել նրա իմաստութիւնը և բացատրել տիեզերքի ստեղծագործութեան գաղտնիքը. Մէջ հետ կարելի է համեմատել նրան. ինչ արժէք ունի նրա համար ողջակէզը. ոչ մի պատկեր կամ արձան չի կարող նրան ներկայացնել։ Մարդիկ և ամբողջ աշխարհ նրա իշխանութեան տակ են, և այդ յաւիտենական Աստուածը միակ մխիթարութիւնն է և ոյժը նրանց համար, որոնք իրենց յոյսը նրա վրայ են դրել։

Թող հաւաքուեն կղզիաբնակ յոյները և ժողովով որոշեն, թէ ով է զարթեցրել արևելքից արդարութեան պաշտպան Կիւրոսին։ Եհովան է բերել նրան, նա է կանչել և շնորհել նրան յաղթութիւն. նրա առաջ թագաւորներն են փախչում, պարիսպներ են խորտակուում, պղնձէ դռներն են բացուում և Կրէսոսի ատորերկրեայ գանձերը նրա աւարն են դառնում։ Աստուած է

օծել Կիւրոսին, նա նրան ընտրել է, որպէսզի իւր ժողովրդի փրկութիւնը գլուխ բերի։ Նա ենովայի կամքով պիտի պատժի և ոչնչացնի բաբելացիներին, իսկ հրէաներին պիտի վերադարձնի իւր երկիրը (ԽԱ. 1—20, ԽԴ. 1—24, ԽԵ. 1—25, ԽԶ. 1—22։)

Բաբելոնի կործանումն անհրաժեշտ է. այդ բանը գլուխ պիտի բերի Կիւրոսը։ Բաբելոնի կուռքերն արդէն սարսափի մէջ են, նրանք շուտով պիտի ծանրութիւն դառնան բեռնակիրներին և գերի դնան։ Փափկացած և քնքշացած Բաբելոնի աղջիկները փէշերը քշտած, ոտները մերկացրած գետեր պիտի անցնեն և օտարութեան մէջ գեանի վրայ նստեն, երկայնք ազան։ (ԽԷ. 1—13.)։ Աստուած բարկացել էր Իսրայէլի վրայ, այդ պատճառով էր մատնել իւր ժողովրդին բաբելացոց ձեռքը, բայց Բաբելոնը այդպէս չէր մտածում. կարծում էր թէ իր զօրութեան շնորհիւ է, որ այդքան երկիրներ է նուաճել։ Նա կարծում է թէ ինքն է, ուրիշ ոչ ոք չկայ։ Նա իւր յոյսը դրել է իւր կախարդութիւնների և հմայութիւնների վրայ. չի իմանում թէ թշուառութիւնն ու կորուստն ինչպէս անսպասելի և յանկարծակի են գալու։ Թող Բաբելացի աստղագէտները երկնքի աստղերը դիտեն,

տեսնենք, կարող են գուշակել ապագան ու փրկուել փորձանքից։

Ո՛չ. Բաբելոնը չի կարող փրկուել, այդ է Եհովայի կամքը։ Նա երկար ժամանակ լռելուց յետոյ՝ պատրաստուում է նոր, շլսուած գործեր կատարելու։ Նա պիտի կործանի Բաբելոնը և Իսրայէլին ազատի, որն աւելի մեծ հրաշք է, քան իսրայէլացիների ազատուելը եգիպտական ծառայութիւնից։ Եթէ Իսրայէլի մեղքերը քաւուել են։ Եթէ այդ ժողովուրդը նորից պիտի վերակենդանանայ, այդ բանը նա պարտական է Եհովային և Նրա զթութեանը, որն այդ բոլորն անում է ցոյց տալու համար Իւր մի, յաւիտենական լինելը հեթանոսական անմիտ աստուծութիւնների հանդէպ։ Արդ առանց վարանելու «ելէք Բաբելոնից, կանչում է մարգարէն, ուրախութեան ձիչ բարձրացրէք, պատմեցէք և լսելի արէք աշխարհի մի ծայրից մինչև միւսը, թէ Տէրփրկել է իւր ծառայ Յակոբին», եթէ անապատում շորութիւն լինի, նա լեռները կը պատռի, ժայռից ջուր կհանի, որ ժողովուրդը խմի և ապահով վերադառնալով իւր հայրենիքը՝ վերաշինի Երուսաղեմի աւերակները, որոնք դրախտ պիտի դառնան. ցնծութեան և ուրախութեան, օրհնութեան և գոհաբանութեան ձայնը նրանից անպակաս պիտի լինի։ Զարթիր, զարթիր Երուսաղէմ

եւ զգեցիր քո նախկին զօրութիւնը, ասում է մարգարէն, որ Տիրոջ ձեռքից՝ նրա բարկութեան և զայրոյթի բաժակը մինչև յատակը քամեցիր, անմխիթար և անօգնական նստար և առաւարանքներով զինուցար. այժմ գարթիր, վեր կաց, քո փառքը զգեցիր, Սիոնի գերի դուստր, վեր դիր քո պարանոցի լուծը, որովհետև Երուսաղէմի աւերակներն ու Պաղեստինի լեռները ցնծութեան ձայն են բարձրացրել. աշխարհի բոլոր ծայրերն իմացան, որ Իսրայէլի Սուրբը փրկել է իւր ժողովրդին։ (ԽԳ. 22 ԽԴ. 23 ԽԹ. 17 Ծ. 13 ԾԱ. 14 ԾԲ. 13 և ԾԵ)։

Այսպէս Իսրայէլի Աստուածն ամենակարող է, տիեզերքի արարիչը, առաջինը և վերջինը։ Նա իւր ժողովրդին հողի է հաւաստացրել նրա մեղքերի պատճառով, բայց հիմա ներելով և գթալով՝ բարձրացնում է նրան, նախ՝ որպէսզի Իւր անունն ու պատիւը փրկի, որ կապուած է այդ Իւր ընտրած ժողովրդի բախտի հետ, և յետոյ, որպէսզի այդ ժողովուրդը կարողանայ ազգերի պատմութեան մէջ իւր դերը խաղալ՝ հեթանոս ազգերի մէջ իւր գոյութեան նպատակին ծառայել։ Չէ՞ որ Եհովան միայն Իսրայէլին էր յայտնուել, որն այդպիսով տէր էր դարձել մի կրօնի, որը բացարձակ արդարութիւն ու ճշմարտութիւն է։ Այս գիտակցութեամբ լի Իսրայէլի ժողովուրդը

մի մեծ պարտք ունի կատարելու, որով ծառայած կլինի իւր գոյութեան նպատակին. դա հեթանոս աշխարհին ճշմարիտ կրօնի քարոզիչ լինելն է։ Եհովան որոշել է, որ իւր ծառան՝ Յակոբը կամ Իսրայէլի ժողովուրդը տիեզերական ճշմարիտ կրօնի առաքելը դառնայ և այսպիսով աշխարհին յաղթի, ոչ թէ սրով, այլ Աստծու խօսքով։ Դնա հեթանոսներին իրաւունք պիտի տվրեցնի առանց աղաղակելու եւ վիճելու։ Նա արդէն իսկ ջախջախուած եղէգը չի կոտրի եւ առկայծող պատրոյգը չի մարի, այնքան անմեղ պիտի լինի. այնուամենայնիւ իրաւունք եւ արդարութիւն պիտի հաստատի այս երկրի վրայ հեթանոսներն ակնկալելով նրան են սպասում։ Եհովայի ծառան է Իսրայէլը և այդ նրան պատիւ պիտի բերի, որովհետև նա նրան փրկել է, որպէսզի նրա միջոցով հեթանոսների հետ էլ ուխտ դնի և նրանց էլ լուսաւորի։ Տէրը նրա լեզուին խրատելու ոյժ պիտի տայ և ուղարկի քարոզելու, առանց բարկանալու նա իւր մէջքը հարուածների դէմ կանի և ծնօտը՝ ապտակի, որովհետև գիտէ որ Տէրը այնուամենայնիւ չի ամաչեցնելու իրեն, այլ իւր նպատակին կհասցնի։ Ամչոտ կլինի նրա տեսիլը եւ անփառունակ, բայց բոլորը պիտի զարմանան, թէ նա ո՞րտեղից բուսաւ։ Ոչ ոք չի հաստատ ակզբում, որ այդ շրջացած ատոր,

նինար ժանտվը, այդ անարգուած եւ նուազած դէմքը մի մեծ կոչման պիտի ծառայի։ Ոչ ոք չի հաւատայ, որ նա, այսինքն Իսրայէլի ժողովուրդը, ծեծուած, իւր ցաւերին համբերատար, մեզ համար է չարչարուում, մեր՝ այսինքն ընդհանուր մարդկութեան մեղքերը քաւելու համար։ Մենք կարծում էինք, որ նրան Աստուած է հարուածում, չարչարում, տանջում, այն ինչ նա մեր մեղքերի և անօրէնութիւնների համար է պատժուում։ Նրա վէրքերով մենք՝ մոլորուած ոչխարներս, պիտի բժշկուենք։ Նա վշտից իւր ընթանը քաց անել չի կարողանում, ոչխարի նման ապանդանց է տարուում եւ անմտանջ կանգնում է իւր ապանողի առաջ։ Որովհետեւ հեզ է, խոնարհ ծագում ունի, այդ պատճառով ոչ ոք չի ուզում նրա դատը պաշտպանել. այն ինչ բոլորովին անմեղ է նա և բարի, բայց և այնպէս անօրէն է համարուում, մահուամբ պատժուում և անօրէնների հետ թաղուում։ «Այս բոլորի նպատակն այն է, որ Եհովայի արդար ծառան ճշմարիտ աստուածանօթութիւնն ու արդարութիւնը տարածի երկրի վրայ։ Նա պիտի հաւատի մարտիրոս դառնայ և իւր արիւնով ճշմարտութեանը պիտի յաղթել տայ (ԽԲ. 1—9, ԽԹ. 4—13, Ծ. 4—11, ԾԲ. 13, ԾԳ. 12)

Այսպէս ուրեմն այս մարգարէի կարծիքով

Իսրայէլը իբրև քաղաքական կեանքով ապրող ազգ՝ մեռնում է բաբելոնեան գերութեան մէջ, բայց հանդէս է գալիս նոր ոյժով՝ ճշմարիտ կրօնի քարոզիչ, առաքեալ, մարտիրոս և վկայ դառնալու։ Եւ հրէայ ժողովուրդը յանձին Յիսուս Քրիստոսի իւր այս մեծ պարտքը պատուով կատարեց։

ԺԵ. ԳԼՈՒԽ

Հրէութեան վերանորոգութիւնը պարսկական տիրապետութեան ներքոյ 539 – 330.

Սարդէսի անկումից յետոյ՝ 538-ին պարսիկները Կիւրոսի զօրավար Կոբրիասի առաջնորդութեամբ յաղթեցին Նաբոնէտին և առան Բաբելոնը։ Մի քանի ժամանակ յետոյ՝ այստեղ եկաւ նաև Կիւրոսը՝ պետութեան գործերը կարգի դնելու։ Այս միջոցին էլ նա թոյլ տուաւ հրէաներին հայրենիք դերադառնալու։ Բայց բոլոր հրէաները չօգտուեցին այս իրաւունքից, որովհետև շատերն այնպէս էին բնակուել Բաբելոնում, որ դժուար էր նրանց համար ամեն ինչ սայլերի կամ բեռնակիրների վրայ բարձած՝ տանել Պաղեստին։ Յատկապէս հարուստ հրէաներից շատերը մնացին Բաբելոնում։ Այս քաղաքը արանից յետոյ դարձաւ հրէութեան երկրորդ

հայրենիք, որը չկորցնելով իւր կրօնն ու ազգութիւնը՝ օգնում էր վերադարձողներին։

Կիւրոսի առաջին տեղապահը լինում է Պաղեստինում Շէշբազար անունով մէկը, իսկ նորան իբրև օգնական տրուում է Զօրաբաբէլը՝ Դաւթի ցեղից։ Պաղեստինի դրութիւնն այս տարում այնքան էլ մխիթարական չէր։ Հիւսիսային մասում ապրում էին այսպէս կոչուած Սամարացիք, որոնք կէս հրէայ, կէս ասորի, մի խառնուրդ ժողովուրդ էին. նրանց կրօնն էլ կէս հրէական, կէս հեթանոսական էր։ Արևմուտքում ապրում էին Ասդոդի փղշտացիները, որոնք դէպի արևելք էին տարածուել, իսկ արևելքում ամմոնացիներն էին հաստատուել։ Բայց հրէաներից ամենից աւելի տուած ժողովուրդ էին եդոմացիները, որոնք օգտուելով հրէաների դժբախտութիւնից՝ նրա հարաւային գաւառներն իրանց էին ենթարկել։ Այս բազմաթիւ ժողովրդների մէջ կային հնուց մնացած հրէաներ, որոնք ոչ միայն ոյժ չունէին հեթանոսներին դիմադրելու, այլ նոյնիսկ արդէն ենթարկուել էին նրանց ազդեցութեանը, այնպէս որ այդ երկրում իշխող լեզուն դարձել էր արամայերէնը։ Վերադարձող հրէաները բնակուեցին Երուսաղէմի մէջը և շուրջը, և անմիջապէս շտապեցին Սիոնի վրայ մի սեղան շինել։ Հրէաների դժբախ-

ություններից Պաղեստինի եղանակները այդ տարի երաշտ էին, որով և հունձքը շատ վատ արդիւնք տուեց. և առհասարակ հանդէս եկան բազմաթիւ արդելքներ։ Օրինակ՝ ճանապարհների անապահովութեան պատճառով չէր կարելի վաճառականութեամբ պարապել, որին սովրել էին նրանք Բաբելոնում։ Պարսիկները բնաւ հոգս չէին քաշում երկրի վրայ, բայց հարկերն ամենայն ճշտութեամբ վերցնում էին։ Տխուր և ճնշուած տրամադրութեամբ հրէայ ազգաբնակութիւնն իրեն հարց էր տալիս. մի՞թէ այս էր մեր սպասած այդքան ցանկալի փրկութիւնը։

Դարեհի թագաւորութեան երկրորդ տարին (520) դրութիւնը մի քիչ դէպի լաւն է փոխուում։ Միաժամանակը հանդէս են գալիս երկու մարգարէներ՝ Անգէ և Զաքարիա, որոնք պահանջում են՝ իսկոյն տաճարի շինութեան ձեռնարկել։ Անգէն դիմում է ժողովրդին և նրա ժեծամեծներին, յատկապէս Զօրաբաբէլին և Յեսու քահանայապետին, որը Սադովկի ցեղից էր, և ասում. ինչպէս է, որ դուք բնակում էք բարեշէն տներում և ուտում խմում էք, իսկ Տիրոջ տունը աւերակ էք թողել. այդ է պատճառը, որ Աստուած ձեր երկրին անձրև չի տալիս և ձեզ հարուածում է անպտղաբերութեամբ։ Սկսեցէք տաճարը շինել և այն ժամանակ Տէրը

երկինքն ու երկիրը շարժման մէջ կդնի, ձեզ օրհնելու և մեծացնելու, ձեզ ոսկով և արծաթով լեցնելու։ Նա կկործանի հեթանոսների թագաւորութիւնները և Զօրաբաբէլին կբարձրացնի։ Այս խոստումով վերջանում է Անգէի իննամսեայ մարգարէական գործունէութիւնը, որի շարունակողը լինում է Զաքարիան։ Սա աւետում է ժողովրդին, թէ Տէրը ողորմել է Երուսաղէմին, որը նորից պիտի ճոխութեամբ և աշխարհի բարութեամբ լեցուի, հրեղէն պարիսպներով պիտի պաշտպանուի, Աստուած ինքը նորից նրա մէջ պիտի բնակուի։ Յեսուն պիտի դառնայ նրա սուրբ քահանայապետը, իսկ Զօրաբաբէլը պիտի Աստծու հոգով զինուած տիրի աշխարհին։

516-ին Տիրոջ տաճարը գլուխ եկաւ, բայց մարգարէների տուած յոյսերը չիրականացան։ Օտարի լուծը ճնշում էր նրանց ինչպէս առաջ։ Միակ ուրախալին այն էր, որ Բաբելոնից ուրիշ հրէաներ էլ յետ դարձան և հաստատուեցին Երուսաղէմի շուրջը, այնպէս որ հրէութիւնը պահպանուեց ու ամրացաւ Երուսաղէմի և Երիքոսի շրջաններում, որն այսուհետև Հրէաստան անունով է յայտնի դառնում։ Երուսաղէմի տաճարն ստացաւ իւր բացառիկ նշանակութիւնն այնտեղ ժողովուած բազմաթիւ քահանաների

շնորհիւ։ Հրէութեան այս աճող ազդեցութեան շնորհիւ շատ հեթանոսներ հրէական կրօն էին ընդունում։ Սամարացիները, ամմոնացիներն և ուրիշները բարեկամական յարաբերութեան մէջ մտան հրէաների հետ. խառն ամուսնութիւններ յաճախ էին տեղի ունենում, բայց հէնց այս հանգամանքն սկսեց վտանգ սպառնալ հրէական կրօնին, որովհետև օտարուհիներն անզգալի կերպով հրէական միաստուածեան կրօնին խառնում էին հեթանոսական կրօնի տարրեր։

Այս վտանգի դէմ հանդէս եկան մաքառողներ, որոնք հրէական համայնքի կրօնական սրբութիւնն ամեն բանից բարձր էին դասում։ Այսպիսով կազմուեց հրէութեան մէջ երկու կուսակցութիւն, մէկը նախանձայոյզ բարեպաշտների, իսկ միւսը անտարբերների։ Քահանաները թէպէտ մեծ մասով պատկանում էին առաջին կուսակցութեանը, բայց նրանց մէջ կային նաև անտարբերներ։ Ահա սրանց պախարակելու և յանդիմանելու համար է գրուած Մաղաքիայի անունով մնացած մարգարէութիւնը, որից երևում է, որ բարեպաշտների թիւը փոքր էր և նրանց տրամադրութիւնը ճնշուած. բայց մարգարէն մխիթարում, յոյս է տալիս, որ շուտով դատաստան պիտի լինի, համայնքի մէջ եղած դարժանը ցորենից պիտի զատուի։ Անտարբերները

բոլորը պիտի ոչնչանան, բայց որպէսզի կոտորածը շատ մեծ չլինի, առաջ պիտի գայ մէկը, որը վերջին անգամ նախազգուշացնի նրանց։

Այդ մէկը Եզրաս գրիչն էր, որը 458 թուին պարսից Արտաշէս Երկայնաբազուկ թագաւորից (464—424) իրաւունք ստացաւ 1496 տարով Բաբելոնից Պաղեստին վերադառնալու, որոնց միացան 38 դևտացիներ և 220 եկեղեցական տորին պաշտօնեաներ։ Եփրատի ափին՝ Անավա կոչուած տեղում խմբուեց այս գաղթողների մեծ կարաւանը. Եզրասի պատուէրի համաձայն ծոմապահութեամբ խնդրեց Աստծուց յաջողութիւն իրենց դժուար ճանապարհորդութեան ժամանակը։ 12 քահանաներ և 12 դևտացիներ տանում էին Բաբելոնի հարուստ հրէաներից տաճարին տուած նուէրները։ Ապրիլին ճանապարհ են ընկնում. օգոստոսին հասնում են Երուսաղէմ և մատուցանում են շնորհակալութեան զոհեր (Տ. Եզր. Ը. գլ.)։

Եզրասը տեսաւ, որ պարսից տեղապահը բընակուում է Սամարիայում և տեղական այնտեղի ազնուականներն են գլխաւոր դերը խաղում կառավարութեան մէջ, իսկ նրանք պատկանում էին անտարբերների կուսակցութեանը։ Իւր հասնելուց 4 ամիս յետոյ՝ դեկտեմբերին նա մի ժողով է գումարել տաճիս Երուսաղէմում, որտեղ

ընդունել է տալիս այն միտքը, թէ խառն ամուսնութիւնները պղծում են Իսրայէլի սրբութիւնը, ուրեմն անհրաժեշտ է, որ հրէաներն այլ ևս օտարուհիների հետ չամուսնան, իսկ այն հրէաները, որոնք հեթանոս աղջիկների հետ են ամուսնացել, պարտաւորուում են արձակել իրենց կանանց. բայց այս վերջին որոշումը հեշտ չեղաւ իրականացնել, մանաւանդ որ շուտով քաղաքական մթնոլորտը նորից խառնուեց։

Եգիպտոսում Մեկաբուզոս անունով մի բրնաւոր ապստամբեց պարսիկներից։ Արտաշէս թագաւորը երկար ժամանակ ստիպուեց կռիւ մղել այս ապստամբութիւնն ընկճելու համար։ Հրէաները կամենալով օգտուել պարսիկների այս նեղ դրութիւնից՝ սկսեցին Երուսաղէմի շուրջը պարիսպ շինել, որով կարող էին աւելի հեշտ պաշտպանուել արտաքին ազդեցութիւններից։ Բարեպաշտները շատ էին ցանկանում այս գործը գլուխ բերել (տ. սաղմ. Ծ. 20), բայց Սամարիայում նստող փոխարքան գործը չվերջացրած արգելեց։ Պարիսպը մի քանի տեղից ճեղքել և դարպասներն էլ այրել տուեց։

Երկար չտևեց այս տխրութիւնը. Արտաշէս՝ պարսից թագաւորի հրէայ մատուակը՝ Նեեմիան այս տխուր լուրերն ստանալով Երուսաղէմից, խնդրեց իւր բարերար թագաւորից՝ իրաւունք

տալ՝ վերադառնալու և իր հայրենի քաղաքը վերաշինելու։ Թագաւորը յանձնարարական թղթեր է գրում Եփրատից դէպի արևմուտքը գրաւուած իր պաշտօնեաներին, որ աջակցեն Նեհեմիային իր ձեռնարկութեան մէջը և անտառապահներին, որ փայտ մատակարարեն նորա շինութիւնների համար։ Այսպէս մեծ իրաւունքներով լիազօրուած՝ նա եկաւ Երուսաղէմ 445-ին և սկսեց կարգադրութիւններ անել, առանց պարսից պաշտօնեաների կամ հրէայ ծերերի խորհուրդը հարցնելու։ Իսկոյն ձեռնարկեց միահամառ ոյժով պարսպի շինութեանը. միայն երեք օտարազգի ազնուական ընտանիքներ, որոնք Երուսաղէմի հարաւառ հրէաներին՝ մինչև իսկ քահանայապետի հետ խնամիացել էին, շատ արգելքներ յարուցին։ Աշխատում էին սամարացիներին գրգռել նրա դէմ. պատրաստուեցին մինչև իսկ զինշերային յարձակմամբ քանդել կիսաշէն պարիսպները, բայց այս բոլորն անցան ապարդիւն (Տ. Նեհեմի Դ. գլ.)։

Մի ուրիշ հանգամանք, քիչ էր մնացել, խանգարէր իր վաղճանին հասնելու մօտ գործը։ Երուսաղէմի ազգաբնակութեան մէջ կար խիստ մեծ դասակարգային տարբերութիւն։ Ժողովրդի մի խոշոր տոկոսն ազքատ էր. մի քանի հարուստների ձեռքն էին անցել քաղաքացիների ազքատ

դասակարգի կայքը և գոյքը, մինչև իսկ շատերը դարձել էին նրանց սեփական իրենց պարտքի փոխարէն։ Պարիսպների շինութիւնը խանգարում էր սրանց՝ աշխատանք անել և իրենց պարտքերը տալ։ Նրանք բացարձակ մի աղմկալի ցոյց արին և գանգատուեցին Նեեմեային, որն իսկոյն այդ հարուստներին ժողովի կանչեց և ստիպեց, որ նրանք իրենց գրաւականներից և պարտքի տոկոսներից հրաժարուին։

Երբ այս խնդիրն էլ կարգադրուեց, Նեեմիայի թշնամիները մտածեցին ուրիշ կերպ ոչնչացնել նրան։ Նրանք կազմեցին մի դաւադրութիւն, որի համաձայն ուզում էին Նեեմիային խաբել և քաղաքից դուրս տանելով սպանելը այս էլ չյաջողուեց, ուզեցին պարսպի տակը փորելով քաղաքի մէջ խռովութիւն յարուցանելով կամ պարսից թագաւորի մօտ նրան իբրև ապստամբ յայտարարելով նրա գործը կանգնեցնել։ Բայց այս բոլորը չօգնեց. պարիսպները շինուեցին և նրանց վրայ պահապաններ կարգուեցին, որոնց հրամանատար դարձաւ Նեեմիայի եղբայրը՝ Անանիան։ Քաղաքի ազգաբնութիւնը շատացնելու համար, նա պատուիրում է, որ շրջակայքից ամեն տաս հոգուց մէկը քաղաքը տեղափոխուի։

Այս բոլորը կարգադրելուց յետոյ, նա վե-

բաղանում է Շոշ իւր թագաւորի մօտ, բայց 12 տարի յետոյ 432-ին նորից է գալիս Պաղեստին, որտեղ Երուսաղէմում կարգերն աստուածահաճոյ լինելուց շատ հեռու էին։ Շաբաթը սուրբ չէր պահւում, աւելի շուտ այդ օրերում Տիբրոսից գալիս էին մանրավաճառներ և քաղաքում ոչնչավաճառ էին տարքում։ Խառն ամուսնութիւններին նոյնպէս վերջ չէր տրուած։ Շաբաթ օրերի համար նա կարգադրում է, որ Երուսաղէմի դարպասներն ուրբաթ երեկոյեանից մինչև շաբաթ երեկոյ փակ պահեն, իսկ երկրորդի համար՝ նա թէ աղքատներին և թէ ազնուականներին երդուեցրեց, որ խառն ամուսնութիւններ չկատարեն։ Յետոյ տաճարի տասանորդը կանոնաւորելու համար կազմեց մի յանձնաժողով, որը տուրքերը հաւաքէր և արդարութեամբ բաժանէր քահանաների և տաճարի այլ պաշտօնեաների վրայ։ Ղեւտացիներին և տաճարի երգիչներին նա հաստատուն ռոճիկ կապեց, որպէսզի նրանք ապահովուեն և այլևս ստիպուած չլինեն երկրագործութեամբ պարապելու։ Առհասարակ տաճարի պաշտօնէութեան դրութիւնը կանոնաւորեց։

Այս բոլորից յետոյ՝ նա աշնան կողմը մի ժողով գումարեց Երուսաղէմում, որպէսզի նրա առաջ եղբայր կարդայ Բաբելոնից իւր հետը բե-

բած Մովսէսի օրինաց գիրքը, ինչ որ անյապաղ կատարուում է։ Գրքի ընթերցումը առաջ է բերում մեծ յուզում ժողովրդի մէջ. նոքա մեծ սուգ են անում, նրա համար որ մինչ այդ նրանք չեն պահել այդ օրէնքները։ Բոլոր հոգևորական և աշխարհական աւագները՝ թուով 95 հոգի՝ երդմամբ և անէծքով պարտաւորուում են Եզրասի կարդացած օրինաց գրքի համաձայն վարուել։ Այդ օրինաց գիրքը պատրաստուած էր Բաբելոնում գտնուող գիտուն քահանաների ձեռքով, որը և պաշտօնապէս ընդունուելով՝ միացաւ հրէից ս. գրքին (Տես. Նեեմի Ը. Թ.)։

Այս նոր կարդացած օրէնագիրքը, որն Աստուածաշնչի մէջ «Ղևտական» է կոչուում, մեծ ուշադրութիւն է դարձնում պաշտամունքի, ծէսերի և այլ կրօնական սովորութիւնների վրայ, որոնց կրողն ու ներկայացուցիչն է տաճարի պաշտօնէութիւնը՝ քահանայապետը։

Այսպէս կազմակերպուեց հրէութիւնը մովսիսական օրէնքի հիման վրայ Եզրասի և Նեեմիայի ջանքերով և փրկեց իւր ազգութիւնն ու կրօնը, որոնց գոյութեանը բաբելոնական գերութիւնը այնպէս մեծ հարուած էր հասցրել։ Կրօնական եկեղեցական կարգերով զօրեղացած նա այնուհետև կարողացաւ դիմադրաւել բոլոր հարուածներին։

Այսպիսի մի հարուած էր ասորական այն ապստամբութիւնը, որը տեղի ունեցաւ Արտաշէս Օխոս պարսից թագաւորի ժամանակ, որին միացան շատ հրէաներ։ Արտաշէսի զօրավար Բագոսը՝ ճնշեց այդ ապստամբութիւնը և շատ հրէաների գաղթեցրեց Վրկանաց աշխարհը։ Աւելի ծանր էր այն երկպառակութիւնը, որն ընկաւ Երուսաղէմի և Սամարիայի մէջ։ Վերջինս տեսնելով, որ Եզրասի և Նեեմիայի շնորհիւ Երուսաղէմն առաջ է գնում և ձգտում է իրեն իւր կարգերին ենթարկել, վերջնականապէս բաժանուեց նրանից։ Սամարիայի մի ազնուական ընտանիք՝ Սանբալատը Սիւքեմի մօտ Գերազիմ սարի վրայ շինում է մի տաճար՝ և Երուսաղէմի օրինակով կարգում է մի պաշտօնէութիւն, որով կրօնապէս Սամարիան ընդմիշտ բաժանուում է բուն հրէութիւնից։

Չնայած այս աննպաստ հանգամանքներին՝ հրէութիւնը Երուսաղէմում և շրջակայքում գրնալով զօրեղանում էր։ Շրջակայ ժողովուրդները՝ ինչպէս և տիրապետող պարսիկները սկսեցին Երուսաղէմի քահանայապետի վրայ նայել իբրև հրէութեան թէ կրօնական և թէ քաղաքական ներկայացուցչի վրայ։ Նա ժամանակի ընթացքում դարձաւ էթնարխ-ազգապետ, որն իրաւունք ունէր ծիրանի և «սատղանիշ» կրե-

լու։ Քահանայապետը նախագահում էր Երուսաղէմի ծերակոյտին, որը կազմուած էր այդ քաղաքի ազնուական դասակարգի ներկայացուցիչներից։ Մի անգամ որ քահանայապետը ծերակոյտում տեղ բռնեց, հասկանալի է, որ ժամանակի ընթացքում այդ քահանայապետի ընտանիքի անդամները, իբրև ազնուական քահանաներ, նոյնպէս պիտի դառնային անդամ այդ ժողովի։ Այսպէս առաջ եկաւ ազնուական և սաորին դասակարգի քահանայութիւնը հինգերորդ դարի վերջում։ Բարձր ազնուականութեան դասակարգին պատկանող քահանաները կոչուում էին Սադովկի որդիներ. միջին տեղը բռնողները՝ Ահարոնի որդիներ էին անուանուում, իսկ սաորիները, որոնք ծագում էին հին զաւառական քահանայական տներից, կոչուում էին դևտացիներ։ Տաճարում կային դեռ աւելի սաորին կարգի ծառայողներ, որոնք մասամբ Նաթինացիներ և մասամբ էլ երգիչներ էին անուանուում։

Տաճարի պաշտամունքի մէջ երաժշտութիւնը՝ թէ երգեցողութիւնը և թէ նուագածութիւնը՝ շատ կարևոր տեղ բռնեց։ Առաջ երգում կամ նուագում էր ամբողջ համայնքը, իսկ յետոյ այդ բանը վերապահուեց երգեցիկ խմբին, այն ինչ համայնքը որոշ տեղերում «ամէն»

կամ «Ալէլուայ» երգելով միանում էր նրան։ Գլխաւորապէս երգում էին Սաղմոսներ, որոնք միայն ծիսական բովանդակութիւն չունէին, յաճախ անհատական սրտի զեղումներ էին, որոնց վրայ յետոյ եղանակ էին դնում և աստուածպաշտութեան յարմարեցնում. այս են ցոյց տալիս շատ սաղմոսների վերնագիրները։

Բայց Տաճարը միայն չէր կարող բաւականութիւն տալ հրէութեան հոգևոր պէտքերին, մանաւանդ գաւառի ժողովրդին։ Այս պատճառով առաջ եկան հին գաւառական սրբավայրերի փոխարէն ժողովարաններ, որոնք ծագումն էին առել Բաբելոնում։ Պաղեստինի ժողովարանները նոյնպէս կրօնական մխիթարութեան յատկացուած հիմնարկութիւններ էին, առանց զոհերի և առհասարակ ծէսի։ Շաբաթ օրերը հաւաքուում էր այնտեղ ժողովուրդը. նրա համար կարդում էին գաւառի գիտունները և օրէնսգէտները, որոնք ընդհանուր անունով դպիր էին կոչուում, ժամանակն օրէնքից կամ մարգարէութիւնից որոշ կտորներ և բացատրում էին, ապա համայնքը մի ընդհանուր աղօթք էր երգում և դրանով վերջանում էր ժամապաշտութիւնը։

Բաբելոնեան գերութեան մէջ օրէնքի և մարգարէութեան ընթերցանութիւնն ու մեկնութիւնը վերապահուած էր քահանաներին, բայց

Պաղեստինում քահանայութիւնը խմբուեց տա-
ճարի շուրջը. իսկ քահանաների դասակարգից
ծագած այն մարդիկ, որոնք մնացին գաւառում
և հետևաբար իրաւունք չունէին այն տեղերում
ոչէ ծեսի կամ արարողութեան մասնակցել տա-
ճարից հեռու գտնուելու պատճառով, ստիպուե-
ցին բաւականանալ ժողովարարներում օրէնքի և
մարգարէութեան ընթերցանութեամբ և բացա-
տրութեամբ, այդ պատճառով էլ կոչուեցին գր-
պիրներ։ Դրանք իւր ժամանակի գրականագէտ-
ները, գիտուններն և ուսուցիչներն էին։ Գերու-
թիւնից առաջ իսրայէլացին կրօնը ոչ թէ գրքի
վրայ էր սովորում, այլ բերանացի, կենդանի
խօսքի կամ քարոզի միջոցով։ Գերութիւնից յետոյ
էր, որ հրէութիւնը սովրում էր իւր կրօնը
նախկին մարգարէների գրուածքների վրայ։ Այս
շրջանում մարգարէութիւնը չէր կարող առաջ
գնալ, որովհետև մարգարէն միշտ էլ եղել է Աստ-
ծուց և խղճից ինքնաբուղխ կերպով թելադրը-
ուած ազատ խօսքի ներկայացուցիչն ու քարո-
զիչը։ Գերութիւնից յետոյ հաւաքուեցին Իսրայէ-
լին տրուած օրէնքի և մարգարէութեան վերա-
բերեալ գրքերը, որոնց ընթերցանութիւնը և ու-
ղիղ բացատրութիւնը հրէայ համայնքի համար
անհրաժեշտ պահանջ դարձաւ։ Հրէան այժմ
կարող էր Աստծու օրէնքի և մարգարէական

պատգամների հետ ծանօթանալ, եթէ նա գրաճանաչ լինէր։ Այսպիսով կրօնական պահանջն ստիպեց, որ իւրաքանչիւր հրէայ գրել, կարդալ սովրի և ապա թէ կրօնը սովորի։ Կրթութիւնն ու բարեպաշտութիւնն անբաժան ընկերներ դարձան, որոնք միացած էին յատկապէս դպիրի անձի մէջ։

Պարսից տիրապետութեան ներքոյ կամաց կամաց հրէաների տնտեսական դրութիւնն էլ բարւոքուեց։ Նրանց գլխաւոր զբաղմունքն էլի երկրագործութիւնն էր. վաճառականութիւնը այնքան չէր կարող զարգանալ, որովհետև պարսից պետութիւնը՝ մանաւանդ վերջին շրջանում չէր կարող ճանապարհների ապահովութեան վրայ հոգալ, այդ պատճառով աւազակութիւնն Ասորիքում խիստ զարգացել էր։ Հրէայ երկրագործ ժողովուրդը Պաղեստինի արգաւանդ հողի վրայ շատ արագ աճեց և բազմացաւ։ Որդիաշատ ընտանիքը պատիւ էր բերում ընտանիքի հօրն ու մօրը։ Բացի դրանից հրէութիւնն աճում էր շատ օտարազգիներ իւր մէջ ձուլելով. այնպէս որ սրանց պատճառով աննկատելի կերպով ընտանիքներում խօսակցական լեզուն դարձաւ արամերէնը. իսկ եբրայեցերէնը դարձաւ գրոց լեզու՝ գրաբար։ Ժողովարաններում դպիրներն ստիպուեցին կարդալ ս. գիրքը եբրայեցերէն, յետոյ թարգմանել և բացատրել այդ արամերէնով. ահա ս. գրքի

կէս թարգմանութիւնն ու կէս բացատրութիւնն է, որ յետագայում կոչուում է թարգում։

ԺԶ. ԳԼՈՒԽ

Հրէական բարեպաշտութիւնը

Եգիպտի և Նեղոսի շնորհիւ, ժողովրդական օրէնքի հիման վրայ, պարսկական շրջանում կազմակերպուեց, ինչպէս տեսանք, պաշտօնական հրէութիւնը։ Հրէայ ժողովրդի եկեղեցական և քաղաքական կեանքի հիմքը կազմում էր օրէնքը. բայց օրէնքը միայն չի կարողանում լիակատար գաղափար տալ այդ ժամանակուայ հրէութեան բարեպաշտութեան մասին։ Ճիշտ է, մարգարէութիւնը մնում էր, բայց պակաս չէին հրէաների մէջ կրօնական զգացմունքով լցուն անհատներ, որոնք կրօնական կեանքն ու զգացմունքն ուժեղ և ցնցող կերպով արտայայտէին կրօնական բանաստեղծութիւնների՝ յատկապէս սաղմոսների մէջ։

Սաղմոսարանը պարունակում է 150 կրօնական երգեր կամ սաղմոսներ, որոնք բաժանուում են հինգ մասի։ Նրանք ծագել են զանազան ժամանակում, բայց գլխաւորապէս երգուել են այս շրջանում։ Բովանդակութեանը նայելով՝ նրանք կամ փառաբանական և շնորհակալական

երգեր կամ ողբեր կամ պարզ աղօթքներ են և կամ խրատական հատուածներ։ Սաղմոսերգուն յայտնում է մեզ, թէ ինչպէս նա իւր սիրտը բաց անելով Աստծու առաջ՝ նրա հետ խօսում կամ աղօթում է, որից մենք իմանում ենք, թէ այն ժամանակուայ հրէան ինչ ցաւերով է տառապել և ինչ յոյսերով ոգևորուել։ Որովհետև մարդկային սիրտը մի նաւի է նման ալեկոծուած ծովի վրայ. կատաղի մրրիկները աշխարհի չորս անկիւնից նրան հանգիստ չեն տալիս։ Ապագայում գալիք դժբախտութեան հոգսն ու երկիւղը մի կողմից, ցաւն ու կսկիծը ներկայ չարիքի հանդէպ միւս կողմից, յոյսն ու հպարտութիւնը գալիք երջանկութեան պատճառով՝ երրորդ կողմից և վերջապէս վստահութիւնն ու հրճուանք ներկայ բարիքների հանդէպ՝ չորրորդ կողմից, ահա սրանք են, որանցից տարուած մարդկային սիրտն շտապում է մի նաւահանգիստ գտնել, հաւատի հաստատուն խարիսխը ձգել և անապատելի փրկութեան վրայ ուրախացած՝ երգել Աստծուն «*մենք կրակից եւ ջրից անցանք եւ դու մ'եզ բերիր հանգստանարան*»։ Հրէի դէպի իւր Աստուածն ունեցած վստահութեան լաւագոյն արտայայտութիւնն է տալիս Ամբ. սաղմ. «Աստուած մեր ապաւէնն է և զօրութիւնը, երգում է սաղմոսերգուն, հաւատարիմ օգ-

նական նեղութեան մէջ. այդ պատճառով չենք վախենում մենք, եթէ երկիրը խռովուի և լեռները սասանեն և ծովը թափուեն։ Թող մռնչեն, փրփրեն ալիքները՝ ինչքան կուզեն, թող լեռները նրա մռնչիւնից դողդողան, զօրութեանց տէրը մեզ հետ է, Յակոբի Աստուածը մեր ամրոցն է։ Բարձրեալը մի գետ է, որի ջրերն Աստծու քաղաքն են ուրախացնում. Աստուած նրա մէջն է, դրա համար չի սասանի։ Աստուած կօգնի նրան, երբ արշալոյսն է բացուում։ Ժողովուրդները խռովում են, պետութիւնները սասանում. ճայթում է որոտը. երկիրն է դողում, բայց Զօրութեանց Տէրն մեզ հետ է, Յակոբի Աստուածը մեր ամրոցն է։ Եկէ՛ք եւ տեսէ՛ք Տէրոջի գործերը. ի՜նչ հրաշքներ է կատարում երկրի վրայ. երկրի բոլոր ծայրերից պատերազմին վերջ է տալիս. աղեղները ջարդում, նետերը փշրում. կառքերը կրակով է այրում։ Շտապեցէք եւ տեսէ՛ք, որ ես Աստուած եմ. յաղթանակում եմ ազգերի վրայ. տիեզերքի վրայ եմ յաղթանակում։ Զօրութեանց Տէրն մեզ հետ է. Յակոբի Աստուածը մեր ամրոցն է։

Բայց ամեն ժամանակ սաղմոսների մէջ այսպիսի վեհ, հիասքանչ տրամադրութիւն չի տիրում. թէպէտ Սիօնը վերաշինուած էր, բայց օտարի լուծը ճնշող էր։ Մեսիական փրկութեան

գուշակութիւնը, որի իրականանալուն հրէաները լարուած սպասում էին, ուշանում էր, գլուխ չէր գալիս։ Եհովայի պաշտամունքի վերանորոգութիւնը և օրէնքի ուսումնասիրութիւնն ու պահպանումը համարուում էին նախապատրաստութիւն Մեսիայի գալուն։ Անընդհատ խրնդրում էր հրէան, որ շատ մօտիկ ապագայում նա գայ. բայց իրականութիւնը չէր համապատասխանում այն յոյսերին։ Այդ ակնկալութիւնների աղբիւրը նախկին մարգարէներն էին և ոչ թէ պատմական և ժամանակակից դէպքերի հետևութիւններ. միայն երբ սարսափ ազդող երևոյթներ էին տեղի ունենում բնութեան կամ մարդկային հասարակութեան մէջ, ինչպէս օրինակ պատերազմ, արևի կամ լուսնի խաւարումը, հրէան ենթադրում էր, որ դրանք մօտեցող փրկութեան ազդանշաններն էին. բայց երբ այնուամենայնիւ սպասուող փրկութիւնը չէր գալիս, հրէան այդ բանը բացատրում էր իւր մեղքերից։ *Արջերի պէս մոմռում ենք, աղաւնիների պէս մնջում անհամբերութեամբ եւ կարօտով սպասելով*, բայց մեր չարիքները բացատրում են ուշանալու պատճառը. ասում է մի սաղմոս։ Գերութիւնը, ինչպէս երևում է, դեռ բաւական չէր, պէտք է իսրայէլի ճնացորդը մի անգամ էլ ջոկջկատուի։ Բաբելացու հրէաներն

սպասում էին մի մեծ դատաստանի. գլխաւոր դատաւորները պիտի լինէին հեթանոսները, որովհետեւ նրանց իշխանութիւնը պիտի ոչնչանար։ Նրանք վերջին անգամ պիտի հաւաքուեն Երուսաղէմի վրայ, բայց պիտի խորտակուեն (Տ. Եզ. ԼԸ. ԼԹ. Յովէլ Գ. Զաքարիա ԺԲ. ԺԴ. Միքա Գ. 5—7. Սոփոնիա Գ. Ամբակում Գ.)։ Նրանք բոլորը պիտի հպատակուեն Եհովային։ Հրէի իդէալն էր, իրենց կորցրած քաղաքական իշխանութիւնը, Դաւթի թագաւորութիւնը վերականգնել, որպէսզի Իսրայէլի ժողովուրդը տիրապետող լինի, իսկ մի Մեսիա՝ միապետ։ Այսպէս ՀԹ. Սաղմ. ասում է. *Զօրութեանց Աստուած, մինչեւ ե՞րբ մեզ վրայ բարկանաս. դու կերցրիր մեզ արտասուքով շաղախուած հաց եւ խմեցրիր դառն արցունք. մեզ մեր թշնամիների ծաղրի առարկան դարձրիր... դարձիր նայիր քո այգուն և դարման տար. թող քո ձեռքը լինի այն Մարդու որդու վրայ, որին դու մեծացնում ես զօրութեամբ։* Զօրութիւնների տէր Եհովա, նորացիր մեզ, ցոյց տուր մեզ Քո երեսը, որպէսզի փրկուենք։ ՁԸ. ՃԴ. ՃԼԱ. սաղմոսները Մեսիայի գալստեան յոյսն են արտայայտում։ Նման բովանդակութիւն ունի ՃԹ. սաղմոսը, ուր օծեալ թագաւորը՝ Մեսիան, ամբողջ Իսրայէլի թագաւորը պիտի դառնայ. բայց նա հանդէս պիտի գայ է գալիս նաև իբրև քա-

հանայ։ Նրա ապագայ Մեսիական փառաւոր թագաւորութեան մասին, որը Սիօնում պիտի հիմնուի, պատմում են ԶԶ. և մանաւանդ ՀԱ. սաղմոսները։

Նկատելի է՝ որ Մեսիայի գաղափարն Իսրայէլի մէջ շատ բարդ է։ Նա համարուում է երբեմն թագաւոր՝ Դաւթի սերնդից, Աստծու շնորհներով օժտուած, երբեմն քահանայ կամ քահանայապետ՝ օծուած Աստծուց, որը քաղաքական իշխանութիւն էլ պիտի ունենայ, երբեմն Իսրայէլի ժողովուրդն իւր ամբողջութեամբ հանդէս է գալիս իբրև ներկայացում անարդար կերպով շարչարուող և տանջուող Աստծու ծառայ՝ Մեսիան, որը յետոյ պիտի փառաւորուի և իւր կրած տանջանքների շնորհիւ՝ Աստծու թագաւորութիւնն այս երկրի վրայ հաստատի. բայց երբեմն էլ այդ թագաւորութիւնը հաստատողը լինում է ոչ թէ Մեսիան, այլ Աստուած Ինքը (Տ. ՂԲ.—ՂԸ. սաղմ.)։ Քրիստոնեան հաւատում է, որ Իսրայէլի ժողովրդի այս յոյսերն ու ակնկալութիւններն իրենց կատարումը գտան Յիսուս-Քրիստոսի մէջ։

Բոլոր սաղմոսները միայն ապագայի յոյսերով չեն տոգորուած։ Բարեպաշտ հրէան միշտ էլ զգնուում էր իւր Աստծու հետ կենդանի յարաբերութեան մէջ. և Աստուծու և մարդու այս

յարաբերութեան մասին երգում է Ը. սաղմոսը։ Սաղմոսասացը հիացած տիեզերքի մեծավայելչութեան վրայ՝ միտք է անում, թէ՝ թէպէտ տիեզերքի մեծութեան առաջ մարդը փոքրիկ է և նուազ, այնուամենայնիւ Աստուած նրա վրայ ուշադրութիւն է դարձրել և նրան իւր արարչագործութեան վրայ իշխան է կարգել։ Անշուշտ բարեպաշտ մարդու յարաբերութիւնն Աստծու հետը աւելի սիրտ պիտի լինի. բարեպաշտն իւր յոյսն Աստծու վրայ է դնում ինչպէս երջանկութեան նոյնպէս և ապերջանիկ ժամերին (Տ. Զ. ԺԷ. ԻԲ. ԻԴ. ԻԵ. ԼԲ.)։

Չնայած այն հանգամանքին, որ բարեպաշտը գտնուում է նեղութեան, հիւանդութեան կամ հալածանքի մէջ, բայց նա յոյս ունի, որ ամենակարող Աստուած իրեն օգնութեան կ՚հասնի, կ՚փրկի և ինչպէս հոգեկան նոյնպէս և ֆիզիքական անգորրութիւն կպատճառի։ Հրէան կարծում էր, որ գժբախտութիւնը մեղքի հետևանք է. այդ պատճառով բարեպաշտ հրէան հեռախուզելով իւր ներքին աշխարհը և իրեն մեղաւոր գտնելով իւր Տէր Աստուծու առաջ՝ ապաշխարութեան սաղմոսներ է մրմնջում. (Տ. Ծ. ԼԱ. ԼԸ. ՃԱ. ՃԹ.) բայց երբեմն էլ վշտանալով և գայրանալով մեղաւորի անզգամութեան վրայ՝ անէծք է թափում նրա գլխին (Տ. Է. ԼԴ. ԿԸ.

ՃԸ.)։ Բարեբախտաբար անէծքով և սաստկութեամբ լի սաղմոսները քիչ են, այն ինչ սաղմոսների մէջ տիրապետող զգացմունքը շնորհակալութիւնն է։ Բարեպաշտ հրէան շնորհակալ զգացմունքներով լի՝ օրհնում, փառաբանում է իւր այն Աստծուն, որն ամենակարողութեամբ և իմաստութեամբ ստեղծել և կառավարում է տիեզերքը Տ. ՃԳ։ Նա ամենազէտ է և ամենուրեք. Նա քննում է մարդկանց հոգին, բայց ինքը մարդկանցից չի ըմբռնուում։ Յաւիտենական Աստուածը մարդկան և բնութեան մէջ է հանդէս բերում իւր փառահեղութիւնը, այդ պատճառով սաղմոսացը հրաւիրում է փառաբանել Տիրոջը (Տ. ԻԸ. ՃԸ. ՃԽԹ. ՃԾ.)։

Այս սաղմոսներում միաստուածութեան գաղափարն իւր կատարեալ արտայայտութիւնն է գտել։ Այդ մի և յաւիտենական Աստուածը, Որն իւր ամենակարողութեամբ և վեհութեամբ տիեզերքի ոչ մի երևոյթի հետ չի համեմատուում, այնուամենայնիւ մի վերացական գաղափար չէ. Նա կարուած չէ բնութիւնից և մանաւանդ մարդկանցից։ Նա միշտ կառավարում է տիեզերքը և անօրինում նոյնիսկ ամեն մի անհատի վիճակը։ Նա քննում է մարդկանց սրտերը. բարիներին վարձատրում, իսկ չարերին պատժում։ Բայց սաղմոսների շատ տեղե-

ըից երևում է, որ հրէաների մէջ մարդիկ կան, որոնք կարծում են, թէ Աստուած մարդկանց բախտով չի հեռաքրքրուում, կամ եթէ բարձրաձայն այդ չեն էլ ասում, բայց այդպէս վարուում են։ Բարեպաշտ հրէի համար այդպիսի կարծիք ունենալը հաւասար է անհաւատութեան, անաստուածութեան։ Եթէ Աստուած ոչ մի տարբերութիւն չի դնում բարի և չար մարդկանց մէջ, այն ժամանակ ինչ հարկաւոր է բարեպաշտ լինել։ Բարեպաշտ հրէան ցանկանում է վարձատրուել, ոչ միայն որպէսզի ինքը երջանիկ լինի, այլ նաև որպէսզի դրանով արդարութեան պաշտպան Աստծու գոյութիւնն ապացուցուի։ Պիտի դրանով ցոյց տրուի, թէ հնարաւոր է Աստծուն մօտենալ, նրա հետ մօտիկ յարաբերութեան մէջ լինել և նրանից շնորհք խնդրել։ Աստուած այս երկրի վրայ պիտի ցոյց տայ իւր ողորմածութիւնը բարեպաշտներին և իւր ցասումն անաստուածներին, որպէսզի իմացուի թէ բարեպաշտութիւնը մի օգուտ է բերում։ Անդրգերեզմանական-յաւիտենական կեանքի մասին հրէան գաղափար չունէր. ապա թէ ոչ, նա կմխիթարուէր այն յոյսով, թէ՝ եթէ իւր բարեպաշտութիւնը ներկայումս չի վարձատրուում, ապա այդ տեղի կունենայ այն միւս կեանքում. բայց որովհետև հրէի հայեացքով ժողովուրդը և

ոչ թէ անհատը՝ յաւիտենական կեանքի յոյսեր կարող է ունենալ, այդ պատճառով անհատի սրտում ծագում են տանջող առեղծուածներ. նա տեսնում է, որ այս աշխարհի վրայ մարդու ներքին արժանիքի և նրա արտաքին բարեկեցութեան մէջ հակասութիւն կայ։ Գայթակղուում է մարդը այն բանից, որ յաճախ ոճրագործը բարեկեցութեան մէջ ճոխանում է, իսկ արդարը տանջուում է, մինչև իսկ երբեմն ծանր հիւանդութիւնից, կամ թշնամու սրից մեռնում է, որը հաւասար էր անաստուածների մահով մեռնելուն։ Այսպիսի դէպքերում Աստծու նախախնամութիւնն ու արդարադատութիւնը կասկածի էր ենթարկուում. կրօնի և բարոյականութեան հիմքը խախտուում էր։ ԼՁ. և ՀԲ. սաղմոսներում շօշափուած այն հարցը, թէ ինչպէս կարող է Աստծու արդարադատութիւնը թոյլ տալ, որ արդարը տանջուի, յատակապէս Յովբի գրքի քննութեան նիւթն է դարձել։ Այստեղ մէջ է բերուած Յովբ անունով մի հարուստ մարդու պատմութիւնը, որը մի օրուայ մէջ Աստծու ցանկութեամբ կորցնում է իւր ամբողջ կայքը, իւր որդիներին և ամբողջ ընտանիքը. բայց համբերատար Յովբը չի տրտնջում Աստծու դէմ, այլ միխիթարում ինքն իրեն ասելով՝ *Մ՛օրս արգանդից մերկ եմ դուրս եկել, մերկ էլ պիտի դառնամ. Աստուած տուաւ եւ*

Աստուած առաւ. թո՛ղ օրհնուած լինի նրա անունը։ Շուտով նրա վրայ գալիս են նոր դժբախտութիւններ. նա բորոտութիւն է ստանում և սարսափելի հիւանդութիւններով տանջուում. մահը միայն կփրկէր նրան այդ տանջանքից, այն էլ չէր գալիս։ Յովբի կինը համբերութիւնը կորցրած՝ խորհուրդ է տալիս իւր մարդուն՝ ձեռք քաշել բարեպաշտութիւնից, որովհետև փորձը ցոյց է տալիս, որ ճշմարիտ աստուածպաշտութիւնից անգամ օգուտ չկայ։ Համբերատար Յովբը այնուամենայնիւ հաստատուն է մնում իւր հաւատի մէջ ասելով՝ բարիք կարող ենք ընդունել Աստծուց, չարիքը ո՞չ։ Երբ Յովբի երեք բարեկամներն իմանում են նրա հետ պատահած դժբախտութեան մասին, գալիս են նրա մօտ նրան մխիթարելու. բայց տեսնելով նրա անհունվիշտը, ոչ մի մխիթարական խօսք չեն գտնում նրան ասելու, այլ եօթն օր շարունակ նրա դիմաց լուռ նստում են։ Յովբը նրանց լռութեան մէջ կարդում է իւր դատապարտութիւնը. այսինքն, որ նրանց կարծիքով, ինքը մեղաւոր պիտի լինի, որովհետև Աստուած մի արդար մարդու այդպէս ծանր պատժել և դժբախտութեան մէջ մահացնել չի կարող։ Այս բանը Յովբը տանել չկարողացաւ. իւր հարստութեան, իւր երախների և իւր առողջութեան կորուստը նա

տարել էր, բայց չկարողացաւ տանել, երբ մարդիկ նրա բարեպաշտութիւնն էին ուզում կասկածի ենթարկել։ Եւ Յովբը սիրտը կտրատող հառաչանքներով անիծում է իւր ծնունդը և բողոքում է Աստծուն, որ այսքան տանջելուց յետոյ՝ չի մահացնում իրան, որպէսզի գոնէ այս ձևով փրկուի։ Աստծու արդարադատութեան դէմ Յովբի այս տրտունջը լսելուց յետոյ՝ բարեկամներն առաջ են գալիս և դրանցից իւրաքանչիւրը երեք անգամ խօսք է վերցնում նախ մեղմ, ապա հետզհետէ աւելի խիստ արտայայտութիւններով ապացուցանելու, որ Յովքն արժանի է եղել այն պատիժներին իւր ծածկուած մեղքերի պատճառով, որոնք այժմ հանդէս են գալիս այն յանդգնութեան մէջ, որով նա Աստծու դէմ տրտնջում է։ Առաջ է գալիս մի շորրորդ բարեկամ՝ Էլիհու անունով, որն աշխատում է ցոյց տալ, որ Յովբը մեղանչել է նրանով, որ իւր վիճաբանութեան ժամանակ իւր արդարութիւնն՝ ի վնաս Աստծու արդարութեանը՝ պաշտպանել է և իրեն արդար կարծելով՝ հարկաւոր խոնարհութիւնն Աստծուն ցոյց չի տուել։ Յետոյ յայտնում է, որ Աստուած իմաստութեամբ պատժում է նաև արդարին, որպէսզի նրան ճանաչել տայ նրա ծածկուած մեղքերը, որից ազատ չէ ոչ մի մարդ։ Ի վերջոյ նը-

կարագրում է Աստծու փառահեղությունը՝ Յովբին խոնարհամտությունն ներշնչելու համար։ Այդ միջոցին մի փոթորիկ է բարձրանում. ընութեան այս հիասքանչի երևոյթի միջից Աստուած ինքն է յայտնուում և խօսում է Յովբի հետ՝ հանդէս բերելով իւր փառահեղությունը, այնպէս որ Յովբը նրա առաջ զգում է իւր խեղճ անկարողությունը. զգում է, որ իւր Աստծու դէմ վիճելը յիմարություն և անարդարություն էր։ Այս գիտակցությունից յետոյ՝ Աստուած Յովբին նորից բարձրացնում է. յետ է դարձնում նրան նրա առողջությունը, հարստությունը և նա դառնում է մի մեծ ընտանիքի տէր. ապա թէ մեռնում է մի խաղաղ և փառաւոր ծերությեան մէջ։ Այն հարցին, թէ ինչու է արդարը տանջուում, Յովբի գրքի հեղինակը պատասխանում է. Աստուած իմաստուն է. մարդն անկարող է նրա գործերը քննել և հասկանալ։ Բացի սրանից էլիհուն արդարի տանջուելու մէջ այն միտքն է գտնում, որ Աստուած սիրելով տանջում, փորձում է արդարին, նրան աւելի կատարեալ դարձնելու համար. այսպիսով չարիքը, տանջանքն ստանում են կրթական նշանակություն։

Յովբի գրքով, մենք տեսնում ենք, որ հրէական կրօնի մէջ մուտ է գործում խորհրդածությունը։ Ճաճախ մարդիկ կրօնական են

դառնում առանց անհատապէս մտածելու. միամիտ կերպով ընդունում են այն՝ ինչ որ կրօնական աւանդութիւնը նրանց սովրեցնում է։ Բայց շատերն էլ կրօնական են դառնում, երբ կատկածելով՝ ամեն բան անհատական քննութեան նիւթ են դարձնում և առաջնորդուելով իրենց բանականութեամբ՝ դէպի միաստուածութիւնն ու բարոյականութիւնն են դիմում և դրա համաձայն կարգաւորում են իրենց կեանքը։ Այս մտքերով են տոգորուած հին կտակարանի «Իմաստութիւն Սողոմոնի և Առակք Սողոմոնի» կոչուած գրքերը։ Սրանց համաձայն բոլոր գիտութիւններն առաջնորդում են մարդուն դէպի կրօնը, դէպի Աստուած։ Իմաստութիւնը սովրեցնում է լաւ կարգեր և տեղեկութիւն է տալիս տիեզերքի մասին, որից մենք մղուում ենք Արարչի գովքն անելու։ Իմաստութիւնը տեսնում է բնութեան մէջ օրինաչափութիւն և հիանում է արարածների բազմապիսութեան վրայ։ Կատարեալ իմաստունը Տիրոջ երկիւղն ունի իւր սրտում, ասում է Սողոմոնին վերագրուած առաջին առակը։ Աստուածավախութեամբ տոգորուած իմաստունը խորհրդածելով մոմսիական օրէնքի վրայ՝ նրանից իմաստուն խրատներ է դուրս բերում, որոնց բարեպաշտն իւր կեանքը պիտի յարմարեցնի։ Այս առակները, որոնք բերնէ

բերան անցնելով այս շրջանում գրի են առնուել, պարունակում են ուժեղ և առողջ սաղմեր բարեպաշտ կեանքի համար։ Իմաստութիւնը, որն ամենն տեղ իբրև Աստծուց մարդուն տրուած բարձրագոյն բարիքն է նկատուում, անվերջ գովուում է։ Իմաստութեան ընդունակութիւնն ամենքին է տրուած, բայց պէտք է զարգացնել. զարգացնողները լինում են ծնողները և ուսուցիչները։ Իմաստունը կընդունի խրատ և կգիտակցի, որ իմաստութեամբ մարդ պատուի կարժանանայ. աւելի լաւ է իմաստունի հետ. քար կրել, քան յիմարի հետ ուրախանալ։ Իմաստունն աշխատասէր կլինի և առաջ կերթայ, առանց ցուցամոլ լինելու։ Նա կաշխատի իւր բարեկամներին ձեռքից բաց չթողնել, բայց զգոյշ կլինի. շուտով երաշխաւոր չի դառնայ, բոլորին չի վստահի ժանտաւանդ կեղծաւորներին։ Իմաստունի տունը լիքը կլինի։ Տան բախտը կապուած կլինի լաւ կնոջ, լաւ ժոր ճարտարութեան հետ։ Առանձնապէս անհրաժեշտ է իմաստութիւնը թագաւորի համար. նա նրանով խորաթափանց կլինի և իրաւունք ու արդարութիւն կպաշտպանի. սխալուելիս իմաստունի խրատը կընդունի։ Երանի՜ իմաստունին, վա՜յ յիմարին. այս է առակաց գրքի կորիզը։

Այսպիսով այս շրջանի հրէական կրօնը,

ինչպէս նա հանդէս է գալիս Սաղմոսների, Յովբի և Առակաց գրքերի մէջ, ազգայնական կապերը քանդելով՝ մի կողմից անհատական և միւս կողմից հանրամարդկային է դարձել։ Բացարձակ միաստուածութեան գաղափարը հասել է իւր կատարելութեան. դրա համապատասխան բարձր բարոյական կեանք է պահանջուում. բայց դեռ ևս պակասում է այն հայեացքը, թէ Աստուած մարդկանց հանդէպ սիրող հայր է և բոլոր մարդիկ առանց ազգի, սեռի և դասակարգի խտրութեան այդ միակ երկնաւոր հօր որդիներ կարող են լինել, եթէ նրան հաւատան և միմեանց սիրեն։ Ահա այս պակասը լրացրեց քրիստոնէութիւնը։

ԺԵ. ԳԼՈՒԽ

Հրէութեան քաղաքական շարժումները Աղէքսանդր Մեծից մինչև Հերովդէս Մեծը 330—40.

Իսոսի և Արբելայի ճակատամարտերում Աղէքսանդր Մեծը կործանեց պարսից թագաւորութիւնը. Պաղեստինը նրա կազմած հսկայ պետութեան միայն մի փոքր անկիւնն էր կազմում։ Մեծ աշխարհակալի մահուանից յետոյ՝ Պաղեստինը մօտ մի դար մնաց Եգիպտոսի հետ

կապուած՝ Պտղոմեան իշխանութեան ներքոյ, որից հրէաները շատ գոհ էին. շատերը նրանցից գաղթեցին և հաստատուեցին Եգիպտոսում։ Այստեղ նրանք ենթարկուիցին յունական քաղաքակրթութեանը։ Ս. գիրքը, նախ հնգամատեանը և ապա միւս մասերն այս շրջանում թարգմանուեցին յունարէնի, որով բոլորին մատչելի դարձաւ։ Անտիոքոս Գ. Սելևկոսի ժամանակ, որը Պտղոմեաններին յաղթեց 198 թուին, հրէաները սիրով հնազանդուեցին Սելևկեաններին։ Դրութիւնը վատացաւ նրա յաջորդ Անտիոքոս Դ. Եպիֆանէսի ժամանակ (175—164)։ Երուսաղէմում հրէաներից շատերը յունականութեան էին յարել. թէև նրանք իրենց հաւատը չէին ուրացել, բայց յոյների պէս հեթանոսական կեանք էին վարում։ Անտիոքոս Դ. աթոռազուրկ արաւ քահանայապետին, որի պաշտօնը մինչ այդ ցմահ էր համարուում. դրա փոխարէն նրա Յիսուս կամ Յասոն անունով եղբօրը քահանայապետ կարգեց, որը նրան խոստացաւ հարկ տալ և Երուսաղէմում մի հեթանոսական դիմնազիոն հիմնել։ Մի ուրիշ հրէայ, ոչ քահանայական ծագումից, Մենելաւոս անունով, քահանայապետութիւնը փողով գնեց և Յասոնին հալածեց. իսկ երբ հրէաները փորձեցին այս բռնակալ, ագահ և տաճարի սպասները գողացող քահանայապե-

տին ընդդիմանալ, Անտիոքոսն անձամբ 170 թուին եկաւ Երուսաղէմ և հրէաներից շատերին անմեղ տեղ կոտորել տուեց. յետոյ տաճարը մտաւ և մնացած թանգագին սպասները վերցրեց, տարաւ։ Մի ուրիշ անգամ թագաւորի զօրքերը նորից գրաւեցին Երուսաղէմը և կողոպտեցին։ Անտիոքոսը մի հրաման հանեց, որով իւր պետութեան բոլոր ազգերը պիտի թողնէին իրենց առանձնայատկութիւնները մի ազգ դառնային։ Հրէական զոհերը և տօնները, թլպատութիւնը և մովսիսական օրէնքն արգելուեցին. դրան պիտի փոխարինէր մի հեթանոսական պաշտամունք։ Ողջակիզի սեղանի վրայ Երուսաղէմի տաճարում կանգնեցրին մի հեթանոսական սեղան՝ նուիրուած Զևսին, որի վրայ խոզեր ևս զոհուեցին։ Մահուան պատիժ կատանային այս կարգերին ընդդիմացողները։ Օրէնքի գրքերն այրուեցին. շատ մայրեր կոտորուեցին, որոնք իրենց որդոց թլպատել էին. նոյնպէս շատեր սպանուեցին պիղծ կերակուրներ չուտելուն համար։ Հրէաներից շատերը հաւատափոխ եղան, բայց մեծ մասը համբերեց այս նեղութիւններին, այն փրկութեան սպասելով, որը խոստանում էր նրանց 168 թուին առաջ եկող Դանիէլի մարգարէութիւնը (Տ. Մկբ. Ա. գիրք · Ա. Գլ.)։

Այս կրօնական հալածանքի ժամանակ Մատաթիա անունով մի քահանայ՝ Սիմոնի կամ Հասմոնիան տանից՝ իւր ամբողջ ընտանիքով փախչում է Երուսաղէմից և գալիս է Մոդիիմ կոչուած քաղաքը։ Նա ունէր հինգ որդի, որանցից երրորդը՝ Յուդան՝ Մակաբէ, այսինքն մուրճ կոչուեց և որի անունով այս գերդաստանը Մակաբէական տուն անուանուեց։ Այս քաղաքն եկաւ թագաւորի պատգամաւորներից մէկը, որն այստեղի հրէաներին ստիպում էր հեթանոս աստուածներին զոհել։ Մատաթիան հրաժարուեց այս բանն անել և սպանեց իւր այն հայրենակցին, որը մատղիր էր զոհել Զևսին։ Այնուհետև նա սպանել տուեց թագաւորի ներկայացուցչին և կործանեց հեթանոսական սեղանը. որանով ապստամբութեան ազդանշանը տրուած էր։ Մատաթիային միացան շատ հրէաներ։ Նրանց դէմ ուղարկուած զնդերը մէկը միւսի յետևից յաղթուեցին, և նրանք կարողացան Պաղեստինի հեթանոսական սեղանները կործանել։ Մատաթիան մեռաւ 166-ին. նրան յաջորդեց նրա երրորդ որդին՝ Յուդան, որը մի քանի ճակատամարտներում յաղթեց Սելևկիացոց և իւր քաջութեան պատճառով Մակաբէ՝ մուրճ կոչուեց։ 165 թուին նա մտաւ Երուսաղէմ, և դեկտեմբեր ամսին տաճարը մաքրեց հեթանոսական պաշտամունքից,

այստեղից ծագեց տաճարի օծման տօնը, որը տարուէ տարի տօնուում է։ 164-ին մեռաւ Անտիոքոսը. նրա փոքրիկ ժառանգի խնամակալութեան խնդրի շուրջը խռովութիւններ ծագեցին. այս պատճառով Սելևկիացիները հրէաներին կրօնի և ասուածպաշտութեան ազատութիւն տուին, բայց Երուսաղէմի միջնաբերդը պահեցին իրենց ձեռքը. սրանով 163-ին վերջացաւ իսկապէս կրօնական պատերազմը, որից յետոյ կռիւը տեղի էր ունենում հրէայ ժողովրդի վրայ իշխանութիւն ձեռք բերելու նպատակով։

Յուդա Մակաբէն հալածեց Սելևկիացոց նշանակած քահանայապետին և ինքը տեղը նստեց. նրան պաշտպանելու համար եկող ասորական բանակը յաղթուեց 162-ին. բայց միւս տարին ընկաւ Յուդան հերոսաբար կռուելուց յետոյ։ Բոլոր հրէաները չէին պաշտպանում Յուդային. յունասէր կուսակցութիւնը նրան հակառակում էր, բայց Յուդայի յաղթութիւնների շնորհիւ նա հետզհետէ ոչնչացաւ։ Թունդ բարեպաշտների կամ օրինապաշտների կուսակցութիւնն էլ, որը յետոյ փարիսեցի կոչուեց, բաւականանում էր հրէաներին շնորհուած կրօնական ազատութեամբ և չէր պաշտպանում Յուդային նրա քաղաքական ազատութիւն ձեռք բերելու ձգտման մէջ։

Յուդայի մահուանից յետոյ՝ ասորիները նորից սկսեցին ճնշում գործ դնել հրէաների վրայ, որով սրանք ստիպուեցին նրա եղբօր Յոնաթանին իրենց զօրագլուխ ընտրել։ Սկզբում ասորիները յաղթող էին, բայց երբ Ասորիքում գահակալական կռիւներ ծագեցին, Յոնաթանը կարողացաւ խելացի բանակցութիւններով դրութեան տէր դառնալ և քահանայապետ ընտրուել 143-ին։ Նա մինչև իսկ նշանակուեց իշխան և զօրագլուխ բայց նոյն տարին Յոնաթանը ստիպուեց խառնուել Անտիոքում ծագած նոր գահակալական կռիւների մէջ, ուր նա գերի ընկաւ և սպանուեց։

Նորա եղբայր Սիմէոնը կամ Շմաւոնը իսկոյն ժառանգեց նրա գահը և Մոդդիիմ քաղաքում իւր հօր Մատաթիայի և եղբայրների անուան մի փառաւոր յուշարձան կանգնեցրեց։ Նա ճանաչուեց ասորոց թագաւորի և հրէայ ժողովրդի կողմից իբրև հրէաների օրինաւոր քահանայապետ, զօրագլուխ և իշխան։ Սիմէոնը վերանորոգեց հռովմէացիների և սպարտացիների հետ իւր նախորդների կապած դաշինքը։ 141 թուին նա առաւ Երուսաղէմի միջնաբերդը և հալածեց այնտեղի ասորական զօրագունդը, որից յետոյ նա կարողացաւ երկար տարիներ խաղաղութեամբ իշխել։ Այս մասին կարդում ենք մակ-

Ա. գիրք. ԺԴ. 4—15։ Եմաւոնի օրով խաղաղեց երկիրը. նա շատ երկրների տիրեց. լիութիւն և առատութիւն էր թագաւորում ամեն տեղ։ Ծերերը հրապարակների վրայ նստած բարութիւնից էին խօսում, իսկ երիտասարդները զէնքի փառքով էին ճոխանում։ Քաղաքներն ամուր էին և դինուած, ամրարները լիքը։ Ամբողջ Իսրայէլը ցնծում էր։

Բայց Եմաւոնն էլ ստիպուեցաւ վերջապէս զէնք վերցնել Սելևկեանների դէմ, որոնք իրենց իշխանութիւնը նորից ուզում էին առաջուայ պէս Հրէաստանի վրայ տարածել. բայց նրանք յաղթուեցին Եմաւոնի որդու Յովհաննէսի ձեռքով։ 135 թուին Եմաւոնին իւր երկու որդիների հետ դաւաճանութեամբ սպանեց նրա փեսան՝ Հրէաստանի իշխանութիւնն իւր ձեռքը ձգելու համար, բայց Եմաւոնի միւս որդուն՝ Յովհաննէս Հիւրկանոսին յաջողուեց խուսափել դաւադիրների սրից և ժառանգել իւր հօր քահանայապետական և իշխանական աթոռը 135—105։ Սա ըսկզբում թէպէտ յաղթուեց Սելևկեաններից և կորցրեց իւր քաղաքական իշխանութիւնը, բայց յետոյ օգտուելով նրանց գահակալական կռիւներից՝ իւր իշխանութիւնն ոչ միայն նորից յետ բերեց, այլ և տարածեց դէպի հիւսիս և հարաւ. հիւսիսից Սամարիան, հարաւից Եդոմը ենթար.

կուեցին մակաբէական իշխանութեանը։ Հեթանոսական քաղաք դարձած Սամարիան և նրա մօտ գտնուած Գերազիմի տաճարը հիմնայատակ կործանուեց. բայց սամարացիներին թոյլ չտրուեց Երուսաղէմի տաճարը մուտ գործել. այն ինչ եդոմացիները բռնութեամբ ստիպուեցին ենթարկուել մովսիսական օրէնքին և ընդունուեցին հրէական համայնքի մէջ։ Դաւթի և Սողոմոնի օրերից սկսած մինչև Յովհաննէս Հիւրկանոսը՝ հրէական պետութիւնն այնքան մեծ չէր եղել ինչպէս այժմ։

Յովհաննէս Հիւրկանոսը մեռաւ 105 թուին։ Նորա գահը ժառանգեց նորա որդին Յուդա Արիստոբուլը, որը հեթանոսների հետ յարաբերութիւն ունենալիս, իրեն թագաւոր տիտղոսն էր տալիս։ Բայց սրա իշխանութիւնը երկար չտևեց։ Իւր հօր կտակի համաձայն՝ նա միայն քահանայապետ պիտի լինէր, իսկ քաղաքական իշխանութիւնը պիտի թողնէր իւր խորթ մօրը. բայց սա իւր հօր կտակը չգործադրեց. իւր խորթ մօրը բանտարկել և բանտի մէջ քաղցած թողնելով՝ սպանել տուեց։ Նա սպանել տուեց նոյնպէս իւր եղբայրներից մէկին, իսկ միւս երեք եղբայրներին բանտարկեց և այսպէս իշխեց միայն մի տարի 104—105։ Այդ մի տարուայ ընթացքում նա իւր իշխանութիւնը տարածեց նաև

Գալիլեայի վրայ, որի հեթանոս բնակիչներին հրէութիւն ընդունել տուեց։ 105 թուին մեռաւ նա անժառանգ. նրա կինը դևտական օրէնքի համաձայն ամուսնացաւ նրա Ադէքսանդր Եանէոս կամ Յոնաթան կոչուած եղբօր հետ, որով վերջինս ժառանգեց գահը. 104—78։ Սա իւր եղբայրներին ազատեց բանտից. իրեն նաև հրէաների թագաւոր յայտարարեց և պաշտպան հանդիսացաւ յունական քաղաքակրթութեանը։ Այս պատճառներով նա ընդհարուեց մոլեռանդ փարիսեցիների հետ, որոնց ազդեցութիւնը հասարակ ժողովրդի վրայ մեծ էր. այն ինչ հրէայ ազնուականները, այսպէս կոչուած սադուկեցիները, թագաւորի կողմն էին պահում։

Մի քանի անգամ արշաւելով Յորդանանի արևելեան կողմերը և դէպի արևմուտք՝ ծովափնեայ երկրները, տիրեց այդ գաւառներին և միացրեց իւր երկրին, բայց իւր երկիրն էլ շատ յաճախ թշնամիների ասպատակութեան և աւերածին ենթարկուեց։ Շատ կորստաբեր եղաւ այն հանգամանքը, որ փարիսեցիները չէին ճանաչում նրա թագաւորութիւնը, որովհետև նա Դաւթի սերնդից չէր. մինչև անգամ յառաջ եկաւ մի մեծ ժողովրդական ապստամբութիւն, ուր 50000 հրէայ կոտորուեց, բայց ուր թագաւորը յաղթող հանդիսացաւ։

Նրա մահուանից յետոյ՝ գահը ժառանգեց նորա ձեռներէց կինը՝ Ազէքսանդրա Սալոմէն, (78—69)։ Քահանայապետութիւնը յանձնեց իւր թուլամորթ որդուն՝ Հիւրկանոս Բ-ին։ 64 տարեկան էր, երբ թագուհի դարձաւ. սա ստիպուեց մեծամեծ ընծաներով հայոց Տիգրան Մեծ թագաւորի սիրտը շահել, որը մօտենալով Հրէաստանի սահմաններին՝ սպառնալից դիրք էր բռնել։

Այդ միջոցին ասորական Սելևակեան թագաւորութիւնը արդէն կործանուած էր։ Դրացի հայերը Տիգրան Մեծի առաջնորդութեամբ տիրել էին այդ երկրին 83—69, բայց Հռոմէացիք Պոմպէոսի առաջնորդութեամբ յաղթելով Պոնտոսի թագաւոր Միհրդատին և նորա դաշնակից Տիգրան Մեծին, Ասորիքը միացրին հռոմէական պետութեան 64-ին, որով նրանք սահմանակից են դառնում Հրէաստանին, ուր Արիստոբուլը՝ յաղթելով իւր Հիւրկանոս եղբօրը՝ թագաւոր և քահանայապետ էր դարձել։ Պարտուած Հիւրկանն իւր եդոմացի Անտիպատեր զօրավարի խորհրդով փախչում է Երուսաղէմից, գնում է արաբացոց Արետաս իշխանի մօտ՝ նրանից օգնութիւն խնդրելու։ Արետասն եկաւ օգնութեան և պաշարեց Արիստոբուլին Երուսաղէմում։ Սա նեղն ընկնելով՝ ստիպուեց դիմել Պոմպէոսի օգ-

նութեանը. Պոմպէոսը մի բանակի գլուխ անցած՝ մտաւ Հրէաստան. Արիստոբուլն իսկոյն Երուսաղէմ քաղաքը նրան յանձնեց. միայն միջնաբերդը յարձակմամբ առնուեց 63 թուին։ Յաղթական Պոմպէոսը, մտաւ տաճարի Սրբութիւն Սրբոցը, բայց գանձերին և սպասներին ձեռք չտուաւ. ապա Հիւրկանին քահանայապետ անուանեց։ Սամարիան անջատեց Հրէաստանից և ծովափնեայ քաղաքները ենթարկեց Հռոմին։ Հիւրկանոսն ստացաւ բուն Հրէաստանի, Գալիլէա և Պերէա գաւառների իշխանութիւնը, Հռոմէացիներին հարկ տալու պայմանով։ Սրանից յետոյ Պոմպէոսը Հռոմ վերադարձաւ՝ իւր յաղթանակը տօնելու. իւր հետ տարաւ բազմաթիւ հրէայ գերիներ, որոնք կազմեցին Հռոմի հրէական գաղութի կորիզը։ Գերիների շարքումն էր Արիստոբուլը իւր երկու որդիների և աղջիկների հետ, որոնցից անդրանիկը՝ Ալեքսանդրը փախաւ և ազատուեց, և մի գնդի գլուխ անցած՝ երևաց Հրէաստանում. հալածեց այնտեղից Հիւրկանին, բայց վերջինս հռոմէական զօրքի օգնութեամբ նորից դրութեան տէր դարձաւ։ Հռոմէացիք նրան թողին միայն քահանայապետութեան պաշտօնը, իսկ դատավարութիւնը և վարչութիւնը յանձնեցին հինգ պաշտօնեաների, որոնք փարիսեցիներից էին ընտրուում։

Հրէական ժերակոյսը, Սիւնեդրիումը, որի ձեռքին էր գտնուում մինչ այդ երկրի կառավարութիւնը, կազմալուծուած յայտարարուեց. բայց այս ժերակոյսը շուտովնորից վերակազմուեց, որի անդամները մեծ մասամբ փարիսեցիներն էին, և որին նախագահում էր քահանայապետը։ Փարիսեցիք գոհ էին այս փոփոխութիւնից. կրօնին ազատութիւն տրուեց, իսկ քաղաքական անկախութեան մասին շատ էլ չէին հոգում. նրանք մոռացել էին, որ Սելևկիացիներն էլ առաջ քաղաքական անկախութիւնը խլեցին և ապա ձեռք տուին նաև կրօնին։ Փարիսեցիների տիրապետութեամբ օրէնքի տիրապետութիւնը Հրէաստանում ապահովուած էր։

Ինչպէս յայտնի է և Հռովմում 60 թուին կազմուեց առաջին Եռապետութիւնը, իսկ եռապետներից Կրասոսին ընկաւ Արևելքը. բայց սա իւր պարթևների դէմ մղած պատերազմում սպանուեց 53 թուին։ Այս դէպքը կրկին հրէաների մէջ ծնեցրեց քաղաքական անկախութեան յոյսեր։ Հիւրկանոսի քահանայական Անտիպատերի օգնութեամբ միայն կարողացան հռովմէացիք հրէական մի ապստամբութիւն ընկճել։

Երբ 48 թուին Յուլիոս Կեսարը Պոմպէոսի դէմ իւր կռիւն սկսեց, արձակեց Արիստոբուլին և նրա որդուն՝ Ալեքսանդրին, բայց պոմ-

բէականները սրանց սպանեցին։ Կեսարը Հիւրկանի օգնականին՝ Անտիպատերին յանձնեց Հրէաստանի քաղաքական իշխանութիւնը՝ պրոկուրատորութիւնը։ Սա Կեսարից իրաւունք ստացաւ վերաշինելու Պոմպէոսի ձեռքով քանդուած Երուսաղէմի պարիսպները։ անդրանիկ որդուն յանձնեց Երուսաղէմի շրջակայքի Կառավարութիւնը, իսկ կրտսեր որդուն՝ Հերովդէսին՝ Գալիլեան, որը կարողացաւ երկրորդ եռապետներից՝ Անտոնիոսի շնորհին արժանանալ և Հրէաստանի (տետրարխ) իշխան անուանուել։

Այս միջոցին պարթևները մտան հռոմէական Ասիան. Հրէաները յոյս ունէին սրանց միջոցով ազատուել հռոմէացիների և եղոմացի երկու ատելի եղբայրների լծից։ Արիստոբուլի մի փակ կենդանի մնացած որդին Անտիգոնոսը մի գօրագնդի գլուխն անցած՝ կռուում էր Անտիպատերի երկու որդիների դէմ։ Հերովդէսի եղբայրը և Հիւրկանոսը քահանայապետն անճարացած պարթևներին անձնատուր եղան, իսկ Հերովդէսն ինքը փախաւ և ամրացաւ մեռեալ ծովի Մազադը քաղաքում։ 40 թուին պարթևներն Անտիգոնոսին յանձնեցին Հրէաստանը. սա Հիւրկանոսի ականջը կտրել տուեց, որ այլևս քահանայապետ լինել չկարողանայ։ Հերովդէսը սրա ձեռքից կարողացաւ փախչել Հռոմ՝ Անտոնիոսից օգնութիւն

խնդրելու։ Անտոնիոսը և հռոմէական սենատը յայտարարեցին Հերովդէսին Հրէաստանի թագաւոր՝ Անտիգոնոսի փոխարէն՝ 40 թուին։ Երկու կոնսուլների՝ Հոկտաւեանի և Անտոնիոսի ուղեկցութեամբ Հերովդէսը բարձրացաւ Կապիտոլի վրայ գտնուած Իւպիտերի տաճարը՝ այնտեղ զոհելու և սենատի վճիռն այդ տաճարում դնելու։ Սրանից յետոյ Անտոնիոսն ի պատիւ Հերովդէսի մի փառաւոր խնջոյք պատրաստեց իւր տանը։ Սա Հրէաստանի թագաւոր այն Հերովդէս Մեծն էր, որի կառավարութեան վերջին տարիներում աշխարհ եկաւ մեր Փրկիչը։

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

A I 16739

ԼՈՅՍ ՏԵՍ

1) Ի՞նչ է կրօնը և ի՞նչ է բարոյականութիւնը . . . . . Գ. 15 կ.

2) Սրբազան պատմութիւն Բարայէլի Դ-ր. Մ Խոստիկեան . . . . 50 »

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿՏԵՄՆԵՆ

1) Բարոյագիտութիւն. . . . . | Դ-ր Մ.

2) Ի՞նչ է Աստուածաշունչը. . . . . | Խոստիկեան

3) Բնագիտական և Կրօնական աշխարհայեացք . .

Դ-ր. Ի. Պետրոսեան.

Վաճառւում է հեղինակի մօտ David der Philosophie

D-r. M. Khostikian

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԵԿ.